ԷՋՄԻԱԾԻՆ

1980

2-Ի



ԼԷ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունիս – Յուլիս

1980

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՌ ՍՏԵՓԱՆ ՏԵՐ-ԱՅՎԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» Ա ԿԱՐԳԻ ԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՌ ՍՏԵՓԱՆ ՏԷՐ-ԱՅՎԱԶԵԱՆԻՆ,
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Թուսան, Արիզոնա, ԱՄՆ

Ողորմածութեամբն Աստուծոյ ամենակալին շէն ու պայծառ է այսօր Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածինը, Աստուածակառոյց Վէմը հայ ժողովուրդի հոգևոր և ազգային գոյատևման:

Մեզի համար անհուն մխիթարութիւն է հաստատել թէ փոքր չէ թիւը այն ազգայիններուն, որոնք իրենց բարոյական ու նիւթական լայն աջակցութիւնը կը նուիրաբերեն՝ յառաւել շինութիւն և բարեզարդում Սրբութիւն Սրբոց Էջմիածնի:

Դուք, յարգարժան Տիար, հարազատ զաւակն էք մեր ժողովուրդին, որ երկար տարիներէ ի վեր Ձեր կեանքն ու գործունէութիւնը բարձրացուցած էք հայաշունչ առաքելութեան մը մակարդակին, իբրև հաւատարիմ զաւակը Հայաստանեայց Առաքելական մեր Եկեղեցւոյ և իբրև անբասիր անձնաւորութիւն մը նուիրուած հայ ազգային ոգեկանութեան պահպանման սուրբ գործին:

Մենք ջերմ գոհունակութեամբ կը հաստատենք Ձեր ինքնաբուխ նուիրատուութիւնները, մօտ յիսուն հազար տոլլարի, ի պայծառութիւն Մայր Աթոռիս:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ու եկեղեցաշէն ծառայութիւնները,

սրտաբուխ նուիրատուութիւնները, այսու Մեր Հայրապետական կոնդակաւ Ձեզ կը պարգևատրենք Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Ա կարգի շքանշանով, մաղթելով, որ զայն կրէք բազում երկար տարիներ, քաջառողջութեամբ ու հոգեկան խաղաղութեամբ:

Թող բարին Աստուած ի կատար ածէ Ձեր բոլոր հայանուէր ազնիւ իղձերը:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10 յունուարի
1979 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԻԸ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 940

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 8-ին, կիրակի օրը, «Կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի» տոնին, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում և կատարում՝ հոգևոր ճեմարանի 1979 թվականի շնորհալի չորս շրջանավարտների՝ Վահրամ սարկավագ Տերտերյանի, Հրաչ սարկավագ Օղլուգյանի, Վաչագան սարկավագ Ավետիքյանի և Բորիս սարկավագ Մալյանի քահանայական ձեռնադրության և օծման կարգը:

Այդ օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու միաբանությունը մի անգամ ևս ապրում են հոգևոր ցնծության բերկրանքը՝ օրվա հանդիսությունների առիթով:

ԿՈՉՈՒՄ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻ

Հունիսի 7-ին, շաբաթ օրը, Ս. Գրիգոր Լուսավորչի «Ելն ի վիրապէն» տոնի երեկոյան, ժամերգությունից հետո, կատարվում է չորս նորընծաների «Կոչումն քահանայութեան» արարողությունը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Նորընծաների կոչման կարգը կատարում է Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը՝ խարտավիլակությամբ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանի. «Նստի եպիսկոպոսն յԱթոռ առաջի բեմին ի դասն և առնէ զկոչումն»...

Հնչում է տաճարում «Նայեաց ի մեզ» շարականը:

Բացվում են տաճարի ավանդատան դռները և բուրվառով և մոմերով դեպի Իջման սուրբ սեղան են առաջնորդվում նորընծաները:

Խարտավիլակ վարդապետը, խոսելու հրաման ստանալով, բարձր ձայնով ասում է.

«Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր Սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես (զայս անուն) սարկաւագունս՝ զոր ընծայէ քեզ՝ յաստիճան քահանայութեան, որք կամօք և յօժարութեամբ իւրեանց եկեալ են յայս կարգ, և ոչ ի հարկէ հրաւիրողաց»:

Այնուհետև հրապարակայնորեն քննվում է նորընծաների հոգևոր-իմացական պատրաստությունը. «Պահեա՞լ է զանձն իւր սուրբ և անարատ... ունի՞ զուսումն քահանայութեան լրիվ և զգիտութիւն աստուածային օրինաց»:

Խարտավիլակ վարդապետը պատասխանում է դրականապես այս հարցերին: Նորընծաները ապա խոստանում են «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա»:

Հրապարակային այս քննությունից հետո նորընծաները հանդիսավոր հայտարարու-

թյամբ հանձն են առնում «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ Հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց» (Նիկիայի 325 թ., Կ. Պոլսի 381 թ. և Եփեսոսի 431 թ.) և խոստանում են աշակերտել և հետևել Եկեղեցու ուղղափառ և աստվածաբան հայրապետներին և վարդապետներին:

Փրկչի Իշման սուրբ սեղանի առաջ **խոստանում եմ և ուխտ եմ անում՝**

ա) Հավատով և ճշիրտմով ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և հայ ժողովրդին:

բ) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան մնալ մինչև իմ կյանքի վախճանը, սրբությամբ պահելով ժուժկալության, աղքատության և **անպայմանավոր հնազանդության** հայրապետահաստատ կանոնները:

գ) Ապրել առաքինի կյանքով ու պարկեշտ վարքով, անձանձրույթ կատարել եկեղեցական պաշտամունքները և տևապես հետամուտ լինել իմ ինքնազարգացման՝ հոգևոր, գիտական և գրական իմաստով:

դ) Համաձայն Հայոց Հայրապետի հրամանների, ինձ վստահված պաշտոնները և աշխատանքները կատարել սիրով, եռանդով ու բարեխղճությամբ:

Որպես երաշխավորություն իմ այս **խոստումների, ստորագրում եմ սույն ուխտագիրը»:**

Մի պահ ձեռնադրության արարողությունից

Կոչման արարողության ավարտին նորընծաները դարձյալ հրապարակայնորեն և ինքնավստահ շեշտով տալիս են իրենց «Հաւատոյ խոստովանութիւն»-ը՝ ըստ Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևին («Մաշտոց Ձեռնադրութեան», Վաղարշապատ, 1876, էջ 36—37): Նորընծաները մի օր առաջ պաշտոնապես ստորագրել էին կուսակրոն քահանայության հետևյալ ուխտագիրը.

«Ներքոստորագրյալս՝ Աստուծո ողորմությամբ, իմ ազատ կամքով և հաստատ համոզմամբ հանձն եմ առնում ընդունել **կուսակրոն քահանայության կարգը:**

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանում զգեստավորված, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ ս. պատարագ մատուցելու և կատարելու չորս նորընծաների ձեռնադրության և օծման կարգը:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքը:

Ապա Վեհափառ Հայրապետը Ավագ սեղանի աջ կողմում բազմում է Աթոռի վրա, մինչ նորընծաները, խարտավիլակ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, սեղանի ձախակողմյան աստիճաններով ծնրադիր բարձրանում են Ավագ սեղանի բեմ և բոլորվում ձեռնադրիչ Հայոց Հայրապետի շուրջ:

Տաճարում հնչում է «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» շարականը, նորընծաները առաջանում են դարձյալ ծնրադիր «ի միջավայր բեմին» և դառնում են խուռներամ հավատացյալներին և բարձրացնում իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման, մինչ վեհ և հանդիսավոր հնչում է կոչման գեղեցիկ շարականը՝ «Աստուածային և երկնաւոր շնորհ որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական Եկեղեցւոյ... կոչէ (այս անուն) ի սարկաւագութենէ ի քահանայութիւն»: Նույն պահին ժողովուրդը հոգեպես միաձուլվելով արարողությանը, համոզումով և գոհունակ տրամադրությամբ վկայում է. «Արժանի են»:

Ապա նորընծաները ծնրադիր շրջվում են դեպի Ավագ խորան, շրջապատում Հայրապետին, որը ընթերցելուց հետո ձեռնադրության մեծ աղոթքը, խաչաձև «դնէ զաջն ի վերայ գլխոյն նուիրելոյ և ասէ. ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Աղոթքի ընթերցումից հետո Հայրապետը «ինքն ձեռամբն բերէ զուրար զպարանոցաւն ի ձախմէ ի յաջ» և օրհնությամբ «արկանէ զփիլոնն զուսով նուիրելոյն, և զշուրջառն, զբազպանն և զգօտին, զսաղաւարտն և զայլ քահանայական զգեստ»:

Ավագ խորանի վարագույրը մի պահ փակվում է: Նորընծաները «Խորհուրդ խորին» տաղի երգեցողության պահին զգեստավորվում են: Բացվում է Ավագ խորանը:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը:

Ձեռնադրության հանդիսավոր արարողությունը հասնում է իր հոգևոր գագաթնակետին:

Օծման խորհրդավոր պահն է: Ձեռնադրիչ Հայրապետի դիմաց քահանայական լրիվ զգեստավորման մեջ, ավագության կարգով, կանգնել են նորընծաները, մինչ Հայոց Հայրապետը նույն պահին մեկ առ մեկ օծում է սրբալույս մեռոնով ճակատն ու ձեռքերը նորընծաների և նրանց վերանվանում հոգևորականի նոր անուններով:

Այսպես՝ Վահրամ սարկավագ Տերտերյանը վերանվանվում է Տ. Հովնան քահանա, Հրաչ սարկավագ Օղլուգյանը՝ Տ. Աբել քահանա, Վաչագան սարկավագ Ավետիքյանը՝ Տ. Զատիկ քահանա, և Բորիս սարկավագ Մալյանը՝ Տ. Պետրոս քահանա:

Օծման արարողությունից հետո նորընծաները Հայոց Հայրապետի ձեռամբ ստանում են «զսկիհն և զմաղզմայն հանդերձ կենարար Մարմնով և Արեամբ, վասն կենդանեաց և ննջեցելոց» սուրբ պատարագ մատուցելու իշխանության որպես նշանակ, և դառնալով դեպի ժողովուրդը՝ տալիս են իրենց անդրանիկ քահանայական օրհնությունն ու խաղաղությունը:

Հայոց Հայրապետը ձեռնադրության և օծման սույն արարողությունից հետո խոսում է հետևյալ ոգեշունչ քարոզը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկե տոնի և օրվա ձեռնադրության խորհրդի հոգևոր նշանակության մասին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐՏԱՃԱՌՈՒՄ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ
(8 հունիսի 1980 թ.)

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Էջ Միածինն ի Հօրէ աւետեղ զօրութեամբ»:

Սիրելի հավատացյալներ:

Այսօր մեր Եկեղեցու մեծագույն տոներից մեկն է, որովհետև մենք ոգեկոչում ենք հիշատակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրության: Այս տաճարը հիմնադրվել է 301 թվականին, ավարտվել 303 թվականին և օծվել Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ,

Տրդատ թագավորի և բազմահազար հայ ուխտավորների ներկայության:

Այդ թվականից անցել են 1677 տարիներ:

Դարերի ընթացքում մեր հոգևորականները և աշխարհական ներշնչված մարդիկ փառաբանել են և գովերգել Ս. Էջմիածինը: Այդ փառաբանական խոսքերից մեկն է հանդիսանում այն, որով Մենք Մեր քարոզը սկսեցինք՝ «Էջ Միածինն ի Հօրէ աւետեաց զօրութեամբ»:

Խոսքը վերաբերվում է այն սքանչելի ավանդության, ըստ որի Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մեջ, 301 թվականին, երկինքը բացվեց և լուսեղեն կերպարանքի ներքո իջավ Ինքը Որդին Աստուծո՝ Հիսուս Քրիստոս՝ ձեռքին բռնած մի ոսկեղեն մուրճ: Իջավ Նա Արարատյան դաշտ և ցույց տվեց այն տեղը, ուր պետք է կառուցվեր առաջին հայկական քրիստոնեական եկեղեցին: Սուրբ Գրիգոր երբ արթնացավ այդ տեսիլքից, հասկացավ իմաստը նրա և թագավորի օգնությամբ վարպետներ հրավիրելով կառուցեցին այս եկեղեցին, գրեթե ճիշտ այնպես, ինչպես այն ուրվագծվել էր Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մեջ: Եվ միջնադարյան հեղինակը գովերգում է՝ «Էջ Միածինն ի Հօրէ աւետեաց զօրութեամբ», այսինքն Ինքը Հիսուս Քրիստոս, Որդին Աստուծո, իջավ երկնից աւետեաց զորությամբ:

Այս **աւետեաց զորությունն** բացատրությունը անշուշտ պետք չէ հասկանալ նյութական զորության իմաստով: Հիսուս չիջավ զինու զորությամբ, սուրը կամ նիզակը ձեռքին, ոչ էլ հարստություն իջեցրեց երկնքից Հայաստան աշխարհ, բայց Նա երկնքից իջեցրեց ավելի հզոր մի ուժ, դա հոգու ուժն էր, կամ ոգեկան ուժը: Քրիստոնեական հավատքը ամեն բանից առաջ և ամեն բանից վեր ոգեկան ուժ է և բարոյական արժեք: Նյութեղեն լույսի կերպարանքի տակ Հիսուս իջեցրեց Հայաստան աշխարհ ոգու լույսը, ոգու ուժը, կրոնական բացատրությամբ՝ Ս. Հոգու շնորհները: Հիսուս իջավ Հայաստան, բայց այդ տևեց մի ակնթարթ, բայց նա թողեց այն, ինչ որ բերել էր, թողեց հայ ժողովրդին ոգեղեն լույսը, լույսի փառքը: Եվ այդ պահից մեր ժողովրդի հոգու մեջ թափանցեց այդ ոգեղեն ուժը, այդ աստվածային շունչը, որով Նա կազմավորվեց իբրև ազգություն, ստեղծեց իր մշակույթը, դարձավ մշակութային ազգություն, տառերի գյուտով, Ս. Գրքի թարգմանությամբ, գրականության ստեղծումով:

Մենք երբ ոգեկոչում ենք Ս. Էջմիածնի հիմնադրությունը, նախ ոգևորվում ենք, որ այս սուրբ տաճարը, մոտ 1700 տարիներն ի վեր կա և կմնա կանգուն և պայծառ և բարեկարգ վիճակի մեջ այսօր: Այս տաճարը մեր ազգի փառքն ու պատիվն է, որով կարող ենք պարծենալ համայն աշխարհի առաջ:

Բայց այսքանը քիչ պիտի լիներ ոգեկոչելու համար Ս. Էջմիածնի հիմնադրությունը:

Այս պահուն պետք է նաև ընդգծենք այն, ինչ որ մեր ազգը ստացավ ու զարգացրեց Ս. Հոգու զորությամբ: Այդ ոգեղեն ուժով պատվաստվեց հայ ազգի հոգին և նա վերածնվեց և դարձավ պատմության բեմի վրա մշակույթ ստեղծող ժողովուրդ:

Սիրելի հավատացյալներ, մենք հավատում ենք այդ աւետեաց զորության, այդ ոգեկան ուժին, հավատում ենք, որ աշխարհում բոլոր տեսակի նյութական ուժերից ավելի հզոր է ոգեկան ուժը մարդկային աշխարհում:

Այսօր արարողությունը, որ կատարեցինք, ձեռնադրման և օծման այս արարողությունը ուրիշ բան չէ, եթե ոչ ոգեկոչումը նույն Ս. Հոգու զորության: Մեր բոլոր աղոթքները, որոնք կարդացվեցին, աղերս ու մաղթանք են հանդիսանում, որպեսզի մեր այս չորս երիտասարդները, որ քահանա ձեռնադրվեցին, ընդունեն այդ Ս. Հոգու զորությունը իրենց մտքի և հոգու մեջ, որ Ս. Հոգին իջնի նրանց վրա, թափանցի նրանց էության մեջ և նրանք Ս. Հոգու ներշնչմամբ դառնան վերածնված մարդիկ, մտքով և հոգով պատրաստ՝ նվիրվելու մի գաղափարական կյանքի, ծառայելու մեր հավատացյալ ժողովրդին, մխիթարելու նրան, նվիրվելու մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որպեսզի ապագային նրանք էլ իրենց աշխատանքի բաժինը բերեն՝ հառավել պայծառացում մեր Եկեղեցու և Մայր Աթոռի:

Այս ոգով է, որ, սիրելի նորապսակ երիտասարդներ, Մենք մեր ձեռքը ձեր վրա դրեցինք, օրհնեցինք ձեզ և ձեռնադրեցինք քահանա:

Մաղթում ենք ձեզ հոգեկան մշտատև կորով և անսասան հավատք, որպեսզի Ս. Հոգու շնորհները, զոր ընդունեցիք դուք այսօր Մեր ձեռնադրությամբ, պահեք, պահպանեք, աճեցնեք և ծաղկեցնեք, և ձեր կյանքի կենդանի գործերով ապացույցը տաք, որ մշակներ եք «առանց ամօթոյ» և գաղափարական նվիրումով միշտ պատրաստ եք ծառայելու մեր ազգին և մեր հայրենիքին:

Թող Տերը միշտ լինի ձեզ օգնական և պահապան այժմ և հավիտյանս:

«Ողջ լերուք զօրացեալ և արի Հոգւով»: Ամեն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՂՈԹՔԸ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՕՐՎԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ժամը 15-ին միաբանական սեղանատանը ճաշկերույթ է տրվում օրվա հանդիսությունների առիթով:

Ճաշկերույթին ներկա են լինում Տ. Սիոն, Տ. Կոմիտաս, Տ. Հուսիկ, Տ. Արսեն սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսներ և այլ հյուրեր:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը շնորհավորում է Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի տոնի առիթով՝ մաղթելով երկար և երջանիկ գահակալություն՝ ի հաստատություն և ի պայծառություն Ս. Էջմիածնի, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու:

Տ. Սիոն սրբազանը շնորհավորում է նաև նորընծաներին, նրանց հոգևոր ապագա ծառայության ճանապարհին, որպեսզի նը-րանք լինեն արժանավոր և հավատարիմ միաբանները Մայր Աթոռի, պարտաճանաչ և նվիրյալ սպասավորները Հայ Եկեղեցու և դառնան «մշակք առանց ամօթոյ» Տիրոջ այգեստանի ծառայության մեջ:

Այնուհետև Հայոց Հայրապետին ուղղյալ որդիական երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսք են ասում նորընծա չորս քահանա հայրերը, շեշտելով որ «զԱստուած փնտրելու ճանապարհին, իրենք էլ գտան Սուրբ Էջմիածինը» և Հայ Եկեղեցու մեծ վարդապետների բացած աստվածգիտության և հայրենասիրության լուսաշավիղ ճանապարհով, անսայթաքորեն պիտի քայլեն մինչև իրենց երկրավոր կյանքի վախճանը:

Հանուն հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, շնորհավորանքի հետևյալ ջերմ խոսքն է ասում վաստակավոր դասախոս Արթուն Հատիտյանը.

«Վեհափառ Տեր,

Այսօր բացառիկ օր է, ուրախության, հոգևոր մխիթարության օր: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողները մի անգամ ևս ապրեցին հոգևոր ցնծության բերկրանքը, օրվա երկու հանդիսությունների առիթով:

Քիչ առաջ Մայր տաճարում, նորընծաների ձեռնադրության և օծման առիթով, երկու մտածումների և պատկերների տպավորության ներքո էի: Հիշում էի վեց-յոթ տարիներ առաջ, այն օրերը, երբ այսօրվա նորընծաները առաջին անգամ ոտք դրեցին հոգևոր ճեմարանի սեմից ներս:

Ի՜նչ շուտ անցան ուսումնառության այդ տարիները: Նրանք ճեմարան եկան ծվեն-ծվեն հոգիներով, բոբիկ իմացականությամբ, ընտանեկան տարբեր դաստիարակությամբ և հոգեբանությամբ, միաժամանակ հավատքով ու հաստատ համոզմունքներով իրենց ապագայի մասին:

Ուսումնառության այդ տարիներին Մայր Աթոռի այս խաղաղ ու վանական մթնոլորտի մեջ նրանք հոգով հասունացած, իմացապես պատրաստված, ֆիզիկապես էլ մեծացած, դարձան ըստ սաղմոսերգուի գեղեցիկ արտահայտության՝ «Ձիթենի պտղալից ի գաւիթս Աստուծոյ»:

Ուխտի օր էր այսօրը նրանց համար: Նրանք խոստացան իրենց ազատ կամքով և հաստատ համոզմունքներով իրենց անձը, կյանքը որպես պատարագ անմնացորդ ընծայելու Աստծու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սեղանին:

Դա չափազանց լուրջ և պատասխանատու հանձնառություն էր:

Դո՛ւք, սիրելի նորընծաներ, այսօր բարձրացաք ձեր կյանքի պայծառակերպության թաբոր լեռը. «Բարւոք է մեզ աստ լինել»: Լույսի և սրբության այդ բարձունքի՛ց պիտի նայեք այս աշխարհին և կյանքին: Ո՛չ աջ նայեցեք և ո՛չ ձախ, այլ միշտ առա՛ջ, միշտ դեպի վե՛ր, սա՛րն ի վեր: Աստված պիտի խոսի ձեզ հետ այդ բարձունքի վրա, և դուք ձեր կյանքի ճանապարհին պիտի զգաք միշտ աստվածային այդ ներկայությունն ու Ձայնը: Առանց այդ ներկայության, դուք ոչինչ կարող եք կատարել ձեր առաքելության մեջ:

Ձեր մտատիպարը, ձեր հարացույցը, ձեր գաղափարականը պիտի լինի աստվածային մեծ վարդապետը՝ Հիսուս և Մայր Աթոռի մեջ Ամենայն Հայոց Հայրապետը՝ «Զօրագլուխն առաքինեաց»: Եթե դուք այս սրբազան և համազգային դարավոր հաստատության հարազատ զավակներն եք, պիտի լինեք այն, ինչ Հայոց Հայրապետն է ցանկանում, այսինքն ազնիվ, բարի, հավատավոր, ծառայասեր հոգևորականներ:

«Որդի հարազատ զնմանութիւն հօրն բերէ»:

Կարդացի ձեր կուսակրոն քահանայության ուխտագիրը. Շատ գեղեցիկ էր այն և բովանդակալից: Խոստանում եք ձեր կյանքի մինչև վախճանը Մայր Աթոռի միաբան լինել, «սրբությամբ պահել ժուժկալության, աղքատության և անպայմանավոր հնազանդության հայրապետահաստատ կանոնները, ապրել առաքինի կյանքով ու պարկեշտ վարքով, անձանձրույթ կատարել եկեղեցական պաշտամունքները»:

Ուխտագրի այդ գեղեցիկ և պարտավորեցնող խոսքերը դուք կյանքի պիտի կոչեք ձեր ամենօրյա աշխատանքի, ձեր վանական մտածումների և ապրումների մեջ:

Հիշեցե՛ք միշտ Ս. Գրիգոր Նազիանզացու «Փախուստ ի Պոնտոս» ճառի խոսքերը, որոնք ուղղված են երիտասարդ քահանաների, այդ թվում նաև ձեզ: «Ճանապարհ պետք չէ ելնենք ուրիշները բուժելու, երբ մենք ինքներս լի ենք վերքերով: Հարկ է նախ մաքրվել և ապա մաքրել, նախ սովորել և ապա սովորեցնել, լույս դառնալ և ապա լուսավորել, մոտենալ Աստծուն և ապա մոտեցնել ուրիշներին, սրբանալ և ապա սրբացնել»:

Հովվական աստվածաբանության ձեր դասերի ժամանակ դուք հանգամանորեն սերտեցիք նաև Վեհափառ Հայրապետի 1957 թվականի հունվար 14-ին համայն հայ հոգևորականության ուղղած կոնդակ-կոչը, որը մի նոր երգ երգոց է մեր օրերի հայ հոգևորականության կյանքին և գործունեության նվիրված.

«Ի՜նչ վսեմ է և ի՜նչ գեղեցիկ՝ հոգևոր կոչումը քահանայական... Դուք աստվածային սիրո գործիքներ եք ձեր հավատացյալներու ծոցին մեջ, ուսուցանող եք և դաստիարակ, սրբացնող և մխիթարող... Իշխանության ծարավը պետք է հագեցնեք ծառայելով: Եկեղեցիին մեջ իշխել կնշանակե՝ ծառայել ... Ի՜նչ ունայնություն հոգևորականի մը համար դրամ սիրել և ձգտել հարստություն դիզելու, երբեմն նույնիսկ տգեղ և ապօրեն միջոցներով: Ինչքա՜ն աղքատություն, ինչքա՜ն խեղճություն կա այդպիսի հարստության մեջ»:

Մյուս կողմից՝ ինչքա՜ն «բարոյական գեղեցկություն» կա Ս. Գրիգոր Նազիանզացու և Հայոց Հայրապետի արտահայտած «այս մտածումներուն, այս ապրումներուն մեջ և ինչպիսի՜ վսեմ հերոսական ըմբռնում քրիստոնեական հոգևոր առաքելության», ինչպես հաստատում է Վեհափառ Հայրապետը:

Սիրելի՛ նորընծաներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ, հավատում եմ ձեզ, հավատում՝ ձեր երիտասարդության: Երիտասարդությունը կարելիությունն է անկարելիին և դուք երիտասարդներ եք: Հավատում եմ ձեր այս գիտակից ու կամավոր պատարագին, ձեր նահատակությանը, ձեր «սրբազան այս խենթության», որով «աշխարհ վասն ձեր ի խաչ ելեալ է և դուք աշխարհի»:

Մաղթում եմ, որ երբեք և երբեք տխրության առիթներ չտաք Վեհափառ Հայրապետին, որպեսզի Նա այսօրը միշտ ուրախությամբ հիշի: Եղե՛ք Նրա սրտի մխիթարությունը, Նրա հպարտությունը և արդարացրեք Նրա հայրապետական բարձր վստահությունն ու սերը: Նա ձեզնո՛վ է ապրում, Մայր Աթոռի երիտասարդ միաբաններով և չունի անձնական կյանք:

Ապրե՛ք, սիրելի տղաք, շատ ապրե՛ք»:

Ճաշկերույթը եզրափակեց Վեհափառ Հայրապետը կրկին անգամ Իր օրհնությամբ և շնորհավորանքի իմաստալից խոսքերով:

«Ամեն նոր հունձք որ ստանում ենք մի նոր ձեռնադրությամբ, մեզ համար անշուշտ և՛ ուրախալի է, և՛ նշանակալից, և՛ անմոռանալի:

Մենք տարեցներս մի գերագույն մխիթարություն ունենք, որ երբ մենք մի օր այլևս չլինենք այստեղ, մեր Եկեղեցին և Մայր Աթոռը ո՛չ միայն անտեր պիտի չմընան, այլև է՛լ ավելի ծաղկյալ վիճակի մեջ կլինեն:

Մենք մեր կյանքը նվիրել ենք այս հաստատության, այս գաղափարականին: Հավատում ենք այս չորս երիտասարդներին, որոնք գալիս են մեր գործը շարունակելու այստեղ, մեզնից հետո: Հավատում ենք նրանց ուժերին: Վստահ ենք, որ նրանք ամուր և հաստատ պիտի մնան իրենց ուխտի և խոստումների վրա և իրենց կենդանի գործերով պիտի ապացուցեն, որ արժանի են մեր գնահատանքին, մեր սիրո և օրհնության:

Սիրելինե՛ր, մաղթում ենք ձեզ հոգու և մարմնի կատարյալ առողջություն: Թող Աստծո օրհնությունը անպակաս լինի ձեր հոգիների վրայից:

Ձեզ բարի ճանապա՜րհ, լայն իմաստով»:

Ճաշկերույթն ավարտվում է խմբովին, թիվ ասված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում են «օրհնութիւն աբեղայի» և «օրհնութիւն վեղարի» կարգերը:

Աստվածաշնչական համապատասխան ընթերցումներից, շարականներից և աղոթքներից հետո Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ սրբազանը հանում է նորընծա Տ. Հովնան, Տ. Աբել և Տ. Զատիկ քահանաների գլուխներից սարկավագական ջբրունը (գդակ) և այն փոխարինում՝ կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով. «Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք: Եւ ապա զգեցուցանէ զվեղարն և ասէ. Աստուած զգեցուցէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստծոյ հաստատել է արդարութեամբ և օրհնութեամբ»:

«Պահպանիչ»-ով ավարտվում է վեղարի տվչության սույն կարգը, որից հետո նոր-

ընծա Տ. Հովնան, Տ. Աբել, Տ. Զատիկ աբեղաները Տ. Հուսիկ սրբազանի առաջնորդությամբ ներկայանում են Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբությունը հուզումով և հայրական սիրով ընդունում է Իր հոգևոր զավակներին, նրանց բաշխում Իր օրհնություններն ու բարեմաղթությունները՝ ցանկանալով, որ նրանք արժանավոր միաբանները լինեն Մայր Աթոռին և Տիրոջ այգու ծառայության մեջ՝ ի մխիթարություն Իր հայրական սրտի և հուրախություն հայ ժողովրդի:

Հուզիչ էր պահը, երբ երեք երիտասարդ հոգիներ մի անգամ ևս ծունկի են գալիս Հայոց Հայրապետի առաջ՝ իրենց սրտի և հոգու ուխտը կատարելու՝ նվիրվելու համար Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի հոգևոր ծառայության սուրբ գործին:

Նորընծա աբեղաները իրենց կանոնական-ավանդական քառասունքը կանցկացնեն Մայր Աթոռի վանական և խաղաղ մթնոլորտում:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա աբեղաներին և սրտագին բարեմաղթում, որ նրանք հավատավոր, անձնուրաց միաբանները լինեն Մայր Աթոռին և շնորհալի սպասավորներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Հույս ունենք, որ նորընծաները գալիք տարիներին, ավելի մեծ փորձ ձեռք բերած, պիտի կարողանան լինել արժանի զավակները այս մեծ ու նվիրական Հաստատության: Այդ հույսը ուրախությամբ է լցնում մեր սրտերը:

Մեր նախնիների սուրբ և պայծառ տեսիլքը շարունակվում է այս սուրբ Հաստատության «Անձինք նուիրեալք»-ների երիտասարդ ու խոստումնալից փաղանգի մեջ:

Տ. ՀՈՎՆԱՆ ԱԲԵՂԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1957 թ. Բեյրութում (Լիբանան): Ավազանի անունը եղել է Վահրամ: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի «Քառասնից մանկանց» վարժարանում:

1970—75 թթ. սովորել է Անթիլիասի դպրեվանքում և ավարտել Ժառանգավորաց վարժարանի հնգամյա շրջանը:

1976 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի լսարանական բաժինը ավարտել է 1979 թ. մայիսին: Ավարտաճառի թեման եղել է «Վրթանես Քերթող», որը պաշտպանել է 1980 թ. ապրիլի 22-ին:

1978 թ. մայիսի 27-ին ձեռնադրվել է սարկավագ:

1980 թ. հունիսի 8-ին, Ս. Էջմիածնի կաթուղիկեի տոնին, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի:

Տ. ԱԲԵԼ ԱԲԵՂԱ ՕՂԼՈՒԳՅԱՆ

Ծնվել է 1959 թ. դեկտեմբերին Բեյրութում (Լիբանան): Ավազանի անունը եղել է Հրաչ:

Նախնական կրթությունը ստացել է ծնընդավայրի Սահակ-Մեսրոպյան ազգային վարժարանում:

1973 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և այն ավարտել 1979 թ. մայիսին:

1978 թ. մայիսի 27-ին Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

Հոգևոր ճեմարանը ավարտելիս Տ. Աբել աբեղայի դիպլոմային աշխատանքի թեման է եղել «Քրիստոսաբանությունը հարության շարականներում»:

1980 թ. ապրիլի 23-ին, հոգևոր ճեմարանում կայացած հանդիսության ժամանակ, Տ. Աբել աբղ. Օղլուգյանը հանդես է եկել իր վերոհիշյալ ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ:

1980 թ. հունիսի 8-ին, Ս. Էջմիածնի կաթուղիկեի տոնին, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:



Տ. ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ



Ծնվել է 1957 թ. օգոստոսի 7-ին Երևանում: Ավազանի անունը եղել է Վաչագան:

1974 թվականին ավարտել է Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան ու այն ավարտել 1979 թվականի մայիսին:

1978 թ. մայիսի 27-ին Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

Հոգևոր ճեմարանը ավարտելիս Տ. Ջատիկ աբեղա Ավետիքյանի դիպլոմային աշխատանքի թեման է եղել «Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն և նրա նորագյուտ հատվածները»:

1980 թվականի ապրիլի 23-ին, հոգևոր ճեմարանում կայացած հանդիսության ժամանակ, Տ. Ջատիկ աբղ. Ավետիքյանը հանդես է եկել իր վերոհիշյալ ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ:

1980 թ. հունիսի 8-ին, Ս. Էջմիածնի կաթուղիկեի տոնին, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Տ. Ջատիկ աբեղան այժմ աշխատանքի է անցել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

Տ. ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱԼՅԱՆ

Ծնվել է 1954 թ. փետրվարի 1-ին Երևանում: Ավազանի անունը եղել է Բորիս:

1970 թ. ավարտել է Երևանի Ռաֆֆու անվան միջնակարգ դպրոցը:

1976 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1980 թ. հունիսին:

1979 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:

1980 թ. հունիսի 8-ին, Ս. Էջմիածնի կաթուղիկեի տոնին, ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

Տ. Պետրոս քհն. Մալյանը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նշանակվել է Ս. Գեղարդա վանքի ծիսակատար քահանա:



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 13-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց սրահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում հոգևոր ճեմարանի 1979—1980 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Արսեն, Տ. Գևորգ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսությունը սկսվում է Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով, որից անմիջապես հետո հնչում է Հայկական ՍՍՀ պետական հիմնը:

«Ճեմարանի քայլերգ» խմբերգի կատարումից հետո, հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը: Տեսուչ հայր սուրբը ամավերջի որոշ խորհրդածություններ կատարելուց հետո, մեկ անգամ ևս հաստատելով հոգևոր ճեմարանի երկարամյա օգտակար գործունեությունը և դերը Մայր Աթոռի ու Հայ Եկեղեցու կյանքում, հատկապես նշում է այն պարագան, որ Վեհափառ Հայրապետի գահակալության քսանհինգ տարիների ընթացքում հոգևոր ճեմարանի տված հունձը եղել է առատ և բարի:

Տեսուչ վարդապետը իր խոսքի վերջում հորդոր է ուղղում ուսանողներին և ասում. «Սիրելի սաներ, ուր էլ որ լինեք, միշտ վեհ ու բարձր պահեք հոգևոր ճեմարանի պատիվը: Եվ այն կայծը, որ դուք ստացաք ձեր հոգիներից ներս հոգևոր ճեմարանում, շարունակի այն տևականանալ»:

Բացման խոսքից հետո հոգևոր ճեմարանի ուսանողները կատարում են «Էջ Միածինն ի Հօրէ» և «Աշակերտք Քրիստոսի» շարական-խմբերգերը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի Գ լսարանի ուսանող Հայկ սրկ. Չիլինգարյանը, ի դեմս ուսանողության, կարդում է հետևյալ ուղերձը.

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ԽՈՍՔ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Վեհափառ Տեր,

Քանի տարիներից ի վեր գեղեցիկ ավանդույթ է դարձել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի հնամյա և աղոթամատույց կամարների ներքո՝ սույն

սրբազան Հաստատության ուսումնական տարեշրջանի բացման և ամավերջի փակման հանդիսությունների կատարումը:

Այսօր կրկին բոլորս ի մի ենք հավաքվել ամավերջի հանդեսի առթիվ՝ վերհիշելու անցնող ուսումնական տարվա մեր աշխատանքները—արժանիները գնահատելու, իսկ թերությունները՝ ճանաչելու և ուղղելու մտադրությամբ:

Ի՞նչ տվեց մեզ՝ ուսանողներիս անցնող ուսումնական տարին: Եթե ասենք՝ միայն ուսում, գիտելիքների որոշակի պաշար կամ կենսափորձ, դա քիչ է: Ավելին արժե այս կամարներից ներս գոյություն ունեցող ջերմ ու հարազատ ճեմարանի ուսանողական մթնոլորտը և այն վայելելու հաճույքն ու երջանկությունը, որը վերապահված է միայն մեզ՝ ուսանողներիս, և որը անկրկնելի է կյանքում որևէ անգամ և սահմանված է մինչև ճեմարանում մեր ուսման ավարտը:

Այժմ, երբ մենք հատել ենք ուսումնական շրջանի վերջնագիծը, նախանձով ենք նայում ետ՝ մեր անցած, հուզումնալի ապրումներով լի, բախտավոր ճանապարհին և բարի նախանձով նայում ենք ետ ճեմարանի այն ուսանողությանը, որը պետք է դեռ սովորի, ապրի և վայելի այդ անուշ կյանքը:

Դեռ երեկ էր կարծես, երբ մենք՝ տակավին հում և խմորուն երիտասարդներ, եկանք այս գիտության դարբնոցը, բայց այսօր այստեղից մեկնում ենք քիչ թե շատ իբրև գիտության օջախում կոփված պողպատ:

Մեզ՝ շրջանավարտներիս համար առաջին հայացքից թվում է, թե ավարտելով ճեմարանը՝ ամեն ինչ վերջացավ, և դժվարությունները ետևում մնացին: Մինչ իրականության մեջ կանգնել ենք կյանքի սեմին, և իսկական դժվարությունները հենց առջևում են: Մի պահ է այս, որը գուցե կարևորագույնն է մեր կյանքում:

Ճեմարանում սովորելու տարիներին տեսիլք ունեցող և հայրենանվեր դասախոսների շնչին տակ հասունացել ենք, պատրաստվել: Ճեմարանական ուսումնառության տարիները, մանավանդ, հոգևոր պատրաստության շրջան էր մեզ համար, որպեսզի կյանքում պատրաստ լինենք մեր կյանքը պատարագելու հանուն մեր նախնյաց հավատի, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հանուն հայ ժողովրդի հոգևոր ծառայության:

Այս հանդիսավոր պահին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողության անունից ջերմագին շնորհակալություն եմ հայտնում բոլո՜ր-բոլո՜ր նրանց, ովքեր նպաստել են մեր հոգևոր և մտավոր դաստիարակության գործին:

Ամենից առաջ, խորի՛ն, խորի՛ն շնորհակալություն Ձեզ, Վեհափառ Տեր, որ, իջնելով առաքելաշնորհ Լուսավորչի Ձեր գահից, այս տարի էլ առանձին հոգատարությամբ և ուշադրությամբ հետևեցիք ճեմարանի առօրյային և հայրաբար ղեկավարեցիք կրթական գործը, հաճախ ներկա լինելով նաև դասավանդություններին:

Ջերմագին շնորհակալություններ տեսչական կազմին՝ տեսուչ Տ. Գրիգորիս վարդապետին և ուսմասվար Տ. Եզնիկ քահանային:

Երախտապարտ ենք և շնորհակալ դասախոսներին, որոնք սիրով և պահանջկոտությամբ իրենց ամբարած գիտելիքներն անմնացորդ ավանդել են մեզ, և մեզ մնում է միայն եղածի վրա ավելացնել նորը՝ ինքնուրույն կրթությամբ:

Այսօրվա հավաքույթը պատահական չէ: Այն իր վրա է կրում դպրանոցի հիմնադիրներ Ս. Սահակ—Ս. Մեսրոպից սկսած և մինչև Վեհափառ Հայրապետը հասած կրոնաբույր և հայրենասիրական ոգու ազդեցությունը:

Այս տարվա համեստ հունձն էլ համառ աշխատանքի արդյունք է:

Մեր վրա դրված է այս ողջ էստաֆետի ծանրությունը, որ է՝ արդարացնել մեր վրա թափված աշխատանքը. մեր հանդեպ տածված հույսն ու վստահությունը:

Այսօր մենք պարտապան ենք: Պարտական ենք հանդեպ մեր ազգը, մեր Եկեղեցին: Եվ այդ սրբազան պարտքի գիտակցությունը հզոր կռան է մեզ համար, որ անընդհատ և անձանձրույթ գործի պիտի մղի մեզ՝ ետ վճարելու համար մեր պարտքը:

Երանի նրան, ով բաց ճակատով կկանգնի ինքն իր խղճի առջև և կասի. «Ես անպարտ եմ խղճիս առջև»:

Վեհափառ Տեր, ամավերջի այս խորհրդածություններից հետո թույլ տվեք հոգևոր ճեմարանի ողջ ուսանողության կողմից մատչել ի համբույր Ձեր սուրբ Աջին և ստանալ Ձեր հայրական օրհնությունները:

Ապա արտասանություններով հանդես են գալիս Մեսրոպ Խաչիկյանը (Ա լսարան), Գևորգ Գյուլգյուլյանը (Բ լսարան) և Վիգեն Քեչեջյանը (Ա դասարան), որոնք հաջորդաբար կատարում են Ավետիք Իսահակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները», Վահան Թեքեյանի «Աղոթք վաղվան սեմին առջև» և Դանիել Վարուժանի «Ցան» բանաստեղծությունները:

Մակար Եկմալյանի «Ազնիվ ընկեր» խմբերգի կատարումից հետո, հոգևոր ճեմարանի ուսմասվար Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը կարդում է 1979—1980 ուսումնական տարեշրջանի կատարած աշխատանքների հաշվետու հետևյալ զեկույցը:

ՏԵՍՉԱԿԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1979—1980 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Վեհափառ Տեր,

Մեծահարգ տիարք Պարսամյան և Հասրաթյան,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,

Սիրելի դասախոսներ, ուսանողներ և ներկաներ,

Աստուծո ողորմությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ իր լրումին հասավ հոգևոր ճեմարանի 1979—1980 ուսումնական տարին:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանն այսօր հանդիսանում է Հայ Եկեղեցու կարևոր զարկերակներից մեկը: Այս իմաստով մեծ է այս հաստատության դերը: Վստահաբար կարելի է ասել, որ անցնող տարին հոգևոր ճեմարանը կատարեց իր պարտականությունները Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի նկատմամբ:

Հոգևոր ճեմարանի ինն ուսանողներ ստացան քահանայական ձեռնադրություն, որոնցից չորսը՝ անցյալ տարվա շրջանավարտներ: Ձեռնադրվեցին վեցը ամուսնացյալ. երեքը՝ կուսակրոն:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ այս ուսումնական տարում հոգևոր ճեմարանի տեսուչ նշանակվեց Մայր Աթոռի միաբան Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և ուսմասվար՝ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

Վեհափառ Հայրապետի օրհնությունն առնելուց հետո նոր տեսչական կազմը հոգևոր ճեմարանի կրթական մակարդակը Է՛լ ավելի բարձր հիմքերի վրա դնելու խնդիրը դրեց իր առաջ: Այս նպատակով սիստեմատիկ աշխատանք կատարվեց ուսումնական ծրագիրը բարեփոխելու և նոր դասագրքերով ճեմարանը օժտելու ուղղությամբ:

Անցնող ուսումնական տարում հոգևոր ճեմարանում դասավանդվեցին մի շարք նոր առարկաներ՝ հայրաբանություն, հին հունարեն, ձեռագրագիտություն, հնագրություն, քրիստոնեական բարոյագիտություն:

Տեսչությունը, դասախոսական կազմի հետ միասին, շարունակում է իր աշխատանքները՝ հոգևոր ճեմարանը մի կայուն և բարձր մակարդակի ուսումնական ծրագրով դասագրքերով օժտելու համար: Այս աշխատանքները արդյունավետ են դառնում հիմնականում Վեհափառ Հայրապետի բարձր հովանավորությամբ, իմաստուն խորհուրդներով և հայրական խրախուսանքներով:

Անցյալ տարի Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ բացվեց քահանայից լսարանը, երկու տարվա ծրագրով: Քահանայից լսարան կարող են ընդունվել 25—30 տարեկան ամուսնացած քահանացուներ:

1979—1980 ուսումնական տարվա ընթացքում հոգևոր ճեմարանի հարկից ներս տեղի ունեցան մի շարք դասախոսություններ և հանդիսություններ, որոնց թվում հիշատակության արժանի է 1978—1979 ուսումնական տարեշրջանի շրջանավարտ յոթ սարկավագների, ինչպես նաև նախկին երկու շրջանավարտների դիպլոմային աշխատությունների պաշտպանությունը, որ տեղի ունեցավ 1980 թվականի ապրիլի 22—23-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Անցյալ տարվա ճեմարանի կյանքի իրադարձություններից մեկը եղավ նաև ավարտական լսարանի հինգ ուսանողների սարկավագական ձեռնադրությունը, 1979 թվականի դեկտեմբերի 26-ին, Ս. Ստեփանոսի տոնակատարության օրը՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ սրբազանի:

Հոգևոր ճեմարանի ուսանողները անցնող տարվա ընթացքում հաճախակի ներկա եղան Երևանում զանազան համերգների, թատրոնների և կինոդիտումների:

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը մեկ օրով պտույտների են մեկնել Հավուց Թառ, Ս. Ստեփանոս, Ս. Գեղարդ վանքերը. երեքօրյա ձյունասահք պտույտի են մեկնել Ծաղկաձոր և երկու օրից պիտի մեկնեն ամավերջի ավանդական չորսօրվա պտույտի դեպի Հառիճա, Օձունի, Հաղպատի և Սանահնի վանքերը:

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1979—1980 ուսումնական տարեշրջանի սկզբին հոգևոր ճեմարանն ուներ 39 ուսանողներ՝ բաժանված չորս դասարանների վրա, և 17 ուսանողներ՝ քահանայից դասարանում: Այսօր հոգևոր ճեմարանի չորս դասարաններում ընթացիկ տարեշրջանն ավարտեցին 28 ուսանողներ, իսկ քահանայից դասարանում՝ 7 ուսանողներ: Բացի այս, քահանայից դասարանի չորս այլ ուսանողներ ստացան քահանայական ձեռ-

նադրություն: Չհամապատասխանելով հոգևոր ճեմարանի պահանջներին և կամ չհարմարվելով ճեմարանի կարգ ու կանոնին, 17 ուսանողներ դուրս մնացին հոգևոր ճեմարանի ուսումնական կյանքից: Այս տարի հոգևոր ճեմարանն ավարտեցին չորս սարկավագ ուսանողներ:

Այսօրվա դրությամբ հոգևոր ճեմարանի ուսանողների քանակը, ըստ դասարանների, հետևյալն է.

Գ. լսարան՝ 4 ուսանող
Ա. լսարան՝ 4 ուսանող
Բ դասարան՝ 8 ուսանող
Ա. դասարան՝ 12 ուսանող
Քահանայից դասարան՝ 7 ուսանող
Ընդամենը՝ 35 ուսանող

Այս տարի չենք ունեցել Բ լսարան և Գ դասարան:

Իսկ այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից ջերմապես շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանը՝ այն հոգատար վերաբերմունքի և հայրական խնամքի համար, որ տածում է Ձեր Սուրբ Անձը հոգևոր ճեմարանի նկատմամբ:

Ցանկանում եմ շնորհակալական խոսք ասել նաև ճեմարանի նախկին տեսուչ Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանին և դասախոսներին, որոնք իրենց գործնական խորհուրդներով և բարի կամեցողությամբ օգնեցին և դյուրացրեցին տեսչության աշխատանքները:

Շնորհակալություն նաև Մայր Աթոռի միաբանությանը և պաշտոնեությանը՝ իրենց ցուցաբերած զանազան օժանդակությունների համար:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը մասնավոր շնորհակալություն է հայտնում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդին, որ օրենքի սահմաններում իր բարիկամեցողությամբ և անհրաժեշտ օգնությամբ նպաստեց հոգևոր ճեմարանի գործունեության առաջադիմությանը:

Այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք Ձերդ Սրբությանը ներկայացնել առաջադեմ ուսանողների անունները:

Գ. լսարան

Ա. մրցանակ—Հայկ Չիլինգարյան (8.7 միջին)
Բ մրցանակ—Պետրոս քհն. Մալյան (8,09 միջին)
Տիգրան Սահրադյան (8,035 միջին)

Ա. լսարան

Ա. մրցանակ—Վարդան Բաղդասարյան (9,1 միջին)
Բ մրցանակ—Մեսրոպ Խաչիկյան (8,5 միջին)

Բ դասարան

Ա. մրցանակ—չկա
Բ մրցանակ—Սարգիս Կուտուզյան (7,67 միջին)

Ա. դասարան

Ա. մրցանակ—Վիգեն Քեչեջյան (8,34 միջին)
Բ մրցանակ—Հովակիմ Քելեջյան (8,08 միջին)

Քահանայից դասարան

Ա. մրցանակ—Կառլեն Պետրոսյան (9,1 միջին)
Բ մրցանակ—Գարուշ Լազարյան (8,8 միջին)

Կարգապահության և օրինակելի վարքի համար՝ Վարդան Բաղդասարյան, Հովակիմ Քելեջյան և Գևորգ Թաշչյան: Երաժշտության մեջ առաջադիմություն ցուցաբերելու համար՝ Սարգիս Կուտուզյան:

Հանդիսության վերջում ճեմարանի տեսուչ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ տալու համար Իր օրհնության խոսքն ու պատգամը հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը՝ ճեմարանի ուսումնական տարվա փակման առիթով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԻՆ
(13 հունիսի 1980 թ.)

Ինչպես ամեն տարի, նման առիթով եկել ենք՝ բերելու ողջույն և օրհնությունը մեր հոգևոր ճեմարանին, տեսչության, դասախոսական կազմին և ուսանողության: Հատկապես գնահատանքի խոսքով, տեսուչ Գրիգորիս վրդ. Բունիաթյանին և ուսմասվար Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանին ու դասախոսական կազմին, որոնք նաև այս տարի շարունակեցին իրենց գործունեությունը բարի արդյունքներով: Ուզում ենք հիշեցնել ձեզ Մեր խոսքը անցյալ տարի բացման հանդեսին, երբ արտահայտեցինք Մեր վստահությունը երիտասարդ մեր միաբաննե-

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

րի նկատմամբ, որոնք պատասխանատու պաշտոնների են հրավիրվում հետզհետե: Այս փորձը պիտի շարունակենք նաև հառաջիկա տարիներին, որպեսզի քայլ առ քայլ մեր երիտասարդները ձեռք բերեն ամբողջական փորձառություն և նվիրումով ու իրենց գիտելիքներով բարձրացնեն մակարդակը մեր հոգևոր ճեմարանի:

Հայցում ենք բոլորին Աստուծո օրհնությունը և օգնականությունը:

Քիչ առաջ, երբ պիտի մեկնեինք դեպի այս դահլիճը, Վեհարանում, վերջին պահին տպարանից բերեցին և Իմ սեղանի վրա դրեցին Հայրապետական վերջին կոնդակը՝ նվիրված Հայաստանի 60-ամյակին:

Ինչպես գիտեք, վաթսուն տարիներ առաջ, նոյեմբեր ամսին, մեր երկրում հաստատվեցին սովետական կարգեր: Դա ոչ թե քաղաքական վարչակարգի սովորական փոփոխություն էր, այլ պատմական վճռական նշանակություն ունեցող մի տարեթիվ, որով Հայաստանը փրկվեց վերջնական բնաջնջումից: Այն ժամանակ մեր երկրում բնակվող ոչ իսկ մեկ միլիոնի հասնող բնակչությունը հասավ իր կյանքի խաղաղության ափին, վերաշինվեց երկիրը քայլ առ քայլ ծանր դժվարություններով և զոհաբերություններով: Եվ ահա մենք կանգնած ենք այսօր, վաթսուն տարիներ հետո, մեր վերաշինված Հայրենիքի պատկերի առաջ, ուր ապրում են ավելի քան երեք միլիոն հայեր, Երևան մայրաքաղաքով, մեկ միլիոն բնակչությամբ, քաղաք, որ այն ատեն, 1920-ին, հազիվ քսան հազար բնակչություն էր համրում իր ծոցում:

Եվ որպեսզի ավելի զգալուն դարձնենք այս պատկերը, ասենք, որ հենց այս մեր շրջափակում, Էջմիածնի շրջափակում, մինչև Ներսեսյան լիճ, 1915—1920 տարիների շրջանում հարյուր հազարավոր գաղթականությամբ էր լցված: Փաստորեն այս ամբողջ Էջմիածնի շրջանը, կենտրոն ունենալով մեր վանքը, բացօթյա որբանոց էր և հիվանդանոց, երբ ամեն օր տասնյակ, երբեմն հարյուրավոր հայեր մահանում էին քաղցից և հիվանդություններից:

Այսօր, վաթսուն տարիներ անց, մենք, բոլորովին այլ պայմանների մեջ, ոչ միայն ապրում ենք խաղաղ և անվտանգ, հառաջդիմող, ծաղկող կյանքի ճանապարհով, այլև այստեղ փոխանակ որբեր խնամելու և մեռելներ թաղելու, հոգևոր ճեմարանում ուսումնական աշխատանք ենք կատարում, նոր սերունդներ ենք պատրաստում՝ իբրև ապագա ծառայողներ Մեր Եկեղեցու:

Ահա թե ինչու Մեր մեջ տրամադրություն ստեղծվեց այսօր, մի պահ հիշելու այս տխուր անցյալը, որպեսզի այդ ֆոնի վրա ավելի հստակ և ավելի արդար կերպով կարողանանք գնահատել վաթսուն տարիների հաղթական երթը հայ ժողովրդի, խաղաղության և անվտանգության պայմանների մեջ, Սովետական Միության եղբայրական ժողովուրդների շարքերում:

Այսօր մեր հոգևոր-եկեղեցական գործունեությունը Մենք նկատում ենք անբաժանելի մասը ընդհանուր մեր հայրենական վերածնունդի, որովհետև մենք ամեն բանից առաջ հայ ժողովրդի զավակներն ենք և մեր մայր հայրենիքի քաղաքացիները:

Եվ իբրև հոգևորականներ, գուցե առավել, քան ուրիշ քաղաքացիներ, մեր խղճի պարտքը պետք է նկատենք մեր հայրենասիրական պարտականությունը կատարելու ավելի բարեխղճությամբ, որովհետև Ավետարանը մեզ այդ է սովորեցնում. լինել պարկեշտ մարդիկ, շինարար մարդիկ, անձնազոհ մարդիկ, մեր ժողովրդին նվիրված մարդիկ:

Ահա այս ոգով և այս զգացմունքներով Մենք կրկին անգամ շնորհավորում ենք տեսչությանը, դասախոսական կազմը և ուսանողությունը՝ ձեռք բերված արդյունքների համար, մաղթում ենք բոլորիդ հաճելի և բարի արձակուրդ, որպեսզի բոլորը վերանորոգված ուժերով վերստին հավաքվեն այստեղ, վերստին հանդիպենք մենք այս դահլիճում սեպտեմբերին, մեր հոգեշեն ու հայրենանվեր գործը շարունակելու համար:

Թող Աստված օրհնի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, համայն մեր ժողովուրդը և մեր վերածնված մայր հայրենիքը, այժմ և հավիտյան, ամեն:

Ամավերջի հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Վերջում հոգևոր ճեմարանի դասախոսները աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունները:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 1-ին, կիրակի.—Սկիզբն Յարութեան կիւրակէից. Յիշատակ Եղիայի մարգարէին.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբղ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ի ճանապարհէ ճշմարտութեան և դարձուսցէ ոք զնա, գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց» (Թուղթ Հակոբա Ե 19—20) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 2-ին, երկուշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր Ս. Հռիփսիմե վանքի տաճարում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր Տ. Մասիս վրդ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի, երկնաւոր նահատակք և կուսանք իմաստուն...» (շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, վերջերս հայտնաբերված Հռիփսիմյանց նահատակների աճյունների մոտ, կատարվում է «Գոհաբանական մաղթանք»:

* * *

Հունիսի 3-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր Ս. Գայանե վանքի տաճարում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր Տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Գայանէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի. ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս...» (շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան աղաշտոն՝ «վասն հանգուցեալ ննջեցեալ կաթողիկոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, սարկաւագաց և ամենայն ուխտի մանկանց Հայաստանեայց եկեղեցւոյ»:

*
* *

Հունիսի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունիսի 5-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր Ս. Ծողակաթ վանքի տաճարում ս. պատարագ է մատուցում վանահայր Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա խորհրդի մասին:

*
* *

Հունիսի 7-ին, շաբաթ.—Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն.

Այսօր Մայր տաճարում, Իշման սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղազարյանը:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոհան ծ. վրդ. Գալբաքյանը:

Հայր սուրբը Մայր Աթոռում մեկ շաբաթ մնալուց հետո, հունիսի 14-ին մեկնում է իր պաշտոնատեղին:

*
* *

Հունիսի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետին են այցելում անգլիացի դիվանագետներ Ռիչարդ Վիլքինսոնը և Դեյվիդ Գովանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում փիլիսոփայական գիտությունների դոկտ., պրոֆ. Գևորգ Խոլոպյանը դասախոսություն է կարդում միջնադարյան հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի կյանքի, գործունեության և նրա ստեղծագործական ժառանգության մասին՝ մեծ մտածողի ծննդյան 1500-ամյակի առթիվ:

Վերջում հարգելի դասախոսը հանգամանորեն պատասխանում է ներկաների տված հարցերին:

*
* *

Հունիսի 13-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հունիսի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 17-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին է այցելում գերմանացի հայագետ դոկտ. Բրոչերդ Բոենթջեսը (Բեռլին):

*
* *

Հունիսի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհարանում Վեհափառ Հայրապետին է այցելում Մոսկվայում Ավստրիայի հանրապետության արտակարգ դեսպան Հերալդ Հինդեռեգերը:

Հայոց Հայրապետի և պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

Հունիսի 19-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին են այցելում Դամասկոսի Տիկնանց Միության ներկայացուցիչները և մի խումբ ուխտավորներ:

*
* *

Հունիսի 20-ին, ուրբաթ.—Այսօր Վեհարանում Վեհափառ Հայրապետին են այցելում ֆրանսահայ մի խումբ ուխտավորներ:

*
* *

Հունիսի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ «նորոգ հանգուցյալ» Մայր Աթոռի բարերար մարսելահայ Արծրուն Զրբաշյանի և հոգևոր ճեմարանի դասախոս Բարսեղ Թաշչյանի հիշատակին:

*
* *

Նույն օրը Վեհարանում Վեհափառ Հայրապետին են այցելում մի խումբ հայ ուխտավորներ՝ Ֆրանսիայից, Սիրիայից և Ռումինիայից:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Տ. Սամվել վրդ. Սամուրյանը:

*
* *

Հունիսի 23-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին են այցելում Դամասկոսի Թեքեյան մշակութային կազմակերպության անդամներ:

*
* *

Նույն օրը, ուշ գիշերով, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երևանի օդանավակայանում սրբազան հորը, հանուն Վեհափառ Հայրապետի, դիմավորում են Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Հովսեփ սրկ. Պալըգյանը:

Հաջորդ օրը, առավոտյան, սրբազան հայրը իր ուխտի աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվում է Վեհափառ Հայրապետի կողմից և ջերմ զրույց ունենում Նորին Սրբության հետ:

*
* *

Հունիսի 24-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհարանում Վեհափառ Հայրապետին է այցելում պոլսահայ գիտնական Բարսեղ Թուղլաջյանը և զրույց ունենում Նորին Սրբության հետ:

*
* *

Հունիսի 26-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ.

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում վանահայր Տ. Բագրատ աբղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Բայց զայն գիտասջիր, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում» բնաբանով:

Հավարտ Ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ Մայր Աթոռի բարերարներ Թորգոմ Ղազարոսյանի և Պետրոս Ալեքսյանի հիշատակին:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, երեքօրյա հանգստի է մեկնում Սևանի «Ինտուրիստ» նորաշեն հյուրանոց:

*
* *

Հունիսի 29-ին, կիրակի.—Տօն Գիւտ տրփոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Բարեխօսեա Սրբուհի վասն անձանց մերոց» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին են այցելում ամերիկահայ և լիբանանահայ մի խումբ ուխտավորներ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Մայիսի 7-ին, չորեքշաբթի օրը, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի ու թեմական խորհրդի հրավերով, Բուխարեստ է ժամանում Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը՝ ուղեկցությամբ, որպես գավազանակիր, Ամմանի և շրջակայքի հայոց հոգևոր հովիվ Տ. Վահան վրդ. Թոփալյանի:

Բուխարեստի օդանավակայանում սրբազան պատրիարք հորը դիմավորում և բարի գալուստ է մաղթում Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը՝ շրջապատված թեմական ժողովի անդամներով և ժողովրդի մեծ բազմությամբ:

Հանուն Ռումինիայի Դեմոկրատական Հանրապետության, հայոց պատրիարքի ժամանումը ողջունում ու բարի գալուստ են մաղթում կրոնից մինիստրը և Ռումինիայի ռումին պատրիարքության բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Բուխարեստի հայոց առաջնորդարանի առաջ մեծանուն հյուրին աղ ու հացով և ծաղիկներով դիմավորում են հայկական և ռումինական տարազներ հագած հայ աղջիկներ:

Սրբազան պատրիարքը «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Բուխարեստի հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցի, ուր նրան ողջունում և բարի գալուստ է մաղթում թեմի առաջնորդ սրբազանը:

Մայիսի 8-ին, հինգշաբթի օրը, սրբազան պատրիարքը այցելում է եկեղեցի և առաջնորդարանի թանգարան ու գրասենյակ: Ավելի ուշ սրբազան պատրիարքը այցելում է Ռումինիայի մայրաքաղաքի տեսարժան վայրեր:

Օրվա երկրորդ կեսին Տ. Եղիշե պատրիարքը այցելում է Բուխարեստի հայոց գերեզմանատուն, ուր «Հոգւոց» է արտասանում Վեհափառ Հայրապետի հանգուցյալ հոր՝ Աբրահամ Պալճյանի գերեզմանի վրա:

Մայիսի 9-ին, ուրբաթ օրը, ռումինահայ թեմական խորհուրդը, ի պատիվ սրբազան հոր, պաշտոնական ընդունելություն է կազմակերպում, որն անցնում է ջերմ մթնոլորտում: Ընդունելության ժամանակ ողջույնի և բարիգալստյան ճառեր են փոխանակվում:

Սրբազան պատրիարք հոր այցելությունը համընկնում է թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոսի քահանայական ձեռնադրության 25 և ծննդյան 50-ամյակի հանդիսություններին:

Տ. Տիրայր սրբազանը Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանում աշակերտել է սրբազան պատրիարքին, որը սիրով ներկա է եղել այդ առթիվ Բուխարեստում և Սոֆիայում կատարվող հոբելյանական հանդիսություններին:

Մայիսի 10-ին, շաբաթ օրը, Տ. Եղիշե սրբազան պատրիարքը պաշտոնական այցելություն է տալիս ռումին պատրիարքարան, ամենապատիվ Տ. Ժուստին պատրիարքին՝ ընկերակցությամբ Տ. Տիրայր սրբազանի, Տ. Զարեհ ու Տ. Վահան վարդապետների:

Երկու քույր Եկեղեցիների Հովվապետների միջև տեղի է ունենում ջերմ զրույց էկումենիկ ոգով: Այս առթիվ հուշանվերներ են փոխանակվում: Ապա տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Երուսաղեմի Հայոց պատրիարքի:

Մայիսի 11-ին, կիրակի օրը, առավոտյան, Բուխարեստի հայոց առաջնորդարանի սրահում գումարվում է ռումինահայ պատգամավորական ժողովը, որին ներկա են լինում նաև Տ. Եղիշե պատրիարքը, ինչպես նաև ռումին կրոնից մինիստրության ներկայացուցիչը:

Ժողովի ընթացքում ռումիներեն լեզվով



ՌՈՒՄԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՄԵՋ Տ. ԺՈՒՍՏԻՆ ԵՎ Տ. ԵՂԻՇԵ
ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ՓՈԽԱՆԱԿԵԼԻՍ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՔԱՐՈԶԵԼԻՍ (11 ՄԱՅԻՍ 1980 Թ.)

Հոբելյար Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը

ընթերցվում է Ամենայն Հայոց Հայրապետի փետրվար 28 թվակիր կոնդակը, Տ. Տիրայր սրբազանին արքության պատիվ շնորհելու մասին:

Նույն օրը Հոգեգալստյան տոն էր: Սրբազան պատրիարքը առաջնորդվում է եկեղեցի՝ ներկա լինելու ս. պատարագին և ապա քարոզելու՝ շնորհավորելով Տ. Տիրայր սրբազանին նրա ծննդյան 50 և քահանայական ձեռնադրության 25-ամյակները և մանավանդ արքության պատվի արժանանալը՝ մաղթելով նրան երկար կյանք և նորանոր հաջողություններ թեմական գործունեության ճանապարհին: Այս առթիվ սրբազան պատրիարք հայրը հոբելյար սրբազանի կուրծքը զարդարում է սաղիմական թանկագին մի պանակեով:

Նույն օրը թեմական խորհուրդը պաշտոնական ճաշկերույթ է տալիս Տ. Եղիշե պատրիարքի և Տ. Տիրայր արքեպիսկոպոսի պատվին, որին ներկա են լինում Բուխարեստում քույր Եկեղեցիների և այլ կրո-

Պատգամավորական ժողովի ներկայացուցիչներ, որոնք սպասում են Տ. Եղիշե պատրիարքի ժամանման

նական դավանությունների ներկայացուցիչներ, կրոնից մինիստրության տնօրենը, ռումինահայ պատգամավորներ և այլ հյուրեր:

Մայիսի 12-ին, երկուշաբթի օրը, Բուխարեստի հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցում կայանում է հոգևոր համերգ, որից հետո դարձյալ առաջնորդարանում կազմակերպվում է ընդունելություն՝ շուրջ 300 հոգու համար:

Մայիսի 13—15 օրերին սրբազան պատրիարք հայրը Տ. Ժուստին պատրիարքի հրավերով այցելում է Մոլդավիայի ռումանական մի քանի վանքեր:

Սրբազան պատրիարք հայրը այցելում է նաև Մոլդավիայի հայոց հնագույն սրբավայր Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին և Զամքայի Ս. Օգսենտիոս եկեղեցիները:

Հաջորդ օրը սրբազան պատրիարքը այցելում է Սուչևիցա, Մոլդովիցա, Ագապիա և Վլրաթեք ռումինական կուսանոց վանքերը ու ամեն տեղ դիմավորվում զանգերի ղողանջներով և եկեղեցական հանդիսավոր երգերով:

Մայիսի 15-ին ամենապատիվ սրբազան պատրիարքը պաշտոնական այցելություն է տալիս Բուխարեստում կրոնից մինիստր Իոն Ռոշիանուն:

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Ռումինիայում իր այցելության ավարտին Տ. Եղիշե սրբազան պատրիարքը լավագույն տպավորություններով մայիսի 16-ին, ուրբաթ օրը, հրաժեշտ է տալիս Ռումինիայի հայ համայնքին և այցելության մեկնում

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔ, Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ, Տ. ՏԻՐԱՑՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԿՐՈՆԻՑ ՄԻՆԻՍՏՐ ՊՈՊՈՎ
(ՍՈՖԻԱ, 24 ՄԱՅԻՍ 1980 Թ.)

Տ. Եղիշե պատրիարքը և տ. Տիրայր արքեպիսկոպոսը Պաչքովոյի պատմական վանքում բուլղար վանականների հետ (21 մայիս 1980)

Բուլղարիա, որպես պաշտոնական հյուրը Բուլղարիայի հայ համայնքի և բուլղար Եկեղեցու ամենապատիվ Տ. Մաքսիմ պատրիարքի ու Ս. Սինոդի: Հայոց պատրիարքին ուղեկցում էր Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

Կիրակի օրը, մայիսի 18-ին, հայոց պատրիարքը ներկա է լինում Սոֆիայի Ալեքսանդր Նևսկու Մայր տաճարում ս. պատարագի, որից հետո պաշտոնական այցելություն է տալիս Տ. Մաքսիմ սրբազան պատրիարքին, որը Տ. Եղիշե սրբազանին պատվում է ճաշկերույթով, որի ընթացքում ողջույնի և բարիգալստյան ճառեր են փոխանակվում:

Հաջորդ օրերին սրբազան պատրիարքը այցելում է Պլովդիվ քաղաք և մի շարք բուլղարական վանքեր:

Մայիսի 24-ին, Եղիշե պատրիարքի հովանավորությամբ և Տ. Մաքսիմ պատրիարքի ներկայությամբ, նշվում է թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոսի ծննդյան 50 և քահանայական ձեռնադրության 25-ամյակները: Այնուհետև թեմական խորհրդի կողմից տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում բուլղար բարձրաստիճան հոգևորականներ, կրոնից մինիստր Պոպովը, որը հանուն բուլղար կառավարության ընթերցում է Տ. Տիրայր արքեպիսկոպոսին բուլղարական «Կիրիլ-Մեթոդ»-ի առաջին կարգի պատվանշանով պարգևատրելու հրամանը: Ապա Տ. Մաքսիմ պատրիարքը ևս Տ. Տիրայր սրբազանին պարգևատրում է «Կիրիլ-Մեթոդ» եկեղեցական շքանշանով:

Ընդունելության ավարտին Տ. Տիրայր արքեպիսկոպոսը իր շնորհակալության և երախտագիտության խոսքն է ասում Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին, Տ. Մաքսիմ և Տ. Եղիշե պատրիարքներին և բուլղար բարեխնամ կառավարությանը:

Կիրակի օրը, մայիսի 25-ին, Հոգեգալստյան տոնին, Տ. Եղիշե սրբազան պատրիարքը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Սոֆիայի հայոց եկեղեցի, ուր և ս. պատարագի ընթացքում Բանին կենաց քարոզով մխիթարում է հավատացյալներին:

Մի քանի օր Վառնա ծովափնյա քաղաքում հանգստանալուց հետո, Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը հրաժեշտ է տալիս Բուլղարիայի հայ համայնքին և լավագույն ու հարուստ տպավորություններով վերադառնում Երուսաղեմ՝ իր աթոռանիստը:



ԵՒՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՂՈԹՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Տէր, ուսո՛ մեզ յաղօթս կալ»

Բոլոր կրոնքները հիմնված են հոգևոր իրողության վրա, այսինքն տիեզերական ու հավերժական զորության հավատքին վրա: Կրոնքներու հիմքը Աստուծո գոյությունն է, և աղոթքը կրոնքի հոգևոր ուժի արտահայտության միջոցն է, կամ բանալին հոգևոր կյանքի:

Առանց աղոթքի կրոնք չկա:

Քրիստոնեական ըմբռնումով՝ Աղոթքը հոգիին խոսակցությունն է Աստուծո հետ, ինչպես որ մարդը համր կդառնա և անհաղորդակից՝ եթե չխոսի և իր գաղափարները ու մտածումները չարտահայտե բերանացի կամ գրավոր խոսքով, նույնպես, հոգին համր կդառնա, եթե իր փափաքներն ու իղձերը—հոգեկան պետքերն ու երազները—չարտահայտե աղոթքով:

Աղոթքը հոգիին սնունդն է, ինչպես որ նյութական հացը սնունդն է մարմնին, առանց որուն ֆիզիքական մարդը անվաղ կմեռնի, նույնպես, առանց հոգևոր սնունդի՝ հոգին անվաղ կմնա ու կհիվանդանա: «Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» (Մատթ. Դ 4) կպատգամե մեր Տերը:

Մարդը կապրի ՀՈԳԵՂԵՆ ՏԻԵԶԵՐՔի մը մեջ, ինչպես կապրի նյութեղեն տիեզերքի մը մեջ, որոնք սերտորեն շաղկապված են իրարու: ՀՈԳԵՎՈՐ ՏԻԵԶԵՐՔը կյանք կուտա ֆիզիքական աշխարհին: Ան է որ զորություն և կենսագործող ուժ կնեռարկե նյութական տիեզերքին: Մարդն ալ փոքրիկ Տիեզերք մըն է (Cosmos):

Աստուծո հոգին կյանք կբաշխե մարդկային հոգիին, ու մեր հոգին կապրեցնե մեր մարմինը: Առանց հոգիին մարմինը դիակ մըն է կենդանի:

Աղոթքի միջոցավ է որ մենք կարող ենք հաղորդակցիլ աստվածային հոգիին ու Անկե ուժ և զորություն ընդունիլ:

Աղոթքի հոգիին շնչառությունն է: Ինչպես որ չենք կրնար ապրիլ առանց օդ շընչելու, այնպես ալ չենք կրնար ապրիլ առանց հոգևոր շնչառության, եթե ոչ հոգեպես շնչասպառ կըլլանք:

*
* *

Արդիական նյութապաշտ մտայնությամբ՝ աղոթքը միջնադարյան ճգնավորներուն հատուկ է, և ոչ թե մեր հառաջադեմ ու քաղաքակրթյալ դարուն: Աղոթքը ժամավաճառություն կսեպվի, պետք է գործել. կըսեն, և ոչ թե ժամանակ վատնել վերացական ու անիրական երազներով, սակայն, կմոռնան թե կյանքի նպատակը լոկ աշխատանքը չէ,—որ միջոց մըն է ավելի վեհ նպատակներու,—հոգևոր կյանքի, դեպի կատարելություն նվաճումի, ու անդրագույն երջանկության և հավերժության,—թեև, պետք է ընդունիլ թե՝ բարի գործն ալ ինքնին, աղոթք է, հոգեկան պահանջք է, և ամեն ճշմարիտ աղոթք բարի գործ մըն է:

Աղոթքը աշխարհի մեծագույն ուժն է,

լեռները շարժող և տեղափոխող հոգևոր զորությունը, հրաշագործ բանալին հոգևոր կյանքի՝ որուն համար, մանանեխի հատիկին չափ իսկ հավատք կբավե, ըստ Տերունական խոսքին:

Ինչպես որ ժամացույցին զսպանակը կլարենք որպեսզի գործե անընդհատ, նույնպես պետք է հոգեկան ուժերու զըսպանակը լարել Աղոթքով, որպեսզի հոգևոր կյանքը դադար չառնե. որպեսզի ներքին կյանքի զսպանակը չժանգոտի և կանգ չառնե, այլ շարունակ գործե:

Իրական աղոթքը սրտի գործ է և ոչ թե շրթունքի, Նարեկացիի իմաստուն բառերով, «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»: Ճշմարիտ աղոթողը Մաքսավորն է, որ գիտակից է իր մեղսալից վիճակին, ու կաղերսե,—«Աստուած, քաւեա զիս, զմեղուրս»,—և ոչ թե կեղծավոր Փարիսեցին, որ ինքզինքը արդար կնկատե, ու աղոթքը ինքնագովության և ինքնարդարացման միջոց կկարծե:

Մենք սխալ գաղափար ունինք աղոթքի մասին, սակարկություն չէ ան, և ոչ ալ խնդրանք միայն: Աստված մեր հաճույքին համար, Տիեզերքի օրենքները չի փոխեր ըստ կամս. մեր քմահաճույքին համար հրաշք չի գործեր, այլ հայրաբար կիշխե տիեզերքի արարածներուն վրա, և կուզե որ մարդիկ իրենց ազատ կամքով ու անձնիշխանությամբ գտնեն ուղիղ ճամբան, Իրեն դիմեն ու Իր լույսը տեսնեն:

Առաքյալներն ալ աղոթել չէին գիտեր, ուստի խնդրեցին Տիրոջմե որ աղոթել սորվեցնե իրենց, ըսելով՝ «Տէր, ուսո՛ մեզ յաղոթս կալ», ու Հիսուս սորվեցուց անոնց Տիպար Աղոթքը:

Ծես ու արարողություն չէ աղոթքը, և ոչ ալ պաշտամունք, այլ՝ մարդկային հոգեկան անտեսանելի ուժերու արտահայտությունը, և ներքին զորություն արտադրելու ամենեն ազդու միջոցը: Աղոթքի ազդեցությունը մարդկային մտքի ու մարմնի վրա, այնքան կարևոր է, որքան գաղտնի գեղձերու անհրաժեշտությունը մարդկային մարմնի առողջության համար: Աղոթքը բարոյական մեծ ուժ հառաջ կբերե, և իմացական կորով, ֆիզիքական հավասարակշռություն և խորունկ ըմբռնում մարդկային հարաբերության հետ կապ ունեցող իրականություններուն:

Աղոթքի ժամանակ Աստված չէ որ կըփոխվի, Անիկա անփոփոխ է, ու մեր կամակատարը չէ, այլ, մենք է որ պետք է փոխվինք, Իր բարի հայրական կամքին ենթարկվինք, մոռնանք մեր ԵՍը ու Աստուծո կամքին գործիք դառնանք, որպեսզի Անոր բարի կամքը գործե մեր մեջ ու մեզ լեցնե աստվածային զորությամբ, ու մեր հոգին գործե Աստուծո կամքին համաձայն: Պետք է հնազանդիլ Աստուծո կամքին առջև ու մեր ես-ը Անոր հլու հպատակ դարձնել:

Եթե ունկեղծ աղոթքի վարժություն ըրած ըլլաք, ձեր կյանքը հայտնապես և խորապես պիտի փոխվի. վասն զի աղոթքը իր բարերար ու հոգևոր դրոշմը կդնե մեր վարմունքին ու մեր ընթացքին վրա.—համբերատար ոգի և մարմնական հանդարտություն ու հավասարակշռություն կտեսնվին անոնց վրա որոնց կյանքը կառատանա աղոթքով:

Մարդը աղոթքով ինքնագիտակից կդառնա, ինքզինքը կճանչնա, կտեսնե իր բուն անձը, իր եսասիրությունը, իր գոռոզությունը, իր վախերը, կասկածներն ու սնափառությունները:— Կմշակե բարոյական պարտաճանաչության զգացում և իմացական համեստություն ու ստարկեշտություն: Այս կերպով կսկսի հոգևոր ճամբորդություն մը դեպի շնորհքի թագավորությունը:

Աղոթքը այնքան իրական ուժ մըն է, որքան երկրի ձգողական զորությունը: Այսօր գիտական աշխարհին մեջ, ընդունված ճըշմարտություն մըն է թե՝ բուն իրականությունը մեր տեսած նյութը չէ, այլ, անոր ետև գտնվող ու գործող ՀՈԳԵԿԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆը:

Աստված տիեզերական ուժի աղբյուրն է, սակայն քրիստոնեության Աստվածը կույր ուժ մը չէ, այլ՝ անձնավորյալ ու սիրող հայր մը:

*
* *

Բժիշկները կընդունին թե մարդոց հիվանդությունների մեծ մասը հոգեկան և ջղային են և միայն հավատքով կրնան բուժվիլ: Մահամերձ հիվանդ մը չի կրնար վերապրիլ գործողության տակ, եթե հուսահատ: Բժիշկ մը կրսե թե տեսած է շատ մը հիվանդներ, որոնց ոչ մեկ բժշկական հնարք ու դեղ օգնած է, սակայն, աղոթքի ուժը զանոնք ոտքի հանած է: Ասիկա ճըշմարիտ է մանավանդ ջղային ու մտային հիվանդությանց պարագային: Հոգեբուժությունը աղոթքի շնորհիվ միայն կկատարվի, և հոգևոր ուժերու գործելությամբ:

Աշխարհի վրա միակ զորությունը որ կրնա հաղթել, այսպես հորջորջված «Բնության Օրենքներուն», աղոթքն է, այս արարքը ՀՐԱՇՔ կկոչվի, սակայն, իրական հրաշքը այն է երբ մարդիկ իրենց առօրյա կյանքին մեջ, տնական կերպով զորություն կստանան աղոթքի շնորհիվ, ու Աստված կհրաշագործե մարդոց միջոցավ:

*
* *

Շատեր աղոթքը կշփոթեն ձևական բառերու հետ, պաշտոնական և կամ տղայական խնդրանքներու հետ, նյութական բաներ ուզելու համար: Այդ չէ՛ աղոթքը, այլ, մարդկային հոգվույն ներդաշնակումը Աստուծո հետ.—հոգեկան ոյժի ազդեցության հետ: Աղոթքը մեր ներքին ազնվագույն կարողություններու գործելությունն է: Աղոթքի միջոցավ միայն մենք կրնանք ներդաշնակել մեր մարմինը, միտքն ու հոգին՝ իրրև միություն, մեկ անձնավորություն և ստանալ հոգեկան զորություն: Աղոթողը պետք է մոռնա ինքզինքը, իր եսը, և իր անձը ընկլուզե Աստուծո սիրույն ու բարության մեջ, ուրիշ բառով, միանա Աստուծո և խառնվի Անոր Էության:

Հիսուսի այն խոսքը թե՝ «Խնդրեցէ՛ք եւ տացի ձեզ, բախեցէ՛ք եւ բացցի ձեզ», ճըշմարտված է մարդկային փորձառությամբ: Ճիշդ է թե աղոթքը մեռած մանուկ մը չի վերադարձներ կյանքին, բայց աղոթքը Ռեդիումի (Radium) պես լույս կճառագայթե, վասնզի, կզարնվի լույսի և ստեղծագործող ոյժի աղբյուրին: Թե ի՛նչպես աղոթքը կրնա մեզ զորացնել ա՛յնքան ուժական զորությամբ, այս հարցումին պատասխանելու համար—անշուշտ, գիտական մարզեն դուրս, և հոգեկան մարզին մեջ—պետք է ընդունիլ թե բոլոր աղոթքներն ալ հասարակաց բան մը ունին, այն է թե մարդկային էակները կշանան ավելցնել իրենց սահմանափակ ոյժը, դիմելով զորության անսպառ աղբյուրին: Երբ կաղոթենք, Տիեզերական զորութենեն կխնդրենք որ մեր պետքերուն համար՝ մեզի ավելի հոգևոր ոյժ բաշխե, և այն ատեն ավելի զորացած ու վստահ՝ ոտքի կելլենք ու կդիմավորենք կյանքի դժվարությունները՝ հույսով ու հավատքով: Սակայն, բնավ պետք չէ պահանջկոտ ըլլալ Աստուծո հանդեպ, ու մեր քմահաճույքին համար խնդրանքներ մատուցանել Անոր: Աղոթքեն ա՛յն ատեն ավելի զորություն կստանա մարդ, երբ զայն գործածե իբրև միջոց աստվածային ոյժ ստանալու և Իրեն նմանելու, և ո՛չ թե նյութական բաներու, աշխարհիկ ինչքերու համար, եսասիրական խնդրանքներ մատուցանելու:

*
* *

ԱՂՈԹՔԻ ՆՊԱՏԱԿՆ է Աստուծո ներկայությունը վայելել և Անոր հետ խոսիլ ու լեցվիլ հոգևոր զորությամբ: Աղոթքը հոգեկան ճիգն է մարդուն, Աստուծո հասնելու և հաղորդակցելու այն անտեսանելի Էակին հետ, որ Արարիչն է Տիեզերքին, որ անճառելի և գերագույն իմաստությունն է, ճշմարտությունը, գեղեցկությունն ու զորությունն է, և Հայրն ու Փրկիչն է ամենուն: Մարդկային լեզուն ու միտքը չեն կրնար նկարագրել զԱստված, այս բոլորը իմացական ու հոգեկան կալվածին մեջ կիյնան: Սակայն, մենք գիտենք թե երբ որ Աստուծո կաղոթենք ջերմ ու անկեղծ սիրտով՝ կփոխվինք դեպի լավը՝ հոգիով ու մարմինով: Անկարելի է որ մեկը ճշմարտապես աղոթե, առանց լավ արդյունքի:

Էմերսոն կըսե. «Չկա աղոթող մը որ բան մը սորված չըլլա»:

Իրական աղոթքը տագնապի աղոթքն է, երբ հոգին կպոռթկա իր սարսափը, իր ցավն ու երկյուղը, ու ինքզինքը կհանձնե Աստուծո, Անոր հայրական պաշտպանության և կըսե. «Եղիցին կամք քո»:

— Թող քու կամքդ ըլլա, ոչ թե իմս: Ու Տերը կպատվիրե. «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն Նորայ, և այդ ամենայն յաւելցի ձեզ» (Մատթ. Զ 33):

*
* *

ԱՂՈԹՔԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՏԵՂ ԵՎ ԺԱՄԱՆԱԿ ՉԿԱ: Ամենուրեք և ամեն ատեն մարդիկ պետք ունին աղոթքի ու կրնան աղոթել որևէ տեղ,—Տան, դպրոցի, շուկայի ու եկեղեցվո մեջ: Վասն զի բարի կյանքը մշտասաց աղոթք է: Ստոյիկյան Եպիկդետ կըսե. «Աստուծո մասին մտածե ավելի քան որ կշնչես»: Արդարև ինչպես որ առանց օդի մարմինը շնչահեղձ կըլլա, նույնպես ալ առանց աղոթքի հոգին շնչասպառ կդառնա: Մարմինը կենսավորողը հոգին է, ատոր համար, աղոթքը պետք է լավ ունակություն դառնա: Անիմաստ է օրվան մեջ միայն որոշ ժամանակ մը աղոթել ու մնացյալ ամբողջ օրը իբրև հեթանոս ապրիլ, վայրենի ու անկրոն դառնալ և զԱստված ուրանալ ու մոռնալ: Ճշմարիտ աղոթքը կյանքի ընթացք մըն է ու բուն իրական կյանքը, տառապես աղոթք է: Աղոթքը խոսքերու կրկնություն չէ, այլ հոգեկան ապրում:

Անշուշտ, ամեն մարդ չի կրնար մեծ հայրապետներու և սուրբերու պես գեղահյուս ու ներշնչյալ աղոթքներ հորինել, բանաստեղծական տաղանդով ու գրական շնորհքով, ինչպես Առաքյալները, Լուսավորիչը, Սահակ-Մեսրոպը, Նարեկացին կամ Շնորհալին, այլ, պարզ և ինքնաբուխ, անկեղծ ու սրտաբուխ պետք է ըլլա մեր աղոթքը: Որովհետև իրական աղոթքը ինքնատիպ է, անհատական, առանձնական, և ոչ թե հա-

սարակաց կրկնություն: Աղոթողը պետք է իր սրտի անկեղծ զգացումները արտաբերե, իր սերն ու ենթակայությունը հայտնե Աստուծո և Անոր վստահի ու Անոր հանձնվի որպեսզի Աստուծո բարերար կամքը հրաշագործե իր մեջ: Աստված կլսե սրտի լուռ աղոթքները, քան թե շատախոս ու թութակորեն արտասանված ուռուցիկ խոսքերը:

Զավակ մը իր հոր հետ բանաստեղծական լեզվով չի խոսիր, այլ, պարզ ու սիրալիր բառերով և վստահությամբ կդիմե անոր, իր պետքերուն համար ու իր սերը կհայտնե ժպիտով մը և անուշ խոսքերով:

Բարեկամներ իրարու հետ գրականությամբ չեն խոսիր, այլ սիրով ու անկեղծ սիրտով իրարու կհայտնեն իրենց սերը, համակրանքն ու գաղափարները:

Նույնն է պարագան մարդուն և Աստուծո, որ սիրագորով հայրն է համայն մարդկության, և Տիպար Աղոթքը Տերունական Աղոթքն է.—ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ...:

*
* *

Այս դարուն, ամեն ժամանակներե ավելի մարդիկ պետք ունին աղոթքի, Աստուծո առաջնորդության ու լույսին, սիրույն ու կամքին: Մարդիկ մոռցեր են աղոթել, որովհետև Աստուծմե հեռացեր են: Աղոթքն է որ մեզ Աստուծո հետ կկապե: Ազգերու անկումը հետևանք է հավատքի և կրոնքի տկարացման, Աստուծմե հեռացման:

Մեր հոգեկան ուժերը ողբալիորեն անմշակ թողուցած ենք: Աղոթքը հիմնական մարզանքն է հոգիին, զոր պետք է մշակել մեր անհատական կյանքին մեջ: Մարդկային մոռցած, անտեսված հոգին պետք է ազատագրել նյութի սպանող ու կաշկանդող կապանքներեն և զարգացնել ու զորացնել զայն Աստվածային փրկարար ուժով:

Եթե մարդիկ, ազգեր և անհատներ հավատան այս ճշմարտության, այն ատեն իրենց աղոթքին պատասխանը պիտի ստանան ու Աստուծմե զորություն պիտի ընդունին, պայքարելու համար աշխարհի չարիքներուն դեմ: Այն ատեն պիտի կարենան հաղթահարել ատելության ու չարության ուժերուն և հաստատել բաղձացված խաղաղությունն ու երջանկությունը, համամարդկային եղբայրության և Աստուծո հայրության հավատքով:

*
* *

ԽՈԿՄԱՆ ԱՂՈԹՔԸ (Meditation)

Աղոթքի բարձրագույն կերպը ԽՈԿՈՒՄՆ է, որ խնդրանք չէ, սակայն, զորավոր դարման մըն է կյանքի արտաքնահարդար ապրումին, կամ **արտակյաց** (Extrovert) ընթացքին: Խոկումը երազ է, տեսիլք և ինքնամփոփում, բայց, ո՛չ երազատեսություն, սա տարբերությամբ որ՝ խոկման ատեն մենք աշխարհի ու մեր մասին չենք մտածեր, այլ Աստուծո մասին կխորհինք: Եվ փոխանակ գործածելու մեր երևակայությունը՝ սպանիական դղյակներ շինելու, մեր կամքը կգործածենք որոշումներ տալու, որոնք մեզ ավելի կմոտեցնեն Աստուծո: Խոկումը շատ ավելի բարձր հոգևոր արարք է քան թե պարզ աղոթքը: Ան կընմանի այն մանուկին, որ իր մոր քով կվազե ըսելով.—«Ո՛չ մեկ խոսք պիտի չըսեմ, եթե թողուս որ հոս մնամ ու քեզի նայիմ»: Կամ այն մարդուն, որ ծխական եկեղեցիին մեջ կեցած էր ու կըսեր.—«Ես հոս կմնամ խորանին առջև, Ան (Աստված) ինծի կնայի ու ես անոր»:

Խոկման աղոթքը մեզ կարող կդարձնե մոռնալու դուրսի աշխարհը, ներքին գիտակցությամբ՝ թե Աստուծո ներկայության կգտնվինք: Ան դուռը կփակե աշխարհի առջև որպեսզի **հոգին** ներս մտնե: Աստվածային ճշմարտության լուսարձակը կընդարձնե մեր մտածման վրա, մեր գործերուն ու խոսքերուն վրա, թափանցելով մեր ինքնախաբութենեն ու եսասիրութենեն ներս: Մեզ կկանչե աստվածային արդարության ատենին առջև, որպեսզի կարենանք իրապես մենք զմեզ տեսնել, ինչպես որ ենք, և ո՛չ թե ինչպես որ կկարծենք թե՛ ենք: Անիկա կլուսեցնե եսը, որպեսզի աստվածային սրտի փափաքները լսե: Ան մեզ Աստուծո կամքին կենթարկե, ու մեր կյանքեն կսրբե այն բաները՝ որոնք արգելք կդառնան Աստուծո հետ միության, ու կզորացնե մեր փափաքը, որպեսզի, ինչ բարի գործ որ ընենք, Անոր ի պատիվ և Անոր փառքին համար կատարվի:

Խոկման աղոթքի նպատակը խնդրանք չէ, Աստուծմե բան մը ուզելու համար, այլ, ավելի հանձնվիլ Աստուծո, աղաչանք է առ Աստված, որ Ինքը մեզ գործածե Իր բարի կամքին համաձայն:

Խոկումը երկու աստիճան ունի.—ա. Հրաժարիլ աշխարհիկ փափաքներե, ու բ. Կենդրոնանալ Աստուծո Բնության ու Իր մարդացյալ Որդվույն, Հիսուսի Քրիստոսի վրա:

*
* *

ՄՏԱԾԱԿԱՆ ԱՂՈԹՔԸ (Meditatión) կգործածե հոգեկան երեք ուժեր.—Հիշողություն, իմացականություն և կամեցողություն: Հիշողությամբ մենք կվերհիշենք Աստուծո բարությունը ու մեզի բաշխած բարիքները: Իմացականությամբ՝ մենք կհիշենք Իր աստվածային կյանքը, սերն ու ճշմարտությունը: Կամեցողությամբ՝ մենք կջանանք սիրել զԻնքը ամեն բանե ավելի: Երբ կուսումնասիրենք, Աստուծո մասին տեղյակ կըլլանք, սակայն, երբ **կխոկանք**, մենք գիտակից կդառնանք Աստուծո ներկայության մեր մեջ, և կըմբռնենք մեր բուն էության գոյությունը: Որքան ատեն որ մեր Եսը Աստուծմե հեռու կմնա, մենք ապերջանիկ ենք: Բայց, երբ մեր անձը կձուլվի Աստուծո անձին մեջ, այնպես որ Անոր միտքը, Անոր փափաքները կդառնան մեր փափաքները, Անոր սերը կըլլա մեր սերը.—այն ատեն Եսը ինքզինքը կիրագործե անձնամոռացության մեջ:

Պողոս առաքյալի բառերով.—«Ես խաչ ելա Քրիստոսի հետ, ուստի ես չէ որ կենդանի եմ, այլ Քրիստոս կենդանի է իմ մեջս» (Գաղ. Բ 20):

Խոկման համար հոգիին ականջը ավելի կարևոր է, քան թե լեզուն: Ս. Պողոս մեզի կսորվեցնե թե հավատքը հառաջ կուգա լսելեն: Շատեր կկարծեն թե շատ խոսելով լսելի կդառնան Աստուծո: Մեր Տերը կըզգուշացնե մեզ, ըսելով.—«Երբ աղոթքի կենաք, շատախոս մի՛ ըլլաք հեթանոսներուն նման, որոնք կկարծեն թե երբ շատ խոսին, պիտի լսվին: Մի նմանիք անոնց զի ձեր Հայրը գիտե թե ի՞նչ պետք է ձեզի, դուք դեռ չխնդրած Իրմե: Ուստի դուք աղոթեցեք այսպես.—**«Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի...»:**

Աղոթքը մենախոսություն չէ, այլ՝ խոսակցություն Աստուծո հետ: Միակողմանի ճամբա չէ, այլ երկկողմանի ծառուղի:

Խոկումը ոչ միայն ուրախություն կպատճառե հոգիին, այլ նաև գործնական ազդեցություն ունի մեր հոգևոր կյանքին վրա: Նախ մեզ կբժշկե ինքնախաբության ունակությունեն: Մարդը միակ արարածն է որ ընդունակ է ինքնախաբեության, որովհետև, բանական հոգի մը ունի: Քանի որ հոգին ոգեկան ալ է, ան փափաք ունի անհունին, մենք երբեմն մեր անհունին ծարավը կուզենք հագեցնել աշխարհի ջուրերով, որոնք գրավիչ բան մը ունին մեզի համար, որ կպակսի աստվածային բաներուն մեջ, ու երբ այս ճիգը ժամանակավոր կերպով մեզի հաճույք կպատճառե, կխաբենք ինքզինքնիս: Խոկումը մեզի կարող կընե հայելին բռնելու մեր հոգիին առջև, ըմբռնելու համար ինքնասիրության ճակատագրական հիվանդությունը, Քրիստոսի ճառագայթող լույսին մեջ: Որովհետև խոսքը ինքնախաբության գլխավոր պատճառն է, մեր բարեկամները մեզ կթմրեցնեն շողոքորթությամբ, մեր ներքին ինքնախոսակցության մեծ մասը ինքնարդարացման նոթ մը ունի: Լռությունը, զոր խոկումը կպահանջե, ասոր լավագույն դարմանն է: Ով որ գիշեր ատեն արթուն է, իր մեղքերը ավելի՛ հստակ կտեսնե, քան թե ցերեկ ատեն, որովհետև, գիշերը հոգին ձայներու աղմուկեն ազատ է: Անքնությունը, հետևաբար, ավելի ծանր բեռ մըն է անոնց համար, որոնք մեղավոր խղճմտանք մը ունին, քան թե անմեղներուն, որոնք Սաղմոսերգուին պես՝ կրնան իրենց գիշերային մտածումները Աստուծո բարձրացնել՝ աղոթքով: Այն մարդը, որ իր դրացիին վրա շատ ավելի հանցանքներ կտեսնե, մարդ մըն է որ բնավ իր հոգիին խորը չէ նայած. սակայն, խոկման ատեն մենք զմեզ կճանչնանք, ու կտեսնենք, թե ուրիշներեն ավելի գեշ ենք, կգտնենք թե մեր դրացիներեն մեծ մասը մեզմե լավ են: Մարդը որչափ աղքատ ըլլա՝ այնքան ավելի մեծ հարստություն կերազե, նույնպես, որքան խոնարհ ըլլանք մեր խոկումներուն մեջ, այնքան ավելի բարձր իտեալ մը կունենանք: Ինչպես որ չկա եսասեր մը որ միևնույն ատեն ինքնախաբ մը չըլլա, նույնպես, մեկը որ խոկման վարժություն ունի՝ բնավ խաբկանք չունենար իր մեծության մասին: Որքան որ ավելի հստակ տեսնենք մեր հոգին, Աստուծո հետ հարաբերությամբ, ա՛յնքան նվազ Եսակեդրոն կըլլանք:

Որոշ հարակցություն մը գոյություն ունի զԱստված ճանչնալու և ինքզինքը ճանչնալու միջև: Մինչև որ մենք զմեզ իրապես չճանչնանք, զԱստված չենք կրնար ճանչնալ:

Մարդ մը որքան քիչ մտածե իր մասին, այնքան ավելի կխորհի Աստուծո մասին: Աստուծո մեծությունը, առարկայորեն մեր պզտիկութենեն կախում չունի. սակայն, ենթակայական իրականություն մը կդառնա մեզի համար այն ատեն միայն՝ երբ մենք խոնարհ ենք: Որքան որ մարդիկ ինքզինքնին աստվածացնեն, ա՛յնքան ավելի քիչ պիտի ճանչնան զԱստված: Մեր բարի ըլլալու գիտակցությունը, թե օգնության պետք ունինք, պայման է ճանչնալու բուն իսկ **Բարությունը:**

Խոկումը կազնվացնե մեր վարքն ու բար-

քը: Հաճախ ըսված է թե՝ տարբերություն չըներ թե՝ ինչի՞ կհավատանք, այլ ամեն ինչ կախում ունի թե ինչպես կգործենք: Ասիկա սխալ դատում մըն է: Եթե մեր խորհուրդները գեշ են, մեր գործերն ալ գեշ պիտի ըլլան: Անմաքուր գործերու խնդիրը՝ հիմնապես, անմաքուր խորհուրդներու հարց է: Քաղաքական, ընկերային և տընտեսական անարդարությունները, նախ և առաջ, հոգեկան չարիքներ են, ու միտքին մեջ ծագում կառնեն: Անոնք ընկերային չարիք կդառնան ուժգնությամբը ա՛յն մտածումներուն, որոնք ծնունդ կուտան անոնց:

Աշխարհի մեջ ոչինչ կպատահի, որ նախապես միտքին մեջ տեղի չունենա: Առողջապահությունը չի կրնար բուժել անբարոյականությունը, սակայն, խորհուրդի ակնաղբյուրը եթե մաքուր պահվի, բնավ պետք պիտի չմնա հոգ ընելու թե՝ չար խորհուրդները պիտի ազդեն մարմնին վրա:

Մեր խորհուրդները ծնունդ կուտան մեր փափաքներուն, ու մեր իղձերը արձանագործներն են մեր օրերու: Տիրական իղձը՝ իշխող ճակատագիրն է: Փափաքները կըկազմվին մեր մտածումներուն ու խոկումներուն մեջ, և քանի որ գործը կհետևի իղձերու առաջնորդությանն, ուստի, երբ որ հոգին կողողվի աստվածային խորհուրդներով, նվազ որս պիտի դառնա աշխարհի թելադրություններուն: Ասիկա կավելցնե երջանկությունը, արտաքին պետքերը երբեք չեն հագեցնար կատարելապես, ու անոնց ջնջումը այս կերպով, նվազ անձկալից կդարձնե մեզ: Եթե մարդ մը հարատևորեն խոկա Աստուծո վրա, կատարյալ հեղաշրջում տեղի կունենա իր կենցաղին վրա: Եթե առավոտյան խոկման պահուն՝ հիշե թե, Աստված որքա՜ն խոնարհ **ծառա** եղավ մարդոց, օրվան ընթացքին ուրիշներու վրա տիրող պիտի չըլլա:

Եթե խորհրդածե թե՝ Տերը փրկեց բոլոր մարդիկը, անոնց մեղքերը Իր վրան առնելով, ինքն ալ պիտի ջանա իր դրացիներուն բեռը վերցնել, թեև իր հանցանքը չըլլա այդ, որովհետև, Տիրոջ կրած մեղքերն ալ Իրենը չէին: Եթե իր մտածական աղոթքը կծանրանա Բարեգութ Փրկչին վրա, որ ներեց անոնց որոնք զԻնքը խաչեցին, աղոթողն ալ պիտի ներե անոնց՝ որ իրեն անիրավություն կընեն, որպեսզի ինքն ալ ներման արժանի ըլլա:

Այս խոկումները մեզմե չեն ծնիր, վասնզի մենք անկարող ենք ատոնց, և ոչ ալ աշխարհեն կուգան, որովհետև, անոնք անաշխարհիկ խորհուրդներ են: Անոնք Աստուծմե միայն կուգան:

Խոկումները շատ ավելի խորունկ փոփոխություններ հառաջ կբերեն մեր մեջ, քան թե «Լավ ըլլալու» որոշումները. չար խորհուրդները չենք կրնար հեռացնել միտքեն՝ մինչև որ անոնց տեղ բարի խորհուրդներ չդնենք: Գերբնականն ալ կխորշի պարապութենեն (Vacuum): Խոկման միջոցով մարդ մը մեղքը դուրս չի արտաքսեր իր կյանքեն, այլ անոր տեղ կլեցնե Աստուծո և ընկերոջ սիրովը: Այն ատեն մեր կյանքը կախում պիտի չունենա մեղքեն խույս տալու սկզբունքեն,—ինչ որ շատ հոգնեցուցիչ գործ է—այլ ապրելու միշտ աստվածային սիրո մթնոլորտին մեջ: Խոկումը, մեկ խոսքով կարգիլե պարտությունը հոն ուր անխուսափելի կթվեր: Աստուծո բնական տեղվույն լոությանը մեջ, սխալ փափաքներ չեն կրնար ապրիլ, այլ խույս կուտան: Եթե մենք աղոթենք անկողին երթալե առաջ, գիշերվան մեր վերջին խորհուրդը պիտի ըլլա առավոտյան մեր առաջին մտածումը: Ինչ որ Քրիստոսի անունով նոր օր մը սկսելու ուրախությունը պիտի ըլլա:

*
* *

Իբրև երրորդ պարգև, **Մտածական Աղոթքը** մեզի պատեհություն կընծայե հարաբերությանն մտնելու ույժի և զորությանն նոր ակերու հետ: Հիսուս կհրավիրե մեզ՝ ըսելով.—«Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28):

Ոչ մեկ մարդ ունի բավականաչափ գիտություն և ույժ՝ կյանքի բոլոր դժվարություններուն և փորձանքներուն մեջեն անցնելու համար: Մենք կկարծենք թե բավական շատ իմաստություն ունինք, երբ ուրիշներուն խրատ կուտանք, սակայն, այն ատեն կտրվինք թե չունինք, երբ մենք ստիպվինք ապրիլ մեր իմացական յուղովը միայն: Երբ մեր հոգեկան մարտկոցները (battery) պարտվին, մենք չենք կրնար զանոնք վերստին լեցնել՝ մեզմով: Եվ որքան ավելի գործունա ույա կյանք մը, այնքան ավելի պետք կա կենսավորելու անոր գործերը՝ խոկման աղոթքով: Սակայն, յուրաքանչյուր խոկում պետք է անձնավորվի և խորհուրդի սահմանեն՝ վերածվի դասի մը զոր մենք կարենանք անձամբ գործադրել: Ոչ մեկ մարդ ավելի լավ է, որովհետև, գիտե Աստուծո գոյության հինգ ապացույցները, սակայն, ավելի լավ կդառնա երբ այդ գիտությունը կրնա եղափոխել իր կյանքը: Հետևաբար, սրտի մաքրությունը աղոթքի պայման է: Մենք չենք կրնար Աստուծո հետ մտերիմ ըլլալ, որքան ատեն որ ապօրինի հարաբերությանց կապված ենք: Մաքրությունը քառյակ պետք է ըլլա: —**Խղճմտանքի մաքրություն,**—որպեսզի

բնավ չվշտացնենք զԱստված. **Սրտի սըրբություն.**—որպեսզի մեր բոլոր սերը վերապահենք Աստուծո, **Միտքի սրբություն.**—որպեսզի շարունակական գիտակցություն սպահենք Աստուծո հանդեպ և **Գործի մաքրություն.**—որպեսզի մեր փափաքները անանձնասեր պահենք և թողունք մեր եսասեր կամքը:

Ամեն լավ խոկումի մեջ վայրկյան մը կա, երբ **Աստուծո կյանքը** մուտք կգործե մեր կյանքեն ներս և ուրիշ վայրկյան մը, երբ մեր կյանքը մուտք կգործե Աստուծո կյանքին մեջ: Այս դեպքերը մեզ ամբողջովին կփոխակերպեն: Հիվանդ, ջղային, աճապեկած մարդիկ կլավանան, արարածի ընդ Արարչի այս հաղորդակցությամբ. այնպես թույլ տալով որ Աստված մուտք գործե իրենց հոգիներեն ներս:

Անվանի հոգեբույժ մը, տքթ. Ճ. Տ. Հատֆիլդ ըսած է թե.—«Ես փորձեցի բուժել ջղային հիվանդ մը, վստահության և խաղաղության թելադրություններով, սակայն, առանց հաջողության, մինչև որ այս թելադրությունները չշղթայեցի ա՛յն հավատքին հետ, որ կա Աստուծո զորության մեջ, ինչ որ քրիստոնյաներու վստահության և հույսի էությունն է: Այն ատեն միայն հիվանդը առողջացավ»:

Բնավ ճշմարիտ չէ ըսել թե ժամանակ չունինք աղոթելու, մարդ որքան քիչ մտածե Աստուծո մասին, այնքան ավելի քիչ ժամանակ պիտի ունենա Անոր համար: Ժամանակը զոր կտրամադրենք որևէ բանի՝ կախում ունի անոր մեր տված արժեքեն: Մտածումը կորոշե ժամանակի գործածությունը: Ժամանակը չի՛ իշխեր մեր խորհուրդներուն վրա: Հոգևոր կյանքի հարցը, բնա՛վ ժամանակի հարց չէ, այլ մտածումի հարց: Որովհետև, շատ ժամանակ չի պահանջվիր մեզ սուրբեր ընելու, այլ շատ սեր կպահանջվի միայն:

Աղոթքի շնորհիվ հոգին ընկալուչ կդառնա Աստուծո սիրույն և զորության:

Աղոթքը հոգիին կյանքն է: Եթե կուզես, որ հոգիդ ապրի կենսունակ ու գործե մըշտապես և արդյունավորապես, կերակրե՛ զայն աղոթքի Աստվածային սնունդովը:





ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ

Ս. ՊԱՏԱՐԱԳԸ՝ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՈՐ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ

1. Եկեղեցի, պատարագ և թագավորություն:

Թեև քով քովի եկած ենք Եկեղեցին հասկնալու տարբեր ավանդություններե և պատարագը մատուցանելու տարբեր սովորություններե, սակայն կարող ենք գտնել միության ընդարձակ գետին մը, երբ կը-քննարկենք տվյալ նյութը: Պատճառն այն է, որ երեք բառերը կբացահայտեն ներկայությունը միակ Աստուծո՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Եկեղեցին մարմինն է Քրիստոսի. ամբողջությունը մարդերու, որոնք, պատմության ընթացքին, մղվեցան Սուրբ Հոգիեն իրագործելու համար Քրիստոսի առաքելությունը մարդկային կյանքի զանազանության մեջ: Հավատացյալներու համայնքին կեդրոնն է ս. պատարագը, շնորհակալության հրապարակային արտահայտությունը Աստուծո պարգևին ի Քրիստոս և աշակերտներու մասնակցության Քրիստոսի կյանքին իսկ: Ս. պատարագը նախաճաշակն է Աստուծո արքայության, որ կբարոզե Անոր մահը, մինչև որ գա դարձյալ մյուս անգամ: Ան հիշատակումն է (Amnesis) Աստուծո միջամտության պատմության ընթացքին մեջ, ներկա փորձառություն մը հարուցյալ Տիրոջ և նախակատարումը մեծ ճաշկերույթին երբ, ի վերջո, Աստված է ամենայն համենայնի: Մենք կապրինք «միջանկյալ» միջոցին մեջ, այնպես որ մեր պաշտամունքը կտոնակատարե Քրիստոսի գալուստով իրականացած աստվածային միջամտությունը պատմության և կատարումը փրկագործ իր տնօրինության ի վերջնումն (Ա Կրթ. Բ 24—26, Մրկ. ԻԴ 25): Քրիստոսի ներկայությունը Ս. Հոգիի միջամտությամբ, նույնպես կը-սահմանե թագավորությունը: Հոն ուր թագավորը կբուժե, կվերանորոգե և կներե, հոն ուր հնազանդ ենք գթության և սրբության իր խոսքին, հոն թագավորությունը կա արդեն մեր մեջ: Այս երկրի վրա, Եկեղեցին չունի նախապատմություն թագավորության մեջ, նախաթոռություն չունի ան մեծ հացկերույթին: Եկեղեցին կապրի Աստուծո գթասրտությամբ իբրև նշան, հաճախ անորոշ շփոթ նշան Աստուծո փառավոր ներկայության: Եկեղեցիին համար, ուրեմն ս. պատարագը մնայուն վերհիշեցումն է Քրիստոսով տրված աստվածային շնորհքին, որ վեր է մեզմե, որ հավիտենական է, բայց որուն մասնակցելու հրավիրված ենք, սիրո հրաշքին շնորհիվ: Երկրի վրա, ս. պատարագով, Եկեղեցին կնույնանա երկնային Եկեղեցիին, որ արդեն իսկ կօրհնե զԱստված իր ներկայության (Մրկ. Ժ 35—37, Եփս. Գ 8—12, Հյտ. Է 9—15):

2. Բան և խորհուրդ:

Երբ կխոսինք պաշտամունքի մասին և մեր հասկացողության մասին թե ո՞րն է անոր կեդրոնական մասը, կանդրադառնանք տարբեր շեշտավորումներու, սակայն կհավատանք թե կա աճող «էկումենիկ»

համաձայնություն մը: Կգնահատենք Հավատքի և Կարգի հրատարակություններուն, Մկրտության, Պատարագի և Եկեղեցական Կարգի մասին, որոնք կօգնեն տեսնելու աճող մեր միությունը: Կուզենք շեշտել սրբագործող արժեքը արտասանված խոսքին, քանի որ քարոզի ոյժով, կխնդրենք Ս. Հոգիեն որ հում մեր բառերը և մտածումները վերածե ներշնչող և սիրով զեղուն արտահայտություններու դպչելու չափ մեր ունկընդիրներու սիրտերը: Պետք է ընդունիլ Ս. Հաղորդությունը իբրև Աստուծո խոսքը, որ կպատգամե վերանորոգված թարմությամբ ամեն օր՝ զոհաբերության և հաղթանակի մասին: Կհավատանք թե՝ երբ մեր Եկեղեցիները միացյալ պահեն քրիստոնեական իրարօգնության երկու այս երեսները, կրնանք զգուշանալ չափազանցված վերացական քարոզխոսության որոշ ավանդություններե կամ չափազանցված արարողապաշտութենե մը, անոնց մոտ որոնք շեշտը կդնեն ս. պատարագի մատուցման ձևին վրա:

3. Միություն Քրիստոսի հետ՝ իր առաքելության մեջ:

«Երբ բաժնեց բեկանված հացը և թափված գինին, Հիսուս տվավ իր աշակերտներուն նշան մը ցույց տվող թե անոնք մաս ունին տակավին իր իսկ կոչումին մեջ՝ ըլլալու Մարդու Որդի» (John V. Taylor): Անոնք ծարավի էին բաժնելու իրավունքները հուսացյալ արքայութենեն ներս: Սակայն չէին կրնար տառապանքի ճանապարհը որ հայտնի էր Հիսուսի, իբրև մկրտություն և բաժակ: Այսպես, Հիսուս մինակ գնաց խաչին: Սակայն, մատնության գիշերն իսկ, երբ հեկեկանքն ու հուսալքումը տիրական էին, Ան ընծայեց այդ ուտելիքը որպեսզի աշակերտները գիտնան թե մեկ են իրեն հետ: Կգտնենք հոգևարքները բազում են և չկան դյուրին պողոտաներ խաղաղության տանող:

Մատնության գիշերին, Հիսուս կհրավիրե մեզ բաժնելու հացն ու գինին, որպեսզի միանանք իրեն, զոհաբերող սիրով: «Եկեղեցիին ծառայության կերպը» (koinonia) առավել կամ նվազ չէ քան մասնակցիլ տառացիորեն Քրիստոսի չարչարանքին և հարության, հավասարակշռություն մը ստեղծելու համար դրված տառապանքին՝ կարենալ բանալու համար ուրիշներուն առջև թագավորության դուռը (John V. Taylor): Մաս ըլլալ Քրիստոսի մարմինին Ս. Հոգիի ներգործությամբ արքայության գերագույն օրհնությունն է և միակ կոչանը առաքելական մեր գործունեության այս աշխարհի վրա (Բ Կրթ. Ա 7, Ա Պտր. Դ 13, Կղս. Ա 24, Գղտ. Գ 27—28):

4. Միություն Աստուծո ժողովուրդին հետ, կատարելու համար Քրիստոսի առաքելությունը:

Հաղորդվիլ Աստուծո Քրիստոսով և համայնք ըլլալ իբրև ժողովուրդ Աստուծո, միակ խորհրդակատարումին երկու երեսներն են: Բայց հաճախ, հաղորդություն ստացող հավատացյալը առանձին կերթա սեղանին, թեև շրջապատված ուրիշներով: Հավատացյալներու խումբ մը անպայմանորեն համայնք չէ՛: Կրնա ան գումարում ըլլալ անջատ անձերու, կեդրոնացած ներքին կյանքով մը և Տիրոջմեն ստացված անձնական պատգամի մը խոսքի մը ոյժով: Վտանգ մըն է այս մեծ համայնքներուն մեջ հատկապես: Ան կտկարացնե մեր վկայաբերումը, որովհետև կրնա տանիլ անհատական նախաձեռնություններու, փոխանակ կեդրոնացնելու մեզ հավաքական գործունեության մը մեջ: Կհուսանք թե Եկեղեցիները հաճախ պիտի վերաքննեն համայնքային իրենց կյանքին բնույթը:

Նշմարած են տարբերություն մը, նույնիսկ անջատում մը քրիստոնյաներու միջև, որոնք ընկերային աշխույժ ծառայության նվիրված են Քրիստոսի անունով և ուրիշներ, որոնք կնվիրվին աղոթքի, ուսումի և խորհրդակատարության: Նվիրումի երկու կերպերն ալ, որքան շնորհաբեր՝ նույնքան ալ տկար և տգեղցած են այսպիսի բաժանումի մը հետևանքով: Ընկերային ծառայությունը կրնա անհամբեր գործունեություն մը անորոշ իտեալներե թելադրված: Խորհրդակատարումը կրնա անհատական շնորհազարդումի մը վերածվիլ, եթե չընկերանա անոր գործնական մտահոգություն՝ ուրիշներուն նկատմամբ: Կհավատանք թե Քրիստոսի աշակերտության երկու կերպերը պետք է միանան քրիստոնեական կյանքեն ներս: Հավաքել և բաժնել, ընդունիլ և տալ, պաշտել և աշխատիլ, աղոթել և պայքարիլ, այս է կշռույթը քրիստոնեական բաժնեկցության այս երկրի վրա:

Մենք կապրինք բաժանումներու աշխարհի մը մեջ և շատ դյուրավ վարժությունը առինք բաժանումներուն Եկեղեցիեն ներս: Մեծագույն գայթակղությունն է որ Տիրոջ Սեղանը կտրատված է: Անմիաբանության պատմական բազմաթիվ պատճառներ կան: Մինչև այսօր, շատ դժվար ճիգ մըն է հարկավոր բերելու համար բոլոր քրիստոնյաները մեկ ընտանիքի մը միակ սեղանին բաժնելու համար նույն հացը և ըմպելու համար նույն բաժակեն: Առաքելական մեր վկայաբերության տկարացումն է այս և ա-

նոր արմատը պետք է փնտռել մեր անհնազանդության մեջ: Եթե Քրիստոս կհրավիրե իր ժողովուրդը իր խնջույքին, ինչպե՞ս կրնանք խուսաբիլ պաշտելե զինք լման հաղորդությամբ բոլոր անոնց հետ որոնք կսիրեն զինք և իրն են առհավետ:

Կոչ կընենք մեր Եկեղեցիներուն, որ շարունակեն հետամուտ ըլլալ միության, որով պիտի հայտնվի Քրիստոսի արքայությունը:

5. **Հաղորդություն՝ հայ ուխտավորաց:**

Ժամանակներ և տեղեր կան, ուր միասին մատուցումը ս. պատարագին կրնա հրապարակային վկայաբերում մը ըլլալ: Որոշ երկիրներու մեջ, քրիստոնյաներ կընրնան հալածվիլ, նույնիսկ պատժվիլ, երբ մասնակցին պաշտամունքի: Կլսենք թե ոմանք կհավաքվին ի գին մեծ վտանգի. ասոնց քաջությունը քարոզ մըն է իրենց շուրջիններուն թե որքան թանկագին է պատարագի խորհրդակատարությունը: Այլ կացություններու մեջ, ս. պատարագը կրնա մատուցվիլ բացօդյա, որպեսզի շատեր տեսնեն: Ուրախ արարողություն մը կրնա նոր հույս տալ շնական և աշխարհին դարձած ընկերություններու: Աստուծո Սեղանին կա աստվածային տեսիլք մը որ մարդկային սիրտը կտանի Տիրոջ:

Հաղորդության փորձառությունը Եկեղեցվո շրջանակին մեջ է առավելապես: Ան կյանք կուտա քրիստոնյաներուն, որպեսզի վերածվին Քրիստոսի պատկերին և ըլլան արդյունավոր վկաները Անոր: Ս. Հարության տոնին (ուղղափառ Եկեղեցիներուն մեջ, օրինակ), երբ մոմի լույսը կբաժնվի պատարագիչեն բոլորին և անոնց ձեռքով՝ ամեն տունի, այդ վկայաբերումը կըլլա ավելի բացահայտ:

Որպեսզի քաջալերվի աճումի այս ընթացքը, կթելադրենք որ խորհրդակատարության միջոցավ, ս. պատարագը պատգամ մը բերե յուրաքանչյուրիս վիճակին: Յուրաքանչյուր եկեղեցական և յուրաքանչյուր համայնք պետք է փնտռի այսպիսի ճամբի մը, հասկացողություն մը: Մենք որոշ թելադրանքներ կրնանք առաջարկել.

— Երբ ժողովուրդ մը ճնշումի տակ կտառապի, ս. պատարագը կխոսի փրկության և ազատագրության մասին:

— Երբ քրիստոնյաներ կարտաքսվին և կբանտարկվին իրենց հավատքին համար, հացն ու գինին կներկայանան իբրև Տիրոջ կյանքը, որ մերժվեցավ մարդոց կողմե բայց եղավ «գլուխ անկյան»:

— Երբ Եկեղեցիի մը անդամակցությունը կպակսի և նյութականը կտկարանա, ս. պատարագը կհայտարարե թե Աստուծո առատաձեռնությունը չափ չունի և մեր հույսը իր վրա պետք չէ վերջ մը ունենա:

— Երբ համայնքի մը կյանքին կսպառնա ցեղային կամ դասակարգային խտրականության վտանգը, ս. պատարագն է որ կարելի կընե ամեն տեսակի մարդոց բաժին ստանալու նույն սնունդեն և ըլլալու մեկ ժողովուրդ:

— Երբ մարդիկ ազդեցիկ են և փարթամ կյանք ունին, ս. պատարագը կըսե անոնց. «Ինչպես Հիսուս իր կյանքին բաժնեկից ըրավ մեզ, նույնպես ըրե անոթիին հետ»:

— Երբ համայնք մը կոգիացած է քաղաքական, պատերազմական կամ աշխարհագրական պատճառներով, հաղորդությունը կմիացնե մեզ ամեն տեղի և տարիքի Աստուծո ժողովուրդին հետ:

— Երբ քույր մը կամ եղբայր մը մոտ են մահվան, հաղորդությունը դուռ մըն է մեզ սիրող Հոր թագավորության վրա բացված:

Այսպիսի ուղիներով Աստված կսնուցանե իր ժողովուրդը երբ կմատուցվի պատարագի խորհուրդը որպեսզի խոստովանին բանիվ և գործով թե Հիսուս Քրիստոս է Տերը, ի փառս Հոր Աստուծո:





ՍՈՒՐԲ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ

Քո մութ խուցի մեջ՝ Նարեկա վանքի,
Քեզ ինչպե՞ս գտավ վիշտը աշխարհքի,
Սրտաչափ խուցդ ինչպե՞ս տեղ արեց
Իր մեջ առնելով տիեզերքը մեծ:

Իսկ քեզ Ո՞վ ծնեց, մա՞ղդը, թե Աստված,
Թե՞ տառապանքը դարերում ծնված,
Մարդկային մտքի երկունքն էր գուցե,
Որ եկավ, իջավ Նարեկիդ խուցը...

Քո արմատները ծովում են Վանա,
Բայց քո ճյուղերը աշխարհքի վրա,
Մարդկանց սրտերում, այս արևի տակ
Փարթամանում են, ապրում անխորտակ...

Քո սիրտը մնաց թեև Նարեկում,
Կտակդ սակայն՝ արար աշխարհքում,
Իսկ հոգիդ կապրի որպես մի արեգ,
Ով դու մեծասքանչ, սրբազան Նարեկ...

Եվ քո լույսերը՝ սերմեր շողակաթ,
Մեր մութ ճամփեքի քարերը ագաթ,
Տարանք մեր հոգում և ուսերին մերկ,
Որպես հավատքի և ինքնության երգ:

Ով մեծ վարդապետ, ոգին Նարեկան,
Ով սրբազան հայր հազար տարեկան,
Դու հազար տարվա երազանք և հույս,
Դու հազար տարվա տառապած մեր լույս,

Ով Նարեկացի, ով դու սուրբ Նարեկ,
Դու որ վառվում ես որպես լույս, արեգ,
Աշխարհք ես եկել հավերժ ապրելու,
Երկնելու համար և ապրեցնելու...

Հայ մեծ վարդապետ վարդապետների,
Հայր սուրբ, խնդրում եմ, թշվառիս ներիր,
Ընդունիր առ քեզ փոքրիկ, աննշան
Զոներգ-աղոթքս՝ ծնրադիր, խոնարհ...

ՎԱՀԱԳՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ





ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵԼԻ ՍՐԲԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 1-ին

ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵ

Հին Կտակարանի նշանավոր սրբերից մեկն է, չափազանց նախանձահույզ, համարձակախոս և արդարության պաշտպան: Եղիայի անձը բնորոշվում է որպես «Կրակե մարգարե»:

Փյունիկեցի կռապաշտ Հեզաբելը երբ ամուսնանում է Իսրայելի թագավոր Աքաաբի հետ, իր հետ Իսրայել է բերում իր երկրի աստվածներին և քուրմերին: Ողջ երկիրը ողողվում է կռապաշտներով: Աստուծո հրամանով Եղիան ներկայանում է Աքաաբին և, որպես պատիժ, կանխատեսում՝ երեք տարվա երաշտ:

Եղիան և Բահաղի քուրմերը իրենց հավատքի ճշմարտությունը հաստատելու համար պայմանավորվում են Հայֆայի մոտ, Կարմեղոս լեռան վրա, զոհ մատուցել: Զոհի սեղանները արդեն պատրաստ են: Բահաղի քուրմերը իրենց բոլոր ձայնով օգնության են կանչում իրենց կուռքերին, որոնք, սակայն, լուռ են մնում:

Իսկ Եղիան իր հավատքի ուժով երկնքից կրակ է իջեցնում իր զոհասեղանի վրա: Բոլոր ժողովուրդը միաբերան աղաղակում են այս հրաշքի առաջ. «Արդարև Տերն է ճշմարիտ Աստվածը»:

Հաղթանակում է ճշմարիտ Աստուծո հավատքը: Եղիան Աստուծո հրամանով երկնային կառքով տարվում է երկինք:

Հունիսի 2-ին, 8-ին և 10-ին

ՀՌԻՓՍԻՄՅԱՆ, ԳԱՅԱՆՅԱՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՈՒ ՄԱՆՆԵ ԿՈՒՅՍԵՐ

Հռոմում Դիոկղետիանոս կայսեր օրոք ապրում էին քրիստոնյա երեսներեք ընկերներ և Գայանեն՝ երկու ընկերներով:

Կայսրը ցանկանում է իրեն կնության առնել հրաշագեղ Հռիփսիմեին: Գայանեն՝ նշված կույսերի մայրապետը, տեղեկանալով այս մասին, փախցնում է նրանց բոլորին դեպի արևելք: Երկար թափառումներից հետո փախստականները գալիս են Հայաստան և հանգրվանում Վաղարշապատի մոտ գտնվող Հնձանքում:

Ս. Հռիփսիմյան կույսերի մասին այս բոլոր տեղեկությունները հիմնված են օտար ավանդության վրա:

Ըստ ազգային ավանդության, իմանալով կույսերի՝ Հայաստան գալու մասին, հայոց Տրդատ թագավորը ցանկանում է ծանոթանալ Հռիփսիմեի հետ: Վերջինս կտրականապես մերժում է հայոց արքայի ամուսնության առաջարկը: Թագավորը դիմում է Գայանեի օգնությանը, բայց վերջինս գործում է ընդդեմ թագավորի և հորդորում Հռիփսիմեին՝ չգնալ կնության թագավորին:

Այս բանի համար Թագավորի հրամանով Գայանեն նահատակվում է: Նահատակվում է նաև Հռիփսիմեն:

Հաջորդ օրն իսկ նույնպիսի ճակատագրի են արժանանում նաև Գայանյանները: Ինն օր հետո Ս. Գրիգոր Լուսավորիչը հա-

վաքել է տալիս նրանց մասունքները և երեք վկայարաններ կառուցում նրանց վրա:

618 թվականին Կոմիտաս կաթողիկոսը այս սուրբ կույսերի հիշատակին կառուցում է Ս. Հռիփսիմյանց տաճարը և գրում «Անձինք նուիրեալք» աքանչելի շարականը:

Այս նահատակ կույսերի շարքին են դասվում նաև Նունեն և Մանեն: Կույսերի նահատակությունից հետո հրաշքով ազատված **Նունեն** գալիս է Վրաստան և նվիրվում ավետարանչական գործին: Նա դարձի է բերում վրաց արքունիքը: Նունեն համարվում է Վրաստանի առաքելուհի:

Մանեն ևս Հռիփսիմյանց կույսերից էր: Նա Դարանաղյաց Սեպուհ լեռան վրա ճգնավորական կյանք է վարում:

Ըստ ավանդության, տարիներ հետո այստեղ է գալիս Ս. Գրիգոր Լուսավորիչը և ձայնում նրան: Մանեն ձայնում և խնդրում է երեք օր ևս սպասել: Երեք օր հետո Ս. Լուսավորիչը մեռած է գտնում և աղոթքով ու օրհնությամբ թաղում կույսին և այնտեղ էլ ինքը ճգնում մինչև իր կյանքի վերջը, 325 թվականը:

Հունիսի 5-ին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ

Հովհաննես Մկրտչի մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1977 թ., № Է, էջ 20:

ԱԹԱՆԱԳԻՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Եղբայրն էր Ս. Գրիգոր Լուսավորչի տիկնոջ՝ Մարիամի: Բնակվում էր Սեբաստիայում, Դիոկղետիանոս կայսեր օրոք: Ամուսնացած էր և ուներ զավակներ: Մանուկ հասակից սրբության շնորհք ցուցաբերելով, որդեգրվում է Սեբաստիայի եպիսկոպոսի կողմից և հետագայում ձեռնադրվում քահանա: Գնում է նվիրվելու բարբարոսների մոտ գտնվող գերիներին ազատելու գործին:

Երբ սաստկանում են հալածանքները քրիստոնյաների նկատմամբ, Աթանագինեսն այցելում է բանտարկյալներին և քաջալերում նրանց:

Երբ հաստատվում է քրիստոնյա լինելը, Աթանագինեսին ձգում են կրակի մեջ և նահատակում: Ս. Գրիգոր Լուսավորիչը Աթանագինեսի մարմինը իբրև մասունք ստանում է Կեսարիայի Ղևոնդիոս հայրապետից և ամփոփում Տարոնի Ս. Կարապետ վանքում, Հովհաննես Մկրտչի նշխարների հետ:

Հունիսի 9-ին

ԲԵԹՂԵՀԵՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Սրանք առաջին անմեղ նահատակներն էին, որոնք իրենց արյունը թափեցին Քրիստոսի համար և, անգիտակից իրենց արյան հեղմանը, փրկեցին Աստուծո Որդուն ստույգ մահից:

Հրեաստանի Հերովդես թագավորը երբ տեղեկանում է մոգերից, թե «Հրեից արքա» է ծնվել, հրամայում է նրանց. «Գնացեք և ստույգ իմացեք նորածին մանկան մասին և ապա ինձ էլ լուր տվեք, որպեսզի ես էլ գամ ու երկրպագեմ նրան»:

Մոգերը Աստուծո հրամանով չեն վերադառնում: Զայրացած Հերովդեսը հրամայում է Բեթղեհեմի և շրջակայքի երկու տարեկանից ցած բոլոր փոքրերին սրի քաշել՝ խորհելով, որ նրանց մեջ պիտի մեռներ նաև «Հրեից արքան»:

Եկեղեցին երախտագիտությամբ կատարում է հիշատակը նահատակ մանուկների:

ԱԿԱԿԻՈՍ ՎԿԱ

Հայսմավուրքի մեջ հիշատակվում է Ակակիոսը, որը «Մանուկ էր հասակաւ» և ապրել է Լիկիանոս կայսեր օրոք: Նա ենթարկվում է բազմաթիվ չարչարանքների: Նրան նետում են ձեթով և ճարպով տաքացրած կաթսայի մեջ: Ապա տարվում է մեհյան և դատապարտվում՝ զոհ մատուցելու կուռքերին, որոնք կործանվում են Ակակիոսի աղոթքով: Նետվում է գիշատիչ գազանների մոտ, որտեղից անվնաս դուրս է գալիս:

Այս բոլոր չարչարանքներից հետո անգամ Ակակիոսը հաստատուն է մնում իր հավատքի վրա, որի համար էլ 310 թվականին գլխատվում է:

ՄՈՎԿԻՄՈՍ ՔԱՀԱՆԱ

Ծագումով՝ բյուզանդացի: Որդին էր հռոմեացի քրիստոնյա բարձրաստիճան զինվորական Եվփրատեսի և բարեպաշտ Եվստաթիայի: Ծնողները հենց վաղ մանկությունից Մովկիմոսին դաստիարակում են քրիստոնեական ոգով: Մովկիմոսը հետագայում ձեռնադրվում է քահանա Մակեդոնիայի գավառի Ամփիպոլիս քաղաքի եկեղեցու վրա:

Դիոկղետիանոս կայսեր հալածանքների ժամանակ Մովկիմոսը ամենուր քարոզում է ճշմարիտ հավատքը: Այս բանի համար ենթարկվում է բազմաթիվ չարչարանքների: Եվ յուրաքանչյուր փորձություն ավելի էր

ամրապնդում ու զորացնում նրա հավատքը: Մեհյան մտնելով հրապարակավ անարգում է կուռքերը, որի համար նրան նետում են խարույկի մեջ, որտեղ ողջ է մնում: Ապա նրան ձգում են կրկես, սակայն գազանների ճիրաններից նույնպես անվնաս է մնում:

Բազում այլ չարչարանքներից հետո Մովկիմոսն ուղարկվում է Բյուզանդիա, որտեղ Բարձրագույն ատյանի կողմից դատապարտվում է գլխատման:

ԿՈԴՐԱՏԻՈՍ

Նիկոմեդիա քաղաքից էր: Դեկոսի հալածանքների ժամանակ մի շարք երիտասարդների հետ հանվում է դատական ատյան, որտեղ նա դատապարտում է հեթանոսական կրոնի ստությունը:

Կոդրատիոսը հրաժարվում է կուռքերին զոհ մատուցելուց՝ ասելով. «Մանկությունից եղել եմ քրիստոնյա և իմ Տեր Հիսուս Քրիստոսից բացի ուրիշ Աստված չեմ ճանաչել ու չեմ ճանաչում»:

257 թվականին գլխատումով ստանում է իր նահատակությունը:

Հունիսի 12-ին

ՍԱՀԱԿ ԵՎ ՀՈՎՍԵՓ ԿԱՐՆԵՑԻՆԵՐ

Վկայաբանության մեջ հիշատակված հագարացի իշխանազուն Կայսի զավակներն են: Կայսը Կարինում ամուսնանում է մի քրիստոնյա կնոջ հետ և ունենում երեք զավակներ՝ Սահակ, Հովսեփ, իսկ երրորդի անունը հիշատակված չէ: Մինչ Հովսեփի ամուսնանալը սրանք ապրում են խաղաղ կյանքով: Սակայն Հովսեփի ամուսնությունից հետո հայտնի է դառնում նրանց՝ իսլամ հոր զավակներ լինելը: Նրանց ստիպում են ընդունելու իսլամ կրոնը: Փրկելու համար իր որդիներին, հայրը հորդորում է կեղծ ուրացություն ընդունել: Հակառակ հոր, տղաները մնում են հավատարիմ իրենց կրոնի մեջ: 808 թվականի հոկտեմբերի 19-ին երկուսն էլ գլխատվում են:

ՍԱՐԳԻՍ ԵՎ ԲԱԳՈՍ

Երկուսն էլ ազնվական, բարձրաստիճան պաշտոնակալներ էին արքունիքում կամ բանակում:

Հրաժարվելով ներկա լինել կռապաշտական մի արարողության, Սարգիսը և Բագոսը կանչվում են կայսեր մոտ խոստովանության: Երկուսն էլ հաստատում են իրենց քրիստոնյա լինելը: Կայսեր բազմաթիվ հորդորները՝ թողնելու քրիստոնեությունը, անցնում են ապարդյուն:

Այնուհետև կայսեր հրամանով այս երկու սրբերը ենթարկվում են բազմաթիվ լլկանքների, որոնց չդիմանալով՝ մեռնում է Բագոսը, իսկ Սարգիսը կիսամեռ նետվում է բանտ: 300 թվականին Հյուսիսային Սիրիայում գլխատվում է:

Հունիսի 14-ին

ՆԵՐՍԵՍ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏ

Ներսեսը որդին էր Աթանագինեի: Ներսեսը վաղ հասակից սկսած փայլեցրել է Լուսավորչի Տան քրիստոնեական և ազգային շնորհները: Հակաթոռ Փառենի և Ճահակի կաթողիկոսական անշուք շրջանից հետո բոլորի հայացքն ուղղվում է Լուսավորչի տոհմին: Այդ շրջանում Ներսեսը սենեկապետ էր Արշակ թագավորի մոտ: Վերջինիս ստիպումով է, որ Ներսեսը, Կեսարիա գնալով, ձեռնադրվում է կաթողիկոս:

Ներսեսի հայրապետական գործունեության մեջ ամենանշանակալին է 354 թվականին Աշտիշատում գումարած ժողովը, որտեղ սահմանվեցին կանոններ ընտանեկան կյանքի սրբության, հանրային կյանքի բարելավման, բարեգործական և վանական կազմակերպությունների հաստատման: Նա համարվում է Հայոց աշխարհի Ս. Բարսեղը և սրտերի լուսավորիչ:

Ներսես Մեծը վախճանվել է հավանաբար 373 թվականին, ըստ ոմանց՝ թունավորումով:

ԽԱԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Եղել է կաթողիկոսական տեղապահ Մեծն Ներսեսից հետո, որի օրոք կաթողիկոսի անմիջական հետևողն էր և գործակիցը, որպես սարկավագ, Դ դարում Հայաստանում կրթական-բարեգործական հաստատությունների ստեղծման գործում:

Ներսես Մեծը Խադ սարկավագին ձեռնադրում է եպիսկոպոս և նշանակում՝ իր հաստատած հիվանդանոցների ու աղքատների խնամակալության տեսուչ:

Խադ եպիսկոպոսն էլ Մեծն Ներսեսի նման աներկյուղ քննադատում է Արշակ թագավորին՝ նրա սխալների ու սայթաքումների համար: Ի վերջո Արշակ Բ-ի հրամանով քարկոծվելով նահատակվում է:

Հունիսի 16-ին

ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ

Եպիփան Կիպրացու մասին կխոսվի Եկեղեցու **Երկոտասան Վարդապետացն** տոնի առթիվ:

ԲԱԲԵԼԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՎ ԻՐ ԵՐԵՔ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Բաբելասը Անտիոքի հայրապետն էր: Անտիոքում գտնված ժամանակ կայսրն այցելում է քաղաքի մեհյանները և կուռքերին զոհ մատուցում: Ապա ցանկանում է մտնել Աստուծո եկեղեցին՝ արհամարհելու քրիստոնեական սուրբ պաշտամունքը: Այս բանին տեղեկանալով, հավատացյալները խուճապի են մատնվում: Սակայն Բաբելասը հանդարտեցնում է ժողովրդին և արգելում կայսեր մուտքը եկեղեցի՝ ասելով նրան. «Արժանի չես պիղծ ձեռքերովդ, որոնք շաղախված են կուռքերի զոհի արյունով, Աստուծո եկեղեցի մտնելու»:

Այս բանից զայրացած, կայսեր հրամանով Բաբելասը շղթայակապ նետվում է բանտ: Բանտում նրան են այցելում իր երեք աշակերտները, որոնք չէին ցանկանում բաժանվել իրենց հոգևոր դաստիարակից:

Կայսրը բանտից հանել է տալիս Բաբելասին և ստիպում կուռքերին զոհ մատուցել, որից կտրականապես հրաժարվում է Բաբելասը:

Այնուհետև բոլոր ձերբակալվածները ենթարկվում են անլուր տանջանքների և ի վերջո նահատակվում գլխատմամբ:

Հունիսի 17-ին

ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ՄԵԾ ԿԱՅՍՐ

Ծնվել է 274/5 թվականին ներկայիս Հարավսլավիայի Նիշ քաղաքում: Զավակն էր հայտնի զորավար Կոստանդիոսի (հետագայում՝ հռչակավոր Կեսար) և խոնարհ ծագումով ու բացառիկ կարողության տեր Հելենեի:

Առաջին իսկ օրից Կոստանդիանոս կայսրը հովանավորել է Քրիստոնեական Եկեղեցին և գրեթե պետական կրոնի աստիճանի բարձրացրել այն: Նրա օրոք էր, որ 325 թվականին գումարվեց Նիկիայի Տիեզերական ժողովը, որտեղ դատապարտվեց արիոսական աղանդը:

Կոստանդիանոսը կառուցել է տալիս Երուսաղեմում մի շարք եկեղեցիներ, այդ թվում և՝ Բեթղեհեմի Այրին և Ձիթենյաց լեռան հոյակապ տաճարները:

Կայսրը քրիստոնյա է մկրտվում միայն մահվան անկողնում, 337-ին:

Հունիսի 19-ին

ԹԵՈԴԻՏՈՆ ՎԿԱ ԵՎ ՅՈԹ ԿՈՒՅՍ ՎԿԱՅՈՒՀԻՆԵՐ

Գաղատիայի Անկյուրիա քաղաքից: Զբաղվում էր գինեվաճառությամբ: Իր զբաղմունքը նպաստավոր էր հենց այն բանում, որ երբ 303 թվականին Դիոկղետիանոսի կողմից սկսվեցին հալածանքները քրիստոնյաների նկատմամբ, Թեոդիտոնը ամեն օգնություն ցույց էր տալիս բանտարկված քրիստոնյաներին: Գաղտնաբար թաղում էր քրիստոնյաների մարմինները, հաց և գինի մատակարարում Ս. Խորհրդին, իր տունը եկեղեցի և ապաստանարան դարձնում հալածվածներին:

Գաղատիայի կուսակալը ջրամույն մահվամբ նահատակում է Տեկուսա, Աղեքսանդրա, Կղոդիա, Փեննա, Եվփրասիա, Մատրոնա և Հուդիտա կույսերին: Թեոդիտոնը մի քանի հավատակիցների հետ նահատակ կույսերի մարմինները հանում է ջրից և թաղում Նահատակաց եկեղեցու մոտ:

Որպեսզի կատարվածի համար քաղաքի քրիստոնյաները չենթարկվեն հալածանքի, Թեոդիտոնը ինքնակամ հանձնվում է ժամանակի օրենքին և գլխատմամբ ստանում իր նահատակությունը:

Հունիսի 23-ին

ԱՆՏՈՆԻՆՈՍ

Աղեքսանդրացի մարտիրոս: Ապրում էր Գ դարում: Ձերբակալվում է հավատքի համար և համարձակությամբ հայտարարում իր քրիստոնյա լինելը: Մերկացրած մարմինը կախելով փայտից, երկաթե ճանկերով քերում են այն: Այս ամենին տոկում է արիաբար: Այնուհետև հրամայվում է կրակով վերջ տալ նրա կյանքին: Երբ նրան մոտեցնում են կրակին, Անտոնինոսը դիմում է բազմությանը. «Հիշեցեք, որ Աստուց տրված հոգի ունեք, տեսեք, որ այն անաղարտ ներկայացնեք Աստուծո առջև»: Ապա հոժարությամբ մտնում է կրակի մեջ և հոգին ավանդում հրեշտակների ձեռքը:

ԹԵՈՓԻԼՈՍ

Սարկավագ էր, լիբիացի: Ապրել է Մաքսիմիանոս կռապաշտ կայսեր օրոք, Գ դարի վերջերին և Դ դարի սկզբներին: Հմուտ էր Ս. Գրոց իմացությամբ և իր նախատիպար Ս. Ստեփանոսի նման համարձակորեն քարոզում էր Քրիստոսին: Հալածանքների շրջանում հանվում է երկրի կուսակալի առջև և, սոսկալի տանջանքների ենթարկվելուց հետո, հոգին ավանդում առ Աստված:

ԱՆԻԿՏՈՍ ԵՎ ՓՈՏԻՆՈՍ

Անիկտոսը Նիկոմեդիայի ազնվականներից էր, աստիճանով՝ դուքս: Փոտինոսը նրա եղբորորդին էր: Դիոկղետիանոսի

կողմից քրիստոնյաների նկատմամբ հալածանքների շրջանում զանգվածային ձերբակալություններ են կատարվում: Քաղաքի հրապարակում կազմվում է դատական ատյան՝ կայսեր ներկայությամբ: Մահ էր սպասվում բոլոր քրիստոնյաներին և կուռքերին զոհ չմատուցողներին: Անիկտոսը, Փոտինոսի ձեռքից բռնած, ճեղքում է բազմությունը և, ներկայանալով կայսեր, ասում. «Ահավասիկ ես քրիստոնյա եմ և պաշտում եմ Քրիստոս Աստված»:

Երկուսն էլ ձերբակալվում են և, երկար չարչարանքներից հետո, նետվում բանտ: Երեք տարի հետո երբ կրկին նրանք հաստատում են իրենց քրիստոնյա լինելը, ողջակեզ են լինում բազմաթիվ այլ նահատակների հետ:

Հունիսի 24-ին

ԴԱՆԻԵԼ ՄԱՐԳԱՐԵ

597 թվականին, նախքան Քրիստոսը, Իսրայելի թագավորի և մեծամեծների հետ Բաբելոն տարված հրեա գերիների մեջ էր նաև Դանիելը: Նա մաս էր կազմում արքայական կամ իշխանական տներից գերի տարված տղաների խմբի: Սրանք երեք տարի դաստիարակվելով և կրթվելով քաղդեացիների լեզվով և դպրությամբ, այնուհետև մտնում են պետական ծառայության: Դանիելի հետ էին նաև նրա երեք ընկերները՝ Սեդրակը, Միսաքը և Աբեդնագովը: Դանիելը և իր երեք ընկերները վարում են բարեպաշտական կյանք:

Դանիելի մարգարեության գրքի մեջ կան բազմաթիվ հետաքրքրական և արտագրավ միջադեպեր նրա իմաստության: Դանիելի հռչակը աստիճանաբար տարածվում է, հատկապես այն ժամանակ, երբ նա մեկնում է Նաբուգոդոնոսոր թագավորի մեկ երազը, որը չէին կարողացել մեկնել թագավորի գիտնականները, մոգերը, կախարդները և աստղագետները:

Այս բանը չար նախանձով է լցնում Դանիելի հանդեպ պետական բարձր շրջանակներում, որոնք զանազան զրպարտանքներ են անում թագավորի մոտ: Ի վերջո թագավորի ուշադրությունը սևեռում են Դանիելի հավատքի վրա, որ նա ամեն օր, որպես ճշմարիտ հրեա, յոթ անգամ աղոթք է անում՝ դեպի Երուսաղեմ բացվող պատուհանից դուրս նայելով:

Ստուգելուց հետո իրողությունը, թագավորը Դանիելին նետել է տալիս առյուծների գուբ: Սակայն Դանիելը աստվածային նախախնամությամբ անվնաս է մնում: Այնուհետև թագավորը հրամայում է դուրս բերել Դանիելին գուբից: Դրան հակառակ, չարախոսները նետվում են գուբ և հոշոտվում գազաններից:

Հունիսի 28-ին

ՏՐԴԱՏ ԹԱԳԱՎՈՐ, ԱՇԽԵՆ ԵՎ ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Տրդատ թագավորը որդին էր Արշակունի Խոսրով Ա-ի: Որպեսզի արքունական տունը չվտանգվի, պարսիկների Հայաստան ներխուժումով Տրդատը և նրա քույր Խոսրովիդուխտը տարվում են Կեսարիա, ապա՝ Հռոմ: 287 թվականին Տրդատը ժառանգում է Հայաստանի արքայական գահը և իր մոտ բերում Խոսրովիդուխտին, որը պահվում էր Անի ամրոցում: Տրդատն ամուսնանում է ալանների արքայի դստեր՝ Աշխենի հետ:

Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը չափազանց ծանր էր անդրադարձել Տրդատի հոգու վրա, և նա հետագայում ընդունում է քրիստոնեությունը ու նպաստում՝ համայն Հայաստանում քրիստոնեության տարածմանը: Իր հետ քրիստոնեություն են ընդունում Աշխենը և Խոսրովիդուխտը:

301 թվականին Տրդատ թագավորի կողմից քրիստոնեությունը հռչակվում է պետական կրոն: Հռիփսիմյանց կույսերի վկայարանների հիմնադրությանն անձամբ իրենց մասնակցությունն են բերել թագավորը, թագուհին և արքայաքույրը: Տրդատն անձամբ մասնակից և ղեկավար է եղել Ս. Էջմիածնի շինության գործին:

Տրդատ թագավորը մահացել է 330 թվականին թունավորմամբ, 90 տարեկան հասակում՝ զոհ գնալով հավանաբար հեթանոս հայ նախարարների վրեժխնդրությանը: Թաղվել է Թորդանում, Լուսավորչի հանգստարանում:

Աշխեն թագուհին և Խոսրովիդուխտ օրիորդը ճգնողական կյանքով կնքում են իրենց մահկանացուն Գառնի ամրոցում:

Հունիսի 30-ին

ԿԱԼԻՍՏՐԱՏՈՍ ԶՈՐԱԿԱՆ ԵՎ ԻՐ ՔԱՌԱՍՈՒՆԻՆՆ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Քաղկեդոնացի զինվորական: Ծառայում էր Դիոկղետիանոսի՝ Հռոմի բանակում: Ձերբակալվում է քրիստոնյա լինելու համար և ենթարկվում անասելի չարչարանքների: Այնուհետև պարկի մեջ դրվելով ծովամույն է արվում, որից Աստուծո հրաշքով փրկվում է: Այս իրողությունից հոգեպես չափազանց ներգործված, նրա քառասուն-

ինն ընկերները նույնպես ընդունում են քրիստոնեությունը: Այս պատճառով բոլորը միասին կրկին գանակոծվում են և ծովամույն արվում: Կրկին փրկվելով Աստուծո հրաշքով, ի վերջո նրանք գլխատմամբ ընդունում են իրենց նահատակությունը:

ՂՈՒԿԻԱՆՈՍ ՔԱՀԱՆԱ

Ծնվել է հավանաբար Սամոսատում: Ապրել և գործել է Գ դարի վերջերին և Դ դարի սկզբներին: Գլուխն է համարվում Անտիոքի աստվածաբանական դպրոցի: Սրբագրել է Աստվածաշնչի Յոթանասնից թարգմանությունը՝ եբրայական բնագրի համաձայն:

Հալածանքների ժամանակ Ղուկիանոս քահանան ձերբակալվում է և ուղարկվում Նիկոմեդիա, որտեղ ինն տարի ենթարկվում է բազմաթիվ չարչարանքների: Ի պաշտպանություն իր հավատքի Ղուկիանոսը արտասանում է մի հրաշալի ճառ, որից հետո գլխատվում է, 312 թվականին:



ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ 78-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի 78-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը գումարվել է Վաշինգտոնի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում մայիսի 29—31 օրերին՝ թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի աղոթքով և նախագահությամբ:

Ժողովը հոտնկայս ունկնդրում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մայիս 1980 թվակիր ողջույնի և օրհնության պատգամը, որը պատրաստվել էր այն մտածումով, որ Նորին Սրբությունը անձամբ այն ներկայացներ պատգամավորական ժողովին: Ինչպես հայտնի է, Վեհափառ Հայրապետը առողջական պատճառներով չկարողացավ ներկա լինել պատգամավորական ժողովին:

Հայոց Հայրապետի պատգամը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի մայիս համարում (էջ 6):

Հայրապետական պատգամի ընթերցումից հետո, հանուն պատգամավորական ժողովի, Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը Վեհափառ Հայրապետին է ուղարկում հետևյալ հեռագիրը.

«Վեհափառ Տեր,

Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի 78-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը գումարվեցավ Վաշինգթընի մեջ, հյուրընկալությամբ Ս. Աստվածածին Հայց. Եկեղեցվո, հինգշաբթի մայիս 29-են մինչև շաբաթ մայիս 31:

Թեմական պատգամավորները որոնք խանդավառությամբ պատրաստ էին վայելելու Ձերդ Սրբության շնորհաբեր այցելությունը՝ խոր ցավ կհայտնեն որ առողջական պատճառներով հետաձգված է Վեհիդ ճամբորդությունը:

Պատգամավորական ժողովի Ա նիստի ընթացքին կարդացվեցավ Ձերդ Վեհափառության ողջույնի և օրհնության պատգամը: Ներկա ժողովականները Ձերդ Սրբության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ արձանագրեցին իրենց խոր հարգանքը և անվերապահ հավատարմությունը, նաև կհղեն իրենց սրտաբուխ շնորհավորությունը Վեհիդ գահակալության 25-րդ տարեդարձի ուրախ առթիվ:

Կաղոթենք որ Ամենակալն Աստված միշտ անսասան, պայծառ ու բարգավաճ պահե Հայաստանյայց Եկեղեցին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանիին ներքև, և Ձերդ Սրբության պարգևե մշտատև քաջառողջ և արևշատ տարիներ»:

Այնուհետև, առաջնորդ սրբազանը հատենի ժողովո ընթերցում է տարեկան իր ուղերձ-զեկուցումը, իր թեմական, եկեղեցական, մշակութային, կրթական գործունեության մասին, ուր ի մասնավորի նշել էր նաև, որ

«...Այս տարի կլրանա Նորին Ս. Օծության բեղմնավոր գահակալության 25-ամյակը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, աստվածաշնչական Արարատի շուքին: Նվիրական պարտականությունը պիտի լինի Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան վիճակի տարեկան թեմական պատգամավորական ժողովին՝ մեր բոլորիս անխախտ հավատարմությունը

ներկայացնելու Հայոց Հայրապետին, որ մշտապես մեզ կհորդորե ավելի լավ ճանչնալ մեր քրիստոնեական ժառանգությունը, մեր քաղցրաբարբառ լեզուն, մեր անցյալը իր ստեղծագործություններով, հերոսական պայքարներով՝ միշտ հանուն քրիստոնեական հավատքի, և մեր ժողովուրդի ազատության: Արթուն պահել ոգին, հպարտությունը հայ ըլլալու, հայ ապրելու այս աշխարհի վրա»:

Առաջնորդ սրբազանի տարեկան զեկուցագրից երևում է, որ այսօր ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմում գործում են «46 կազմակերպված և 12 ոչ լրիվ կազմակերպված համայնքներ, 57 հոգևորականներ, որոնցմե 50-ը կծառայեն հովվական և այլ պաշտոններով: Ութ կազմակերպված համայնքներ հովիվ չունին»:

Առաջնորդ սրբազան հոր, պատգամավորական ժողովի, թեմական խորհրդի ջանքերով աշխատանքներ են կատարվում «առաջնորդարանի հսկողության ներքև» լրացնելու այդ պակասը արժանավոր հոգևորականներով «մեր Եկեղեցվո և հասարակության առողջ և ապահով զարգացման և բարգավաճման համար»:

Այնուհետև պատգամավորական ժողովը զբաղվում է իր օրակարգի վրա դրված հարցերի քննությամբ և ընդունում է համապատասխան որոշումներ:

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի 78-րդ տարեկան պատգամավորական ժողովը ավարտում է իր աշխատանքները մայիսի 31-ին, հինգ նիստեր գումարելուց հետո:

Թեմական պատգամավորական ժողովի առթիվ գումարվում են նաև առաջնորդարանի, հայ դպրոցների և կիրակնօրյա վարժարանների, երիտասարդաց կազմակերպությանց և տիկնանց միության համագումարները:



ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի հոգևորականաց համագումարը տեղի է ունենում մայիսի 27—28 օրերին, Վաշինգտոնի Ֆրանչիսկյան Քույրերի Առանձնացման Կենտրոնի սրահում՝ նախագահությամբ թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:

«Թեև հոգևորականաց համագումարը զրկվեցավ Ամենայն Հայոց Հայրապետի շնորհաբեր Անձին ներկայութենեն, սակայն, որդիական ակնածանոք և խորին երախտագիտությամբ ունկնդրեց Անոր օրհնության և քաջալերանքի հոգենորոգ պատգամը»:

Հոգևորականաց համագումարին ուղղած Հայոց Հայրապետի օրհնության և ողջույնի պատգամը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի մայիս համարում (էջ 9—12):

Այնուհետև հոգևորականաց համագումարը ձեռնամուխ է լինում օրակարգի հարցերի քննարկմանը:

Համագումարի օրերին ժողովական հայրերը լսում են նաև չորս «շահեկան և այժմեական նյութերու շուրջ դասախոսություններ»:

Համագումարի ընթացքում «նկատի առնվեցան կանոնական, ծիսական, կարգապահական հարցեր և համապատասխան որոշումներ տրվեցան ի շինություն մեր Ս. Եկեղեցվո, վերատեսչությամբ նախագահ սրբազան հոր»:

Համագումարի օրերին հոգևոր հայրերը մասնակցում են «առանձնացման կեդրոնին մեջ, Հայց. Եկեղեցվո հասարակաց ժամապաշտությանց և ս. պատարագ մատուցվեցավ մայիսի 29-ին վաղ առավոտյան, ժամը 7.00-ին»:

Հոգևորականաց համագումարը իր աշխատանքների ավարտին Ամենայն Հայոց Հայրապետին հեռագրում է հետևյալը.

«Վեհափառ Տեր,

Հոգևորականաց տարեկան համագումարը իր որդիական սերն ու հավատարմությունը կհայտնե Ձերդ Վեհափառության որուն հայրապետական պատգամը խոր ուշադրությամբ ունկնդրվեցավ՝ անոր պարունակության և ոգիին հավատարիմ մնալու անկեղծ խոստումով»:



ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԼՄԲԱՏԱ, ՀԱՌԻՇԱ, ՕՁՈՒՆԻ, ՀԱՂՊԱՏԻ, ՍԱՆԱՀՆԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Գեղեցիկ ավանդություն է դարձել արդեն, որ ամեն ուսումնական տարվա վերջում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողությունը մեկնում է 4-օրյա պտույտի դեպի Հանրապետության հիշարժան վայրերը: Մեր հայրենիքի կլիմայական պայմաններն ու պատմական հուշարձանները լայն հնարավորություն են ընձեռում հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին՝ հանգստի կազմակերպման համար, որը և ունի դաստիարակչական և ուսումնական մեծ նշանակություն:

Այդ շրջապտույտները ուսանողներին հնարավորություն են ընձեռում ավելի մոտիկից ճանաչելու մեր երկրի առօրյան, նրա բնությունը, ծանոթանալու պատմական հուշարձաններին ու հիշարժան վայրերին՝ ավելի խորացնելու համար իրենց դասավանդությունների միջոցով ստացած գիտելիքները:

Ներկա՝ 1979—1980 ուսումնական տարում որոշված էր մեկնել դեպի հյուսիսային Հայաստանի նշանավոր վանքերն ու եկեղեցիները:

Հունիսի 16-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 7-ին, արդեն մեքենաները դուրս եկան վանքի պարիսպներից: Ծրագրից դուրս այցելեցինք Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցին, որտեղ մեծ ուսուցչի շիրմին մոմեր վառելուց և մեր որդիական ջերմ զգացումները լռելյայն արտահայտելուց հետո՝ շարժվեցինք դեպի Լենինական: Ճանապարհին կարճատև դադարներ արվեցին մի շարք եկեղեցիների մոտ, որոնցից են Է դարում Գրիգոր Մամիկոնյան իշխանի կողմից կառուցված Արուճի գմբեթաստահ եկեղեցին, որտեղ նախկինում եղել էր Արշակունիների զորքերի ձմեռանոց, Թալինի Կաթողիկե եկեղեցին (Է դար)՝ կառուցված մի այլ նշանավոր իշխանական տան զավակ Ներսես Կամսարականի կողմից, և այլն: Թալինի եկեղեցին կառուցվել է Դվինի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան Մայր տաճարի օրինակով, պատերը ներսից ամբողջությամբ եղել են որմնանկարված: Խորանի կամարի վրա երևում են առաքյալների պատկերները՝ կլոր շրջանակների մեջ, և աղոտ կերպով նշմարվում է Եզեկիելի տեսիլքը:

Ճանապարհին այցելեցինք նաև Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցին, որը կառուցվել է Զ դարի վերջին կամ Է դարի սկզբին, և Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին՝ նույնպես Է դար: Այս վերջինը ամենակատարյալն է խաչաձև-կենտրոնագմբեթ եկեղեցիներից: Ահա դիմացներս, ժայռոտ ու գորշ բլուրների միջև, քարքարոտ բարձունքի վրա, երկնքի անքիծ, վճիտ կապույտի մեջ ուրվագծվում է գորշամանուշակագույնից վարդագույնի անցնող եկեղեցին՝ սլացիկ ու սրագագաթ, միակ կառույցը, որ մնացել է հնամենի վանքից:

Եկեղեցին նշանավոր է իր որմնանկարով: Որմնանկարում պատկերված է Եզեկիելի տեսիլքը: Ահա աքսորյալ, տառապյալ-ու բազմաչարչար մարգարեն, խոսելով Աստուծո անունից, իր հզոր ձայնով մահ ու կործանում է սպառնում բոլոր կեղեքիչներին ու անարդարներին: «Եւ տեսի եւ ահա հողմ վերացեալ՝ գայր ի հիւսիսոյ, ամպ մեծ ի կողմանս նորա, և հուր փայլատակէր ի նմանէ» (Եզեկիել Ա 4):

Դժբախտաբար որմնանկարի վերին մասը ամբողջությամբ ջնջվել է, իսկ ներքևի կեսից մնացել են կարմրագույնի և ոսկեգույնի հետքեր, որոնք իրենց վառվռուն ցոլքով հրեղեն տպավորություն են թողնում: Կենտրոնում երևում է ձվաձև ծիածանը, որի երկու կողմերում, բոցերի մեջ, կանգնած են չորս քերովբեներ՝ իրենց հզոր ու հրացայտ աչքերով:

Անանուն ճարտարապետը կիրառել է ճարտարապետական մի շարք նորույթներ, որոնց նպատակն է օրվա համապատասխան ժամին ստեղծել երեկոյան ժամերգության տրամադրություն: Հենց այդ, մոտավորապես ժամը 5-ի, 6-ի մոտերքը, արևի ճառագայթները այնպես են մտնում դռնից ու լուսամուտներից և բախվելով պատերին՝ անդրադառնում դեպի նպատակաուղղված տեղը, որ ավելի հստակ երևա որմնանկարը, որը, եթե մոտիկից մանրակրկիտ ուսումնասիրենք, իր սյուժետային կառուցվածքով նույնպես արտահայտում է երեկոյան ժամերգության տրամադրություն: Կարծես այն իր գույներով, իմաստով ու կատարմամբ մի «Լոյս զուարթ» է մութ ու սառը պատերի մեջ:

Ահա ինչպիսի բարդ և եզակի ճարտարապետական կառուցվածք ունի այս գեղեցիկ ու լակոնիկ տեսքով կառույցը, որի հանճարեղ հեղինակի մասին ոչինչ հայտնի չէ մեզ: Ինչպիսի՜ համեստություն սեփական անձի և սեփական անվան նկատմամբ, որ նույնիսկ վանքի պատերի վրա արված արձանագրություններից գոնե մեկում չենք գտնում կառուցողի մասին ասված գոնե մեկ բառ, մեկ հատիկ անուն... Ամեն ինչ Աստուծո, ամեն ինչ Հիսուսի, ամեն ինչ հավատքի, հայրենի երկրի ու հայրենի ժողովրդի համար... Ահա որն է եղել նշանաբանը այդ հազարավոր երանելի ԱՆԱՆՈՒՆ-ների որոնք ցրված են մեր պատմության վշտի ու ուրախության քարքարոտ ուղիներում:

Ամեն մի հուշարձան սրբություն է: Նրանց մեջ ենք մենք տեսնում մեր նախնիների հանճարը, որոնք, երբ բախտ են ունեցել վայր դնելու իրենց մատներին բոլորովին չսազող, բայց քաջաբար ենթարկվող մետաղի սպանիչ կտորը, կառուցել են իրենց հավատքի խորանը, այդ խորաններում մուրճով ու վրձինով «Լոյս զուարթ» երգել, դեմքերը երկինք ու հոգիները առ Աստված կարկառած՝ «Տէ՛ր, կեցո՛ դու զհայս» գոչել: Մենք պետք է գուրգուրենք մեր անցյալի մնացուկները, որոնք մեր բարեպաշտ ժողովրդի դեպի երկինք ձգված քարացած աղոթքներն են:

Հաջորդ կանգառը Հառիճա վանքի մոտ էր:

Վանքը, կամ մենաստանը, գտնվում է Սրթիկի շրջանի Հառիճ գյուղում, Արագածի հյուսիսային ստորոտում: Այն, բազմած ձորի բարձր քարափին, մի գեղատեսիլ վայրում, իր վեհությամբ և հպարտ կառուցվածքով, ինչպես նաև տեղի հովասուն կլիման և երփներանգ ծաղիկների բուրմունքը առանձին զվարթություն պատճառեցին մեզ: Իզուր չէ, որ վանքը եղել է ամենայն հայոց կաթողիկոսների սիրած ամառանոցային վայրերից մեկը:

Հնագույն եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է՝ կառուցված Է դարում: Հետագայում, 1201 թ., Զաքարե և Իվանե եղբայրների կողմից կառուցվել է վանքի երկրորդ՝ Ս. Աստվածածին եկեղեցին: Սա վանքի գլխավոր եկեղեցին է: Ունի բարձր ու լայնանիստ գմբեթ, որն առանձին վեհություն է հաղորդում ընդարձակածավալ շենքին: Դրսի պատերի մեջ կան խորշեր, որոնցից մեկի մեջ տեսնում ենք Զաքարե և Իվանե եղբայրների ամբողջական բարձրաքանդակը: Լուսամուտները պսակված են գոգավոր շրջանակներով, որոնք ավելի գեղեցիկ ու աչքերին հաճելի տեսք են տալիս եկեղեցուն:

Մեզ մեծ զարմանք պատճառեց ճգնավորի մատուռը, որը գտնվում է վանքի հարավ-արևմտյան կողմում, մի անմատչելի ժայռի վրա: Ժամանակի ընթացքում մի մեծ ժայռաբեկոր, անջատվելով քարափից, իր հետ տարել և վանքից հեռացրել է հիշյալ մատուռը:

Հառիճա վանքը հայտնի է եղել որպես նշանավոր գրչության կենտրոն: Սակայն, դժբախտաբար, այդ հսկայական ձեռագրերից միայն պատառիկներ են մնացել:

Բազում ավերանքների ու հափշտակումների ենթարկված վանքը ներքին ծաղկում է ապրում ԺԹ դարի երկրորդ կեսին: Այդ ծաղկման գործում իր մեծ դերն է կատարել հատկապես Յոթն Վիրաց նշանավոր նկարը, որը առժամանակ գտնվում էր Հառիճա վանքում, և որի մասին կխոսենք ներքևում:

Հենց այս շրջանում է բացվում վանքի դպրոցը, որի սաներից են Ավ. Իսահակյանը, Երվանդ Տեր-Միհայլյանը և այլ նշանավոր հասարակական ու մշակութային աչքի ընկնող գործիչներ: Այս դպրոցում է դասավանդել Հովհ. Հովհաննիսյանը:

Հառիճա վանքից մենք շարժվեցինք դեպի Լենինական, պատմական նշանավոր Գյումրին, նախկին Կիմայրին կամ Կումայրին, որի անունը գիտնականները կապում են կիմերների հետ, որոնք, ինչպես գիտենք, մեր թվարկությունից առաջ Ը դա-

ի երկրորդ կեսին ներխուժեցին Ուրարտու և ծանր ու ճակատագրական պարտության մատնեցին Ռուսա Բ թագավորին:

Նախկին անշուք գյուղը նշանավոր է դառնում հայ ժողովրդի՝ արաբական տիրապետության դեմ 773—775 թթ. մղած ազատագրական ապստամբությունների ժամանակ: Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ առաջինը այստեղ է տրվում ժողովրդական-ազատագրական շարժման ազդանշանը:

Մինչև Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միացվելը քաղաքը կոչվել է Գյումրի: 1837 թ. Գյումրին Նիկոլայ Ա-ի կնոջ՝ Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անունով կոչվեց Ալեքսանդրապոլ և դարձավ բերդաքաղաք, իսկ սովետական կարգերի հաստատումից հետո, ի պատիվ մեծ առաջնորդի, անվանվեց Լենինական: Այժմ Լենինականը գեղեցիկ և ժամանակակից քաղաք է: Այն հանրապետությունում թե՛ մեծությամբ և թե՛ գեղեցկությամբ երկրորդն է՝ Երևանից հետո: Ժամանակակից ոճով կառուցված բազմահարկ շենքերը, լայնարձակ ու կանաչապատ փողոցները, որոնցով երթևեկում են բազմաթիվ մեքենաներ ու քաղաքացիներ և այլն, քաղաքին տալիս են զվարթ ու կենսուրախ տեսք: Իր գեղեցկությամբ հատկապես աչքի է ընկնում կենտրոնական հրապարակը: Հրապարակի երկու կողմում գտնվում են Անիի Մայր տաճարի նմանությամբ կառուցված Ս. Ամենափրկիչ և Ս. Աստվածածնի Յոթ Վերք եկեղեցիները:

Հնչում են եկեղեցու զանգերը: Սկսվում է երեկոյան ժամերգությունը: Ուսանողների մի մասը անմիջապես հագնում են ժամաշապիկները: Մեծ խանդավառությամբ հընչում է օրվա «Համբարձի» շարականը՝ «Նմանեալ Մովսիսի...»:

Եկեղեցին լցված է բազմաթիվ հավատացյալներով, որոնք երկյուղածությամբ և մեծ բավականությամբ լսում են ժամերգությունը: Ժամերգության ավարտից հետո Շիրակի թեմի առաջնորդ Նարեկ սրբազանը Լենինականի հավատացյալ ժողովրդի կողմից բարի գալուստ մաղթեց մեզ, հակիրճ խոսքով տեղի հավատացյալ ժողովրդին ծանոթացրեց ճեմարանի ուսանողությանը և նրա առօրյային, իսկ վերջում շնորհակալություն հայտնեց վերջիններիս՝ երեկոյան ժամերգությանը բերած մեր ջերմ և սրտագին մասնակցության համար: Այնուհետև, երբ դուրս եկանք եկեղեցու բակ, մեզ շրջապատեցին տեղի հավատացյալները: Սկսվեց հաճելի և մտերմական զրույց: Նրանք բազմաթիվ հարցեր էին տալիս Մայր Աթոռի, հոգևոր ճեմարանի և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի մասին:

Այժմ ցանկանում եմ մի քանի խոսք ասել եկեղեցու և նրա անվանման վերաբերյալ:

Ինչո՞ւ է կոչվում «Յոթ Վերք»: Ըստ ավանդության, երբ Հիսուս խաչվելուց հետո տալիս է իր վերջին յոթ պատգամները, դրանցից յուրաքանչյուրը, մի-մի սուր դարձած, խոցում են Աստվածամոր սիրտը: Եկեղեցում գտնվում է մի պատկեր՝ Աստվածամոր կերպարանքով՝ խոցված յոթ սրերով, որը, ըստ ավանդության, նկարել է Ղուկաս ավետարանիչը: Մի կողմում պատկերված է Փրկչի հարության նկարը, իսկ մյուս կողմում՝ խաչից իջեցված Հիսուսի մարմինը գրկած՝ նստած է Ս. Աստվածածինը: Արտասուքը ծորում է մայրական աչքերից, իսկ սրտի վրա խրվել են յոթ սրեր, չորսը՝ աջակողմում, և երեքը՝ ձախակողմում: Այդ սրերը խորհրդանշում են Հիսուսի ասած վերջին խոսքերը, որոնք յոթ վերքեր են բացել Աստվածամոր մայրական սրտում: Այդ խոսքերը հետևյալներն են.

Ա. Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն.

Բ. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս.

Գ. Այսօր ընդ իս իցես ի դրախտին.

Դ. Կի՛ն դու, ահա որդի քո, և ահա մայր քո.

Ե. Ծարաւի եմ.

Զ. Ամենայն ինչ կատարեալ է.

Է. Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ:

Նկարը այնքան արժեքավոր է ու ճանաչված, որ այն ժամանակին վանքից վանք են թոցրել: Արդեն ասացինք, որ այդ նկարը առժամանակ գտնվել է Հառիճա վանքում: Հետագայում, 1829—30 թթ., երբ հիմնվում է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցին Բասենից և Կարսից գաղթած հայերը Պողոս վրդ. Ջանլաթյանի գլխավորությամբ 1832 թ. նկարը Հասանղալայից բերում են այստեղ: Ահա թե ինչ է գրում հայր Ղևոնդ Ալիշանը իր «Շիրակ» աշխատության մեջ.

«Եկեղեցին Սբ. Աստուածածնի նշանաւոր ուխտատեղի համարեալ է վասն Եօթնխոցից անուանեալ պատկերին, զոր համարին նկարեալ ի Ղուկայ աւետարանչէ և բերեալ ի Հայս ի Գրիգորէ Մագիստրոսէ» (էջ 155):

Տեղի հավատացյալ ժողովուրդը հավատացնում է, որ նկարն ունի բուժիչ հատկություն: Նրանք պատմում են, որ երբ Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին հիվանդանում է, բերել է տալիս այդ պատկերը, որպեսզի վերջինիս օգնու-

թյամբ բուժվի: Հետագայում նա չի ցանկանում նկարը վերադարձնել, բայց տեղի հավատացյալները գալիս են Էջմիածին և մեծ դժվարությամբ կարողանում նկարը իր նախկին հանգրվանը վերադարձնել:

Արդեն իր ավարտին էր մոտենում զբոսապտույտի առաջին օրը: «Շիրակ» հյուրանոցում գիշերելուց հետո, վաղ առավոտյան, նորից նստեցինք մեքենաները և արդեն ժամը ութին դուրս եկանք Լենինականից: Նախաճաշեցինք ճանապարհի մոտ, գեղատեսիլ բնության գրկում, որտեղ կար լեռնային աղբյուր: Դեռևս նախաճաշը չվերջացրած, լեռնային այծյամների պես թռչկոտելով, բարձրանում ենք դիմացի բլուրը: Շրջակայքում երևում էին մի քանի գյուղեր, որոնք իրենց սպիտակատանիք կտուրներով՝ փռված լեռների լանջերին, կարծես ձուլված բնությանը, վերջինիս հետ կազմում էին մի ամբողջություն, լրացնում միմյանց: Հաճելի էր բարձունքում, որտեղ ազատ թագավորում էր մեղմ զեփյուռը, որտեղ ոսկորներդ էր թափանցում լեռնային մաքուր, սուր օդը՝ լցված վայրի ծաղիկների անուշ, անարատ բուրմունքով: Արդեն արևի ճառագայթները դեպի մեզ էին սլանում համարյա թե զենիթից, երբ մենք մեծ դժվարությամբ նստեցինք մեքենաները և շարժվեցինք դեպի Օձունի եկեղեցի:

Մոտենում ենք պարսպապատ եկեղեցուն, որի շուրջը փռված են գերեզմանները: Այստեղից է մեր ամենանշանավոր հայրապետներից մեկը՝ Հովհան Օձնեցի կաթողիկոսը (715—728): Եկեղեցում կա ԺԸ թե ԺԹ դարի մի արձանագրություն՝ ինչ-որ վերանորոգումների մասին, ուր ասվում է, թե եկեղեցին կառուցվել է Հովհան Օձնեցու կողմից: Բայց, դատելով ճարտարապետական կառուցվածքից, գիտնականները գտնում են, որ եկեղեցին Զ դարի վերջերից կամ Է դարի սկզբներից ավելի ուշ չէր կարող կառուցված լինել: Եկեղեցին գմբեթակիր է և ունի բազիլիկ ձև: Երեք կողմից շրջապատված է գալերեաներով կամ կամարակապ սրահներով, ինչ որ հատուկ է Ե—Զ դարերի եկեղեցական ճարտարապետական կառույցներին և, ընդհանրապես, չի հանդիպում հետագա դարերի մեր հուշարձաններում: Այստեղ պարզ երևում է անցումը հեթանոսական տաճարներից դեպի վաղ քրիստոնեականը: Այդ անցումը տեսնում ենք նաև տաճարից հյուսիս գտնվող երկու նշանավոր ստելաների մեջ, որտեղ գեղեցիկ կերպով միահյուսված են հեթանոսական մոտիվներով արված բուսապատկերները ու աստվածաշնչական մոտիվները: Ինչպես գիտենք, քարակոթողներ գոյություն ունեին դեռևս Ուրարտուում: Այնտեղ աստվածներին նվիրված արձանագրություն-քարակոթողները համարվել են սրբություն, որոնց մոտ պաշտամունքային ծեսեր են կատարվել: Այդ բանը նույնպես անցել է քրիստոնեությանը, միայն թե արդեն նախկին արձանագրություն-քարակոթողները փոխարկվում են պատկերազարդ քարակոթողների, իսկ այնուհետև՝ խաչքարերի:

Մի անգամ ևս դիտելուց հետո, հրաժեշտ տվեցինք այդ երկարավուն, գեղեցիկ, եթե կարելի է ասել, նախախաչքարերին ու վեհաշուք կերպով փռված նշանավոր տաճարին:

Կեսօրվա ճաշից հետո, մոտավորապես ժամը յոթն էր, երբ նորից նստեցինք մեքենաները ու շարժվեցինք դեպի Հաղպատ—Սանահին: Դեմներս պարզվել է Լոռվա չնաշխարհիկ բնությունը, նախկին Գուգարաց երկիրը: Աղմկոտ ու սրընթաց՝ անդրնդախոր ձորերի ծերպերից հորդում է պըղտող Դեբետը: Հիշում ես հանճարեղ բանաստեղծի տողերը.

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը խորունկ նոթերը կիտած
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ...

Այժմյան Ալավերդու շրջանը կազմում է պատմական Հայաստանի նախկին Գուգարաց ընդարձակածավալ աշխարհի արևելյան շրջանները: Իր տերիտորիայով համարյա թե համընկնում է Տաշիր կամ Տաշիրք գավառին:

Գուգարքը, մի շարք այլ գավառների ու աշխարհների հետ միասին, Հայկական պետությանն է միացվել Արտաշես Ա-ի օրոք, Բ դարում (մ. թ. ա.): 978 թ., Բագրատունիների թագավորության քայքայման ժամանակաշրջանում, այստեղ հիմնադրվել է Անիի թագավորությանը ենթակա Տաշիր-Զորագետի կամ Լոռվա թագավորությունը, Աշոտ Գ-ի որդի Գուրգենի կողմից, որը նախկինում կառավարիչ էր նշանակված նույն տեղում: Հիմնադրի անունով էլ թագավորությունը պատմության մեջ հայտնի է Կյուրիկյան աղավաղված ձևով:

Այս շրջանում է, որ նախկին Տաշիրքը ապրում է տնտեսական, մշակութային և հոգևոր բուռն վերելք: Կառուցվում են բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ ու բերդեր, որոնց թվում նաև Հաղպատը և Սանահինը: Սելջուկյան տիրապետությունից հետո այդ վերելքը շարունակվում է նաև Զաքարյանների ժամանակ:

Ոլորապտույտ ճանապարհներով ավտոմեքենաները բարձրանում են դեպի Սանա-

հին: Տների ու կանաչ ծառերի ետևից դեպի երկինք է պարզվել նշանավոր վանքի գմբեթը: Ուխտավորի երկյուղածությամբ ներս ենք մտնում դարպասից և կանգնում այս հազարամյա սրբավայրի առջև: Վանքի տեսքը տրամադրում է հավատքի և խոկումի:

Սանահին վանքի գոյությանը սկիզբ է դրվում Անանիա Մոկացի (946—968) կաթողիկոսի օրով, երբ քաղկեդոնական վեճերի պատճառով Հունաստանից հալածվում և Հայաստան են գաղթում մի խումբ հայ և հույն ուղղափառ-միաբնակ հոգևորականներ: Նրանք այստեղ կառուցում են վանքի առաջին կառույցը՝ Ս. Աստվածածին եկեղեցին, որտեղ հիմնում են վանք և զբաղվում գիր ու գրականությամբ, աղոթքով ու հայ մշակույթով: Հետագայում, Բագրատունյաց Սմբատ Բ թագավորի օրերից, Սանահինը դառնում է մեր մշակույթի վառ օջախներից մեկը: Այստեղ գոյություն է ունեցել բազմանդամ միաբանություն, այստեղ է գործել նաև Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը, որտեղ դասավանդել է ինքը՝ մեր հին պատմության մեջ հայտնի միակ աշխարհիկ փիլիսոփան և գիտնականը:

Սանահին վանքի ամենագլխավոր ճարտարապետական կոթողն է «Ամենափրկիչ» եկեղեցին, որը կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցուց մի քանի տասնամյակ հետո՝ 967—972 թթ., Հայաստանի Խոսրովանուշ թագուհու կողմից, իր ամուսին Աշոտ Գ Ողորմած թագավորի աջակցությամբ: Այս եկեղեցին իր դիրքով և ճարտարապետական կառուցվածքով կարծես իշխում է մյուս կառույցների վրա:

Վանքի մյուս բոլոր հրաշալի և իրենց ճարտարապետական կուռ կառուցվածքով աննման հուշարձանները դիտելուց հետո, ինչպիսիք են գավիթը կամ ժամատունը, Մագիստրոսի ճեմարանը և մատենադարանը, զանգակատունը, Գրիգոր Տուտեորդու դամբարան—խաչքարը և այլն, մենք կրկին վերադարձանք վանքի գլխավոր՝ Ամենափրկիչ եկեղեցին և կանգնեցինք երեկոյան աղոթքի: Թվում է, թե մեզ հետ աղոթում են նաև վանքի եռամեծ վարդապետների անմահ հոգիները, թվում է, թե վանքի հազարամյա պատերից հնչում է Ստեփանոս Օրբելյանի նշանավոր պատգամը. «Հաւան եմք մեք ընդ հարսն մեր ի դժոխս իջանել և ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել»:

Արդեն իրիկնամուտ է: Պետք է շտապել, որպեսզի հասցնենք այցելել նաև Հաղպատ: Ուղղվում ենք դեպի հավատքի ու գիտության այդ երկրորդ նշանավոր օջախը:

Հաղպատը գտնվում է Սանահնի հանդիպակաց լեռան գագաթին, մի կանաչապատ բացատի վրա: Մեծ անհամբերության պատճառով ոլորապտույտ ճանապարհը երկար է թվում և ձանձրալի: Հաճախակի դեմքներս դուրս ենք պարզում պատուհաններից և վայելում Գուգարաց աշխարհի ծաղկավետ ու կանաչապատ, լեռների և անտառների մեջ կորսված անդընդախոր ձորերի խորհրդավոր գեղեցկությունը: Ամեն կողմ կանաչ է ու ծաղիկ: Վայրի բնության ծոցում, ճանապարհի յուրաքանչյուր դարձվածքին, բազմերանգ մի նոր տեսարան է բացվում մեր աչքերին: Ի՜նչ հրաշալի է բնությունը: Սա իսկապես որ արվեստ է, յուրահատուկ, անձեռակերտ արվեստ, իսկ բնությունը ամենամեծ արվեստագետն է: Այսպիսի շքեղություն մենք չենք հանդիպում ոչ մի նկարչի կտավներում, բայց և միաժամանակ որքան հասկանալի է դառնում Մարտիրոս Սարյանի արվեստը: Այո՛, իսկական արվեստագետ լինելու համար նախ պետք է հասկանալ հայրենի բնությունը, ապա նոր բառերով, ներկով կամ հնչյուններով, մուրճով կամ գրչով կրկնօրինակել այն՝ տալով գեղարվեստական մեկնաբանություն:

Ահա երևացին դեպի երկինք կարկառված եկեղեցու գմբեթները: Հիացմունքով ու երկյուղածությամբ մտնում ենք հավատքի ու մշակույթի, գիտության ու ստեղծագործ հանճարի կոթող այս դարավոր մենաստանի դարպասից:

Այստեղ են ապրել և գործել մեր եռամեծ վարդապետներն ու մշակույթի նշանավոր գործիչները, այստեղ են «մի նշխարով, մի կում ջրով» մեր պատմությունը կերտել մեր պատմիչները, գրիչները, այստեղ են դարերի հավերժական կյանք ստացել մեռած կենդանու մշակված կաշիները, այստեղ է շտապել ամեն մի հայ երիտասարդ, որպեսզի սովորի և դառնա իր ժողովրդի, իր եկեղեցու ու իր հավատքի դատի պաշտպանը:

Ի՜նչ նվիրական ու սրտամոտ է հնչում վանքի ամեն մի կտորը, ամեն մի քարը: Այստեղ յուրաքանչյուր քար, յուրաքանչյուր շաղախ խոսում է մեր ստեղծագործ ժողովրդի հավատքի ու աշխատանքի, տառապանքի ու անընկճելի հոգու վեհության մասին: Այստեղ յուրաքանչյուր քար քարի վրա է դրվել հայ վշտի ու ուրախության արցունք-շաղախով:

Ինչպես չմոտենաս և սրտի երկյուղածությամբ չհամբուրես վանքի ամեն մի քարը, նրա վրա նստած ամեն մի փոշին: Ինչ-

պե՞ս չծնրադրեն վանքի գավթում թաղված այն շիրիմների վրա, որոնց հայտնի ու անհայտ հիշատակը ապրում է ու հավերժ կապրի մեր սրտերում:

Մտնում ենք հուշարձանախմբի առաջին և գլխավոր կառույց հանդիսացող Ս. Նշան եկեղեցին: Դրսից, արևելյան ճակատում, կանգնած են երկու մորուքավորներ՝ ձեռքներին բռնած եկեղեցու մակետը: Ովքե՞ր են այդ երանելիները՝ անմահացած հազարամյա վանքի խնկաբույր ճակատին: Դրանք Սմբատ և Գուրգեն արքայորդիներն են, որոնց արևշատության համար կառուցվել է այս քարե հրաշալիքը իրենց մոր՝ Խոսրովանուշ թագուհու կողմից:

Այստեղ ամեն ինչ միանգամից նայել հնարավոր չէ: Բայց ինչպե՞ս կարելի է անտարբերությամբ անցնել Ս. Նշանի գավթի, Ս. Գրիգոր եկեղեցու, Համազասպի շենքի և այլ հրաշալիքների կողքից: Ահա վանքից բաժանված, շրջապատված մեծ վարդապետների՝ Դավիթ Քոբայրեցու, Հովհ. Սրկ. Իմաստասերի, Հովհաննես Պլուզի և ուրիշների դամբարաններով դեպի զենիթ է ձգվում վանքի զանգակատունը: Զանգակատան վրա կան խորշեր, որոնք դեպի Մորփեոսի գիրկն անցնող արևի նվազող ճառագայթներից ստանում են զանազան գույներ, և կարծես քարե հսկա զանգվածը թեթևանում է ցոլցլացող գույներից, որոնք իրենց վառվռուն աշխույժով Մոցարտյան երաժշտության տպավորություն են թողնում:

Արդեն մթնում է: Մեկնման տխուր ժամն է: Պետք է հրաժեշտ առնել այս սրբավայրից: Մի անգամ ևս նայում ենք աստիճանաբար մթությանը ձուլվող նվիրական վանքին: Այստեղ ամեն ինչ խոսում է: Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ խորհրդավոր է վանքը մթության մեջ: Թվում է, թե այն մի իսկական «Խորհուրդ մեծ» է՝ քարե կերպարանք առած: Մեր հայացքները չեն կարողանում բաժանվել կիսամութի մեջ ձուլված աղոտ գծերից: Նույնիսկ լուսինը իր թրթռուն հայացքը հառել է այս հազարամյա պատերին:

Հուզումով, համարյա բռնի կերպով բաժանվում ենք Հաղպատի սուրբ վայրերից: Չնայած երկար ժամանակ է անցել ճաշից, բայց մեր մարմինները հոգնություն և քաղց չեն զգում: Հաղպատում և Սանահինում մենք ավելի լավ սնունդ ստացանք, հոգևո՛ր սնունդ: Այո՛, «Ոչ միայն հացիւ, այլև բանիւ կեցցէ մարդ»: Միտքդ է գալիս մի գեղեցիկ ավանդություն Հովհ. Սարկավագ Իմաստասերի մասին, թե ինչպես Հաղպատում ուսանելու ժամանակ մի քանի օր անհետանում է, և երբ նրան գտնում են վանքի մատենադարանում փակված ու զարմացած հարցնում, թե ի՞նչ է կերել նա այդ օրերին, ուսումնասեր պատանին, ցույց տալով մատենադարանի մագաղաթները, ասում է. «Այս է իմ կերակուր և ըմպելի զոր կերայ և արբի զաւուրս այսոսիկ»:

Ալավերդու հյուրանոցում գիշերելուց հետո, առավոտյան, վերջին անգամ հրաժեշտ տվեցինք այդ նվիրական վայրերին և շարժվեցինք դեպի Նոյեմբերյան: Նախաճաշից հետո բռնեցինք վերադարձի ճանապարհը: Մոտավորապես ուշ կեսօրին հասանք Մակարավանք: Այստեղ երկար և հաճելի ժամանակ անցկացրեցինք, խաղացինք ֆուտբոլ և այլ սպորտային խաղեր:

Մակարավանքը կառուցվել է ԺԳ դարում: Չորս կողմից պատերի վրա կան փոքրիկ խաչքարեր, զարդաքանդակներ: Խորանի ներքևի մասը ամբողջությամբ պատված է աստղակերպ զարդաքանդակներով: Գլխավոր մուտքի դռան վերևի մասում քանդակված են կենդանիներ. մեկ կողմում վագր կամ առյուծ, որը ճիրաններով բռնել է ցուլի ծոծրակից, մյուս կողմում, թվում է, թե սֆինքսի կերպարանքով առասպելական կենդանի է՝ մարդու դեմքով և գազանի մարմնով: Գազանները, հավանաբար, խորհրդանշում են ուժ, զորություն և խորամանկություն ու հեռատեսություն: Սֆինքսը գլխին կրում է թագ: Դեմքը նման է գեղեցիկ կնոջ դեմքի, բայց հպարտ է և կկոցած աչքերի տակից նայում է դեպի հեռուն:

Այժմ վանքը վերանորոգվում է: Մեզ մեծ ուրախություն պատճառեց բանվորների եռանդուն ու քարեխիղճ աշխատանքը: Բայց, դժբախտաբար, վանքի մոտ թափված են խաչքարեր, որոնցից յուրաքանչյուրը միմի կատարյալ արվեստի նմուշ է ներկայացնում իրենից:

Արդեն երեկո էր, երբ բռնեցինք վերադարձի ճանապարհը:

Այսպիսով, կտրելով ավելի քան 260 կիլոմետր, Ալավերդի, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան, Երևան, Էջմիածին երթուղիով, գիշերվա ժամը 1-ին հասանք Մայր Աթոռ:

Այս հետաքրքիր ու ուսանելի ուխտագնացությունը նոր լիցք տվեց մեզ՝ ուսանողներիս, որպեսզի ամառային արձակուրդներից հետո նոր եռանդով վերսկսենք գալիք ուսումնական տարին:

Մեր հոգում միշտ կենդանի կմնան այն մեծ տպավորությունները, որ ստացանք այդ ուխտագնացության ժամանակ:

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(Հոգևոր ճեմարանի Բ լսարանի ուսանող)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ

1980 թվականի հունվարից սկսած ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչէ արքեպ. Հովսեփյանի նախաձեռնությամբ Լոս Անջելոսում հրատարակվում է, որպես առաջնորդարանի պաշտոնաթերթ, **Մայր Եկեղեցի** անունով պարբերականը:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

THE MOTHER CHURCH

Published monthly by the Western Diocese of the Armenian Church of North America
His Eminence Archbishop Vatche Hovsepian, Primate

MARCH-APRIL, 1980
Volume 2, No. 3-4

Մայր Եկեղեցի ամսագիրը բաղկանում է 12 մեծադիր էջերից և հրատարակվում է միացյալ համարներով ու պատկերազարդ է: Ամսագիրն ունի հայերեն և անգլերեն բաժիններ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վեհափառ Հայրապետի, ողջունում է **Մայր Եկեղեցի** ամսագրի հրատարակությունը և հաջողություն ու հարատևություն է մաղթում:

Սույն ամսագրի հրատարակությանը և բովանդակությանը կանդրադառնա խմբագրությունս ավելի ուշ, երբ ձեռքի տակ ունենա գոնե մեկ տարվա համարները:



ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ՄԵԼԲՈՒՌՆ ՔԱՂԱՔՈՒՄ

1980 թվականի մայիսի 12—25 օրերին Ավստրալիայի նախկին մայրաքաղաք Մելբուռնում գումարվում է ԵՀԽ-ի «Առաքելություն և Ավետարանչություն» հանձնաժողովի նստաշրջանը, որին մասնակցում են ութսուն տարբեր երկրներից ժամանած երկու հարյուր Եկեղեցիների բազմահարյուր ներկայացուցիչներ, բազմաթիվ դիտորդներ, թղթակիցներ:

Եկեղեցական սույն համագումարին մասնակցում էին, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայոց Վեհափառ Հայրապետի, չորս պատգամավորներ, այդ թվում՝ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ Տ. Շահե արքեպ. Ամեմյանը, որպես պատվիրակության ղեկավար, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի առաջնորդ Տ. Գարեգին արքեպ. Գազանճյանը, առաջնորդական փոխանորդ Տ. Աղան ծ. վրդ. Բալիոզյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Համագումարի նշանաբանն էր՝ «Եկեսցէ արքայութիւն քո» աղոթքը, որը երկրի վրա Աստուծո արքայության հաստատման իղձն է, պաշտպանումը մարդկային ազատության և հավասարության, պաշտպանությունը բոլոր աղքատների, անկախ նրանց ցեղային, կրոնական պատկանելությունից, գույնից և սեռից:

Ժողովի ատենապետ-վարիչն է եղել դոկտ. Էմիլիո Կաստրոն, որը բացելով համագումարը, նշել է նրա նպատակը, որ է «այսօրվա աշխարհի խառնակության մեջ վերակենդանացնել, նոր ձայնով պատգամել Ավետարանը, որպեսզի աշխարհի հինգ ցամաքամասերի վրա լսելի դառնա Խաչի ճառը, օգնության հասնել Եկեղեցիներին՝ կատարելու համար իրենց առաքելական կոչումը»:

Ժողովը նշում է, որ այսօրվա աշխարհի պայմաններում Եկեղեցիների ավետարանչական առաքելությունը պետք չէ սահմանափակվի միայն միսիոնարական գործունեությամբ, այլ Ավետարանի ձայնը և պատգամը պետք է լինի և մնա ճշմարտապես «աղքատներին բերված բարի ավետիսը»: Աղքատը ոչինչ ունի: Նա ապրում է «կարիքի և չքավորության մեջ», ձայնազուրկ է և «մատնված ամենահզորի քմահաճույքին»: Բայց նա «արդեն իսկ ձեռնարկել է մի կարևոր առաքելության, փոխելու համար իր կացությունը: Սպասվում է Եկեղեցիներից, որ նրանք առաքելաշունչ մի շարժումով նեցուկ հանդիսանան աղքատի ձեռնարկած առաքելության: Եկեղեցիները պետք է հրաժարվեն բարեգործություն անելու և ողորմություն տալու իրենց հին ձևերից և պատրաստ լինեն լսելու աղքատի ձայնը: Եկեղեցիները պետք է զորավիգ կանգնեն աղքատի պայքարին, ընդդեմ նրան անխղճորեն շահագործողների և ճնշողների»:

Համագումարի պաշտոնական բացումից հետո կազմվում են չորս ենթաժողովներ օրակարգի հարցերը հանգամանորեն և ավելի մանրամասնությամբ ուսումնասիրելու համար:

Օրակարգի հարցերը տասը օրեր վիճաբանության առարկա են դառնում: Ենթաժողովներում տեղի են ունենում մտքերի և կարծիքների փոխանակումներ, ընդունվում են համապատասխան որոշումներ, որոնք վերջում որպես վերջնական տեղեկագիր բերվում են պլենար նիստին ի քննություն և ի հաստատություն:

Մի պահ Ցելբուռնի համաժողովից։ Առաջին պլանում՝ Հայ Եկեղեցու պատվիրակությունը. Տ. Շահե, Տ. Կարեգին արքեպիսկոպոսները, Տ. Աղան ծ. վարդապետը և Տ. Անանիա վարդապետը

Առաջին ենթաժողովի քննության է դրվում «Բարի լուրը աղքատներին» հարցը:

Երկրորդ ենթաժողովին՝ «Աստուծո թագավորությունը և մարդկային պայքարները»:

Երրորդ ենթաժողովին. «Եկեղեցին՝ վկա արքայության»:

Չորրորդում՝ «Խաչեցյալ Քրիստոսը դատապարտում է մարդկային իշխանությունը»:

Հայ Եկեղեցու պատգամավորությունը, ինչպես ուղղափառ և արևելյան Եկեղեցիների ներկայացուցիչները, մասնակցում է երրորդ ենթաժողովի աշխատանքներին: Այն ձեռնհասորեն և փայլուն կերպով ղեկավարում է պատգամավորության նախագահ Տ. Շահե արքեպիսկոպոսը, որը հանդես է գալիս նաև «Սուրբ պատարագը՝ վկայություն Աստուծո թագավորության և անոր արքայության փորձառությունը», բովանդակալից մի զեկուցումով նոր ուղիներ որոնելով, որոնցով կարելի լիներ Աստուծո թագավորության հաստատումը մեր օրերի աշխարհի մեջ: Տ. Շահե արքեպիսկոպոսի սույն կարևոր զեկուցագիրը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 33):

Երրորդ բաժնի ժողովի բացումին մեր պատգամավորությունը հանդիսավոր իրադրության մեջ կատարում է եկեղեցական մի տպավորիչ արարողություն, շարականներով, աղոթքներով, մեծ տպավորություն ստեղծելով բոլոր ժողովականների մեջ:

Մայիսի 21-ին, առավոտյան պաշտամունքի ժամանակ, մեր պատգամավորությունը կատարում է «Արևագալ»-ի ժամերգություն:

Ժողովականները մասնավոր ուշադրությամբ ունկնդրում են, այսպես կոչված, «Երրորդ աշխարհի» պատգամավորների քննադատող և ամբաստանող ձայնը, որը պահանջում էր վերջ դնելու գաղութարարության բոլոր նոր ձևերին, որոնք փորձում են խեղդել ընկերային և ազգային ազատագրական շարժումները և արդարության ձայնը:

Այս առթիվ ժողովը արձանագրում է. «Մենք դեմ-հանդիման ենք եկել այն իրականության հետ, որ Եկեղեցիին մեղադրությունը գաղութատիրական իշխանությունների հետ, անցյալում այնքան անգամներ դատապարտված, շարունակվում է մինչև այսօր: Վերքերը սպիացած չեն: Գաղութատիրական ժամանակաշրջանը չի վերջացել: Մեկ իշխանությունը վերացվել է, սակայն, յոթը նոր իշխանություններ փոխանակել են նրան: Զարգացող աշխարհի մեծագույն մասերը կովախնձոր և զոհ են դարձել գերիշխան մեծերի պայքարին»:

Այնուհետև ժողովը իր որոշումների մեջ անդրադառնալով հանուն ազատության մղվող պայքարներին՝ կոչ արեց Եկեղեցիներին, կանգնել մարդկային պայքարների կենտրոնում, պայքարել բոլոր այն ուժերի դեմ, որոնք փորձում են պահել-պահպանել հին կացությունը, պայքարել ստեղծելու համար նոր, արդար և ավելի մարդկային ընկերային հասարակական մի կարգ, «Աստուծո արքայության հաստատման համար»:

Աղքատին հետ, նրա պայքարում, նրան շահագործողների դեմ: Աստուծո արքայության հաստատումը երկրի վրա կապ ունի մի նոր ընկերություն, ընկերային մի նոր հավասարակշռություն ստեղծելու հետ, որտեղ ամեն մարդ հավասար հնարավորություններ ունենա ապրելու, ազատ լինելու և վայելելու Աստուծո մարդկության բաշխած պարգևները:

Համագումարը առնում է մի շարք կարևոր որոշումներ, աշխարհի այսօրվա քաղաքական և տնտեսական կյանքը փոթորկող հարցերի վերաբերյալ:

Համագումարը սրտառուչ մի կոչի մեջ իր պաշտպանությունն է արձանագրում «ի նկատ աշխարհի բոլոր տառապյալներին, քաղաքական բանտարկյալներին, չարչարվող ու նահատակվող բազմահազար պայքարողներին, անարդարության զոհերին, անձայն և անզոր բոլոր ժողովուրդներին»:

Համագումարը դատապարտում է նաև սպառազինությունների մրցավազքը: Ժողովը կոչ է անում որ վերջ տրվի ատոմական զենքերի արտադրությանը ողջ աշխարհի վրա: Պահանջում է նաև, որ ոչնչացվեն գոյություն ունեցող ատոմական զենքերը և Եկեղեցիներին հրավիրում է աշխատել կասեցնելու ատոմական զենքերի զարգացումը, գործածությունն ու արտադրումը, մինչև որ վերջնական, ապահով, միջազգային համաձայնագրեր հաստատվեն օրենքից դուրս հայտարարելու ատոմական զենքը:

Համագումարի տևողության 15 օրերի ընթացքում Մայր Աթոռի ներկայացուցիչները կապ են պահպանում Մելբուռնի հայ համայնքի, հոգևոր հովիվ Տ. Ներսես քհն. Գոռուզյանի, եկեղեցական վարչության անդամների հետ՝ արժանանալով ջերմ ուշադրության և հյուրասիրության:

Մայիսի 18-ին, կիրակի օրը, Մելբուռնի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում պատարագում է Տ. Աղան ծ. վարդապետը, և քարոզում է Տ. Շահե արքեպիսկոպոսը՝ «Ո՞վ է սա թագաւոր փառաց» բնաբանով:

Հայոց սուրբ պատարագին ներկա են լինում նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մայիսի 20-ին Մելբուռնի հայոց եկեղեցում տեղի է ունենում էկումենիկ արարողություն, որին մասնակցում են ուղղափառ և արևելյան հին Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մայիսի 25-ին դարձյալ նույն եկեղեցում ս. պատարագ է մատուցում Տ. Շահե արքեպիսկոպոսը: Արարողությանը ներկա է լինում նաև օտար Եկեղեցիների մեծ բազմություն:

Օրվա քարոզը խոսում է այս առթիվ ժողովի նախագահ «Առաքելություն և ավետարանչություն» բաժնի տնօրեն դոկտ. Էմիլիո Կաստրոն: Հարգելի քարոզիչը ոգեկոչում է Ապրիլյան եղեռնի ծանր օրերը և շեշտում՝ հայ ժողովրդի պայքարը հանուն իր հավատքի և արդարության:

Մելբուռնում գումարված ԵՀԽ-ի «Առաքելություն և Ավետարանչություն» հանձնաժողովի նստաշրջանը կարևոր մի իրադարձություն էր քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ շարժման պատմության մեջ ի նպաստ աշխարհի խաղաղության, ժողովուրդների համագործակցության և եղբայրության:



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԸ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ

Սույն թվականի մայիսի 12—14-ը Բուդապեշտում տեղի ունեցավ Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի միջազգային սեմինար՝ Հունգարիայի Եկեղեցիների Էկումենիկ խորհրդի հրավերով:

Ներկա էին Սովետական Միության, սոցիալիստական երկրների, Եվրոպայի, ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի 22 երկրներից 65 ներկայացուցիչներ, ինչպես նաև դիտորդներ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի, Եվրոպայի Կաթոլիկների Բեռլինի Կոնֆերանսի և այլ էկումենիկ կազմակերպությունների կողմից:

Հայ Եկեղեցու կողմից սեմինարի աշխատանքներին մասնակցում էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Մերձավոր և Միջին Արևելքի հատուկ հանձնաժողովի նախագահ տիար Հովհաննես Թոփուզյանը:

Բուդապեշտի Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի միջազգային սեմինարի գլխավոր թեման էր՝ «լարվածության թուլացում և վստահության ստեղծում. Եկեղեցիների և քրիստոնյաների պարտականությունները Մադրիդի կոնֆերանսի նախապատրաստման գործում»:

Լսվեցին երեք ընդարձակ զեկուցումներ՝ «Եկեղեցիների և քրիստոնյաների նպաստը լարվածության թուլացման և վստահության ստեղծման գործում 70-ական թվականներին» (դոկտ., պրոֆ. Վ. Բրեդենդիկ, Արևելյան Գերմանիա), «Արևմտյան Եվրոպայի քրիստոնյաները լարվածության թուլացման և զինաթափման օգտին» (դոկտ., պրոֆ. Վ. Է. Վերդոնկ, Հոլանդիա) և «Միջազգային դրությունը Մադրիդի կոնֆերանսի նախօրեին» (դոկտ. Յանոս Պետրան, Հունգարիա) թեմաներով:

Զեկուցումների շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն: Եղույթ ունեցողներն ընդգծում էին Հելսինկիի համաժողովի շարունակությունը հանդիսացող Մադրիդի կոնֆերանսի կարևորությունը՝ միջազգային լարվածության ներկա պայմաններում: Արտահայտելով համայն աշխարհի քրիստոնյաների և բարի կամքի տեր մարդկանց խաղաղասիրական ձգտումները, Բուդապեշտի սեմինարի մասնակիցները կոչ արեցին Եկեղեցիներին՝ պաշտպանել և զորավիգ հանդիսանալ այն բոլոր միջոցառումներին, որ կարող են տանել դեպի լարվածության թուլացում, զինաթափում:

Սեմինարի եռօրյա աշխատանքների արդյունքներն ամփոփվեցին «Հայտարարության» մեջ, որը պետք է ներկայացվի Մադրիդի կոնֆերանսին՝ Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի պատվիրակության կողմից:



ՄԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ՔԱՀԱՆԱ ՓՈՍԹԵՔՅԱՆԻ
(1903—1980)



Հունիսի 2-ին, երկուշաբթի օրը, Լիոնի Շարփեն հիվանդանոցում, 77 տարեկան հասակում, վախճանվում է Տ. Թորգոմ քահանա Փոսթեքյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1903 թվականին Քեոթահիա (Թուրքիա) քաղաքում: 1923 թվականին, Իզմիրի գաղթի ժամանակ, հաստատվում է Ֆրանսիայի Վիեն քաղաքում և 1948 թ. Դեսինի Ս. Աստվածածին եկեղեցում ձեռնադրվում քահանա՝ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Արտավազդ արքեպ. Սյուրմեյանի կողմից:

1948—1975 թվականներին նվիրումով ծառայում է Լիոնի և նրա շրջակայքի հայության, որպես հոգևոր հովիվ: 1975 թվականից հանգուցյալը կոչվում է հանգստյան:

Հունիսի 7-ին, շաբաթ օրը, Լիոնի հայոց Ս. Հակոբ եկեղեցում կատարվում է հանգուցյալի վերջին օծման կարգը՝ նախագահությամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, որը մի հուզիչ դամբանական է խոսում՝ նշելով հանգուցյալի արժանիքներն ու ծառայությունները իր ժողովրդին, «պարկեշտ քահանա մը, որ գիտցած է ծառայել խղճմտորեն իր Աստծուն, Եկեղեցիին և ժողովուրդին»:

Հանգուցյալի աճյունը ամփոփվում է Քյուսեի նոր գերեզմանատանը:

Հանգիստ Տ. Թորգոմ քահանայի ոսկորներին:

Տերը լուսավորի հանգուցյալի բարի հոգին:

ՄԱՀ
Տ. ՍԱՀԱԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ
(1884—1980)

Հունիսի 25-ին, խոր ծերության հասակում, Ախալցխա քաղաքում վախճանվեց Տ. Սահակ ավագ քահանա Ղազարյանը:

Տ. Սահակ ավագ քահանա Ղազարյանը ծնվել է 1884 թ. Ախալքալաքի շրջանի Բուղաշեն գյուղում, գյուղացու ընտանիքում:

Սկզբնական կրթությունը ստացել է Բալարեթ գյուղի ծխական դպրոցում:

1907—1914 թթ. հանգուցյալը ծառայել է Քութաիսիի Ս. Գևորգ եկեղեցում, որպես տիրացու:

1922 թ. մեկնել է Թբիլիսի և ծառայել որպես տիրացու Հավլաբարի «Կարմիր Ավետարան» եկեղեցում: Նույն թվականին Վրաստանի թեմական առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Չորեքճյանը Երևման Ս. Խաչի տոնին Տ. Սահակին ձեռնադրում է քահանա, Բալարեթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում ծառայելու համար:

1946 թ. նա նշանակվել է Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, իբրև հոգևոր հովիվ:

1956 թ., Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վարդան եպս. Տեր-Սահակյանի միջնորդությամբ, Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը հմր. 53 սրբատառ կոնդակով պարգևատրել է Տ. Սահակ քահանային ավագության աստիճանով և քահանայական լանջախաչով՝ նրա երկարամյա հոգևոր ծառայության համար:

1957—1971 թթ. Տ. Սահակը ծառայել է Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցում:

1971 թվականին Տ. Սահակ ավագ քահանան անցնում է կենսաթոշակի:

Վրաստանի թեմական առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցում, հունիսի 29-ին, կիրակի օրը, մատուցում է ս. պատարագ և կատարում հանգուցյալի վերջին օծման կարգը, ապա խոսում դամբանական:

Ժամը 15-ին թափորը եկեղեցուց շարժվում է դեպի գերեզմանատուն, ուր կատարվում է թաղման կարգը:

Թաղումից հետո նույն գերեզմանատան մեջ առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոսը հոգևոր դասի մասնակցությամբ կատարում է հոգեհանգիստ՝ կարնեցի Տ. Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու (1779—1856, նախկին առաջնորդ Վրաստանի և Իմերեթի) գերեզմանի վրա:

Տ. Սահակ ավագ քահանա Ղազարյանը աննահանջ նվիրվածությամբ ծառայել է Եկեղեցուն, հայրենիքին և ժողովրդին՝ իբրև հավատավոր, օրինապահ և լավատես հոգևորական:

«Հանգուսցէ Տէր զհոգի բազմամեայ պաշտօնէի իւրոյ ի լոյս երեսաց իւրոց»:

«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЕЖЕМЕСЯЧНЫЙ ЖУРНАЛ ПАТРИАРШЕСКОГО ПРЕСТОЛА СВ. ЭЧМИАДЗИНА (ИЮНЬ—ИЮЛЬ 1980 Г.)

1. В данном номере журнала опубликована энциклика Его Святейшества Католикоса Вазгена Первого о награждении Степана Тер-Айвазяна (США) орденом «св. Григорий Просветитель» Первой Степени, за его вклад в дело процветания св. Эчмиадзина (стр. 3—4).

2. 8-го июня, в воскресенье, в Кафедральном соборе, Его Святейшество, Верховный Патриарх Вазген Первый совершил рукоположение в священники четырех диаконов, выпускников духовной академии за 1979 год.

   В напечатанной в журнале информации говорится также о торжествах в Первопрестоле приуроченных к этому событию (стр. 5—13).

3. 13-го июня в духовной академии, под председательством Верховного Патриарха проводилось торжественное собрание по случаю окончания учебного года. Здесь был также выслушан годичный доклад ректора академии. (14—18).

4. В настоящем номере журнала под рубрикой «Церковный алтарь, известия» представлена информация о проведенных в Кафедральном соборе священных литургиях, прочитанных проповедях, служениях, а также о еженедельных собраниях членов конгрегации в Патриарших покоях. (19—21).

5. В номере помещено также обозрение о пастырском визите Армянского Патриарха Иерусалима Егише Тертеряна, состоявшемся с 7 по 16 мая сего года в армянских общинах Румынии и Болгарии. Визит совершился по приглашению предводителя данных епархий архиепископа Тирайра Мартикяна. Сообщается также о церковных торжествах и встречах с Патриархом Румынии Жустином и Патриархом Болгарии Максимом, об имевших место экуменических беседах (стр. 22—25).

6. Архиепископ Сион Манукян в настоящем номере выступил с речью-проповедью по теме «Претворящая сила молитвы». (26—32).

7. Исследование архиепископа Шаге Аджемяна «Св. литургия как свидетельство Божего царства и ее райская опытность» помещена в нынешнем номере журнала. Архиепископ Аджемян в период от 12 по 25 мая сего года в Мельбурне участвовал в работах сессии комиссии «Апостольство и Евангеличество» Всемирного Совета Церквей в качестве главы делегации Первопрестола и исходя из сего обстоятельства прочел вышеупомянутую работу (стр. 33—35).

8. Стихотворение Вачагана Оганесяна «К св. Нарекаци» посвящено великому архимандриту Армянской церкви X века Григору Нарекаци (стр. 36).

9. В номере напечатана краткая биография празднуемых святых Армянской церкви (стр. 37—42).

10. Следующие два материала периодики посвящены 78-ому годичному собранию епархиальных посланников и духовенства Армянской епархии Востока США (стр. 43—45).

11. Студент второго курса духовной академии Вардан Багдасарян представил информацию о паломничестве студентов академии к монастырям и историческим памятникам Севера Армении (Лмбатский, Арича, Одзуна, Ахпата, Санаина и другие) совершавшиеся с 16 по 20 июня (стр. 46—51).

12. С января 1980 года Армянской епархией Запада США (центр Лос-Анджелос) издается официальный орган епархии «Родная церковь». Об этом говорится в аннотации напечатанной в журнале на странице 52.

13. Следующая статья ежемесячника посвящена сессии в Мельбурне, созванная с 12 по 15 мая 1980 года комиссией «Апостольство и Евангеличество» ВСЦ. На сессии присутствовала делегация Первопрестола в составе архиепископа Шаге Аджемяна (глава делегации), архиепископа Гарегина Газанчяна (епархиальный начальник Австралийской и Новозеландской епархии армян), верховного архимандрита Агана Бальеозяна (заместитель епархиального начальника) и члена конгрегации Первопрестола архимандрита Анания Арабаджяна (стр. 53—56).

14. С 12 по 14 мая сего года в Будапеште состоялся международный семинар Христианской Конференции Мира по инициативе Экуменического Совета Церквей Венгрии. В работах семинара от Армянской Апостольской Церкви участвовал член Верховно-Духовного Совета св. Эчмиадзина и председатель специальной комиссии Христянской Конференции Мира по Ближнему и Среднему Востоку доцент Оганес Топузян (стр. 57).

15. Завершается журнал некрологами по случаю кончины священника Торгома Постекяна и протоиерея Саака Казаряна (стр. 58—59).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JUNE–JULY 1980)

1. In this number of the journal it is published the encyclical of His Holiness the Catholicos Vasken I, on the occasion of granting the decoration of the first class of St. Gregory the Illuminator to Stepan Der Aivazian (U.S.A.), for the donation he has made in favor of Holy See of Etchmiadzin (pages 3—4).

2. Sunday, on the 8-th of June, His Holiness has made the sacerdotal ordination in the Cathedral of Holy Etchmiadzin of the four deacons graduated in 1979 of the Theological Academy.

The article published in the journal describes about the ceremonies which have taken place in the Holy See (pages 5- 13).

3. Under the presidency of His Holiness, on the 13-th of June, in the Theological Academy, took place the last ceremony of the 1979—80 scholastic year, during which it has been read also the annual report of the director.

4. In the same of the journal, under the title „Church pulpit and news" are given the Divine Liturgies celebrated and sermons spoken, the meetings of the brotherhood held in the Patriarchal Residency during the month of June.

5. In this number of the journal it is published also the description of the visit done during the days of 7—16-th May by Hts Beatitude Yeghishe, the Armenian Patriarch of Jerusalem, to the Armenian communities of Roumania and Bulgaria, by the invitation of Archbishop Tirayr Mardikian, the prelate of these two dioceses. There are published also the church ceremonies, the meetings with the Patriarchs of Roumania Justine and of Bulgaria Maxime and on this occasion the conversations made tn the spirit of ecumenism (pages 22—25).

6. Archbishop Sion Manoukian has published in this journal a sermon with the title „The animating power of the prayer".

7. The study of Archbishop Shahe Adjemian „The sermon: the testimony of God's kingdom and the experience of his paradise" is published in this number of the journal.

From 12 to 25 May Archbishop Shahe has participated to the works of the committee „Mission and evangelism" of World Council of Churches at Melbourne as the president of Holy See's delegation and in this quality he has read this study (pages 33—35).

8. The poetry of Vachakan Hovhannisian „To Saint Narekatzi" is dedicated to the famous Father Gregory Narekatzi of the Armenian Church in the XI century.

9. In this number of the journal is published „The brief biographies of Saints comemorated by the Armenian Church" (pages 37—42).

10. The following two materials of the journal are devoted to the 78-th annual assembly of the diocesan delegates and clergymen of the Armenians of the eastern diocesee of the United States of America (pages 43—45).

11. The second class student of the Theological Academy Vardan Baghdasarian describes the pilgrimage of the Academy's students to the monasteries of Lempat, Haridj, Odzoun, Haghpat, Sanahin and the other monasteries of Northern Armenia and the historical monuments, which is made during the days of 16—20-th of June.

12. Beginning from January 1980 in the western diocese of the Armenians of U.S.A., in Los Angeles, is published an official journal of the prelacy by the name of „Mother Church". It is about this that speaks the annotation published in the journal (page 52).

13. The following material of the journal is devoted to the assembly of the „Mission and evangelism" committee of the World Council of Churches held in the days of 12–25-th May 1980 at Melbourne, to which has participated also the delegation of the Holy See, under the leadership of Archbishop Shahe. In the delegation were Archbishop Garegin Kazandjian, the prelate of the Armenians of Australia and New Zealand; supreme archimandrite Aghan Baliozian, vicar of the prelacy, and archimandrite Anania Arabadjian, member of Holy See's brotherhood (pages 53—56).

14. During the days of 12—14-th May has taken place in Budapest an international consultation by the invitation of the Ecumenic Council of the Churches of Hungary.

On behalf of the Armenian Church was participating to this consultation Mr. Hovhannes Topouzian, member of the Supreme Spiritual Council and president of the Special Committee of Near and Middle East of the Christian Peace Conference (page 57).

15. The last materials of the journal are two obituaries; about priest Torgom Postekian and archpriest Sahak Ghazarian on the occasion of their death (pages 58—59).

"ETCHMIADZINE" ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE (JUIN—JUILLET 1980)

1. Dans ce numéro est publié l'encyclique de Sa Sainteté Catholicos Vasken I à Stépan Der Aivazian (E. U. A.) à l'occasion de la réception de décoration du premier ordre de St. Grégoire l'Illuminateur, pour la donation qu'il a fait au profit du Saint-Siège d'Etchmiadzine (pages 3—4)

2. Dimanche le 8 juin Sa Sainteté a fait la consécration de prêtre aux quatre diacres, diplômés du Séminaire d'Etchmiadzine du 1979.

L'article publié dans la revue parle à propos des cérémonies qui sont tenues à cette occasion au Saint—Siège (pages 5—13).

3. Sous la présidence de Sa Sainteté, au 13 juin, dans le Séminaire spirituel, s'est tenu la dernière cérémonie de l'année scolaire 1979—80, pendant laquelle est lu aussi le contre—rendu annuel du rectorat.

4. Dans ce numéro du mensuel sont donnés des brèves nouvelles de la vie du Saint—Siège, les messes et les sermons de la Cathédrale, les meetings de la congrégation.

5. Dans ce numéro est publié la description de la visite pastorale donnée aux communautés Arméniennes de Roumanie et de Bulgarie du 7 au 16 mai par Sa Béatitude Yéghiché, Patriarche Arménien de Jérusalem, par l'invitation de l'archevêque Tirayr Martikian, prélat des diocéses Arméniens de ces deux pays. Sont publiés aussi les cérémonies ecclésiastiques, les rencontres avec les Patriarches Justine de Roumanie et Maxime de Bulgarie et à cette occasion les pourparlers qui ont eu lieu dans l'esprit oecuménique (pages 22—25).

6. L'archevêque Sion a publié dans ce numéro un sermon avec le titre "La force vivifiante de la prière".

7. L'étude de l'archevêque Chahé Adjemian "Le sermon: témoignage de royaume du Dieu et l'expérience de son paradis" est publié dans ce numéro.

Du 12 au 25 mai Mgr. Chahé a participé aux travaux du comité "Mission et évangélisation" du Conseil Oecuménique des Eglises à Melbourne, comme président de la délégation du Saint—Siège et en cette qualité il a lu cette étude (pages 33—35).

8. La poésie de Vatchakan Hovhannisian "A St. Narekatzi" est consacrée au fameux archimandrite Grigor Narekatzi de l' Eglise Arménienne du XI siècle.

9. Dans ce numéro de la revue est publié "Les brefs biographies des saints de l'Eglise Arménienne" (pages 37—42).

10. Les deux suivant matériels de la revue sont consacrés au 78-e assemblées des délégués diocésains et spirituels des Arméniens de la diocèse orientale des Etats Unies d'Amérique (pages 43—45).

11. L'étudiant de la deuxième classe du séminaire d'Etchmiadzine Vardan Baghdasarian présente le pèlerinage des étudiants du séminaire qui a été fait du 16 au 20 juin vers Lempat, Haridj, Odzoun, Haghpat, Sanahine et les autres monastères de l'Arménie du Nord et les monuments historiques (pages 46—51),

12. Depuis le mois de janvier 1980 est publié à Los Angeles "Mère Eglise", l'organe officiel de la prélature Arménienne de la diocèse occidentale des E. U. d'Amérique. C'est à ce propos qui parle l'annotation publiée dans la revue (page 52).

13. Le materiel suivant de la revue est consacré à l'assemblée du comité "Mission et évangélisation" du Conseil Oecuménique des Eglises de Melbourne, à qui est participé aussi la délégation du Saint—Siège sous la présidence de l'archevêque Chahé. Dans la délégation se trouvaient l'archevêque Garégine Kazandjian, prélat des Arméniens d'Australie et de la Nouvelle—Zélande: l'archimandrite suprême Aghan Baliozian, vicaire de la prélature et l'Archimandrite Anania Arabadjian, membre de la congrégation du Saint—Siège (pages 53—56).

14. Du 12 au 14 mai de cette année s'est tenue à Budapest un séminaire international de la Conférence Chrétienne pour la Paix, par l'invitation du Conseil Oecuménique des Eglises de Hongrie.

Au nom de l'Eglise Arménienne participait aux travaux du séminaire Mr. Hovhannes Topouzian, membre du Conseil Suprême Spirituel et président du Comité Spécial du Proche et Moyen Orient de la Conférence Chrétienne pour la Paix (page 57).

15. Le dernier matériel de la revue sont deux nécrologues: du prêtre Torgom Postekian et archiprêtre Sahak Ghazarian, à l'occasion de leur mort (pages 58—59).





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի կոնդակը Ստեփան Տեր-Այվազյանին (ԱՄՆ) «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին 3
Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում 5
Տ. Հովնան աբեղա Տերտերյան, տ. Աբել աբեղա Օղլուգյան, տ. Զատիկ աբեղա Ավետիքյան, տ. Պետրոս քահանա Մալյան 10
Ամավերջի հանդես հոգևոր ճեմարանում 14
Եկեղեցական բեմ. լուրեր 19
Երուսաղեմի Հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի այցելությունը Ռումինիայի և Բուլղարիայի հայ համայնքներին 22
ՍԻՈՆ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—Աղոթքի կենսագործող զորությունը . . 26
ՇԱՀԵ ԱՐՔԵՊՍ. ԱՇԵՄՅԱՆ—Ս. պատարագը՝ Վկայություն Աստուծո թագավորության և անոր արքայության փորձառությունը 33
ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Սուրբ Նարեկացուն 36
Հայ եկեղեցու տոնեցի սրբերի համառոտ կենսագրությունը 37
ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի 78-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի գումարումը 43
ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի հոգևորականաց համագումարը 45
ՎԱՐԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Ուխտագնացություն դեպի Լմբատա, Հառիճա, Օձունի, Հաղպատի, Սանահնի և հյուսիսային Հայաստանի այլ նշանավոր վանքերն ու հուշարձանները 46
Եկեղեցական նոր ամսագիր 52
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Առաքելություն և Ավետարանչություն» համաժողովի ընտաշրջանի գումարումը Մելբուռն քաղաքում . . . 53
Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի միջազգային սեմինարը Բուդապեշտում 57
Մահ տ. Թորգոմ քահանա Փոսթեքյանի 58
Մահ տ. Սահակ ավագ քահանա Ղազարյանի 59
«Эчмиадзин» официальный журнал Святого Эчмиадзинского Первопрестола . 60
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 61
„Etchmiadzine" organe official du Saint Siege d'Echmiadzine 62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 17.07.1980 թ.: Ստորագրված է տպագրության 1.09.1980 թ.:
Տպագրական 4 մամուլ + 5 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 719:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան. 1980 թ.